

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1-2(55-56)
2012 թ.

Գլխավոր խմբագիր՝
ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան
Խմբագրական խորհուրդ

Սամվել Դիլբանդյան -

ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ

Դավիթ Մելքոնյան -

ի.գ.թ., պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Գագիկ Համբարձումյան

Արթուր Վաղարշյան - ի.գ.թ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.թ.

Վիգեն Քոչարյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 55-77-92

*Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ*

*չլինելով հեղինակների
տեսակետներին:*

*10 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:*

e-mail: a_petrosyan@ysu.am

Դասիչ՝ 77771

Տպագրական 7 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

18.05.2012

Հանձնված է տպագրության

6.06.2012

СОЮЗ ЮРИСТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**ГОСУДАРСТВО
И
ПРАВО**

Номер 1-2 (55-56)
2012 г.

Главный редактор:
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА

Редакционный совет

Самвел Дилбандян -

д.ю.н., зам. главного редактора

Давид Мелконян -

к.ю.н., ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Гагик Амбарцумян

Артур Вагаршян - к.ю.н.

Сергей Аракелян - к.ю.н.

Виген Кочарян - к.ю.н.

Адрес редакции:

РА, 0025 Ереван,

ул. Алека Манукяна 1,

юридический факультет ЕГУ.

Тел.: 55-77-92

e-mail: a_petrosyan@ysu.am

8 усл. печ. л.

Тираж: 500

Сдано в набор 18.05.2012

Подписано к печати 6.06.2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՅԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գրիգոր Բեքմեդյան, Լիպարիտ Դրմեյան

ՖՐԱՆԶԱՅԶԻՆԳԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 4

Լիպարիտ Մելիքջանյան

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ19

Լիլիթ Քամայան

ԱՎՏՈՍՈՒԲԻԼԱՅԻՆ ԲԵՌՆԱՓՈՒՆԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....25

Евгения Никогосян

ВОЗЗРЕНИЯ ПРЕДСТАВИТЕЛЕЙ КЛАССИЧЕСКОЙ ЕВРОПЕЙСКОЙ ФИЛОСОФИИ НА ЮРИДИЧЕСКУЮ ПРИРОДУ АВТОРСКОГО ПРАВА.....39

Մանե Կարապետյան

ՄԻԳՐԱՆՏ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՀԻՄՔԸ.....46

ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գևորգ Դանիելյան

ԿՈԱԼԻՑԻՈՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (իրավական ասպեկտներ).....52

Մարինե Սարգսյան

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՁՉՈՒԹՅՈՒՆԸ՝ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐ ԳՐԱՎԱԿԱՆ.....65

Սահակ Մանուկյան

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ.....71

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Варе Геворкян

К ВОПРОСУ О МЕТОДОЛОГИИ ИЗУЧЕНИЯ ГОСУДАРСТВЕННОСТИ.....81

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Աննա Վարդապետյան

ՄԱՐԴՈՒՆ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՄԱՎԱԾՔՆԵՐ ՓՈՒՆՊԱՏՎԱՍՏԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՍՈՒԲՅԵԿՏԸ.....86

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գևորգ Բաղդասարյան

ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱՑՎԱԾ ԿԱՐԳԸ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.....94

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Անահիտ Եսայան

ՈՉ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ԶԻՆՎԱԾ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ101

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**ՖՐԱՆՉԱՅՁԻՆԳԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
ՂԱՂԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԴՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Գրիգոր ԲԵՔՄԵՁՅԱՆ

*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի
ամբիոնի դասախոս, դոցենտ,
իրավ. գիտ. թեկնածու*

Լիպարիտ ԴՐՄԵՅԱՆ

*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի
ամբիոնի ասպիրանտ*

Իրավաբանական գրականությունում
ֆրանչայզինգի պայմանագրի դա-
դարման հիմքերը դասակարգվում են
տարբեր չափանիշներից ելնելով: Այսպես՝
պայմանագրի դադարման հիմքերը բա-
ժանվում են երկու խմբի: Դրանցից առաջի-
նում խմբավորվում են նրանք, որոնք կապ-
ված են պայմանագրի կողմերի իրավա-
սուբյեկտության հետ, իսկ երկրորդում
մտնում են պայմանագրի առարկայում նե-
րառվող բացառիկ իրավունքների կարգա-
վիճակին առնչվող հիմքերը: Առաջին
խմբում ընդգրկվում են կողմերի սնանկու-
թյան, լուծարման, իսկ եթե խոսքը անհատ
ձեռնարկատիրոջ մասին է, ապա անհատ
ձեռնարկատիրոջ կարգավիճակի դադա-
րեցման, մահվան, ժառանգների մոտ ան-
հատ ձեռնարկատիրոջ կարգավիճակի բա-
ցակայության դեպքերը:

Երկրորդ խումբ հիմքերում ներառվում
են բոլոր այն դեպքերը, երբ պայմանագրի
առարկան կազմող մտավոր սեփականու-
թյան օբյեկտների նկատմամբ դադարում են
իրավատիրոջ իրավունքները¹:

Կարծում ենք, որ պայմանագրի դադար-
ման հիմքերին անդրադառնալիս դրանք
դասկարգելը կամ խմբավորելը գերազան-
ցապես ունի մեթոդոլոգիական նշանա-

կություն և նպաստում է այդ հիմքերի առա-
ջացումը պայմանավորող հանգամանքնե-
րի, դրանց հատկանիշների ուսումնասիր-
մանը: Պայմանագրի դադարման հիմքերի
խմբավորման մեր կողմից առաջարկվող
տարբերակում հիմք է ընդունվում դրանց
պոզիտիվիրավական ամրագրման պար-
տադիրության աստիճանը (իմպերատիվ
կամ դիսպոզիտիվ): Նման մոտեցման հա-
մար որպես էմպիրիկ հիմք է ծառայում գոր-
ծող օրենսդրությունը: Մասնավորապես,
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի² 979-982-
րդ հոդվածների բովանդակությունից
հստակ կարելի է տարանջատել և առանձ-
նացնել այն հատվածները, որոնցում իմ-
պերատիվ ձևով ամրագրված են պայմա-
նագրային պարտավորությունների դա-
դարման հիմքերը, ինչպես նաև նրանք, ո-
րոնցում ներառված դրույթներն ունեն դիս-
պոզիտիվ բնույթ:

Այդ հոդվածներում ամրագրված դրույթ-
ների վերլուծությունից կարելի է հանգել
հետևության, որ պայմանագրի դադարման
հիմքերը կարելի է բաժանել երկու խմբի: Ա-
ռաջին խումբ հիմքերը իմպերատիվ բնույթ
ունեն, և նման իրավաբանական փաստերի
վրա հասնելը պայմանագրային պարտա-
վորությունների դադարեցման անվերա-
պահ հիմք է: Երկրորդ խմբում ներառվում
են այն հիմքերը, որոնք կարող են նախա-
տեսել կամ փոփոխել կողմերը: Որպես կա-
նոն այդ հիմքերը հոդվածների ձևակեր-
պումներում տեղ են գտնում որպես այ-
լընտրանք արդեն իսկ նախատեսված դա-
դարման հիմքերին:

Բացի այն, որ ՔՕ-ում ֆրանչայզինգը
կանոնակարգող գլխում տեղ են գտել պայ-
մանագրի դադարեցման վերաբերյալ հա-
տուկ կանոններ. ֆրանչայզինգի պայմա-

նագրի դադարեցման համար կիրառելի են պայմանագրի լուծման³, ինչպես նաև պարտավորությունների դադարման⁴ վերաբերյալ ՔՕ-ով նախատեսված ընդհանուր դրույթները: Ուստի ստորև զուգահեռաբար կանդրադառնանք նաև այդ դրույթներին:

Օրենսդիրը որպես ֆրանչայզինգի պայմանագրային պարտավորության դադարման առաջին հիմք նշում է պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտը: Կախված այն բանից, թե ժամկետի հարցում ինչպիսի մոտեցում են ցուցաբերել կողմերը, նախատեսվում է պայմանագիրը լուծելու միջոցով պարտավորությունը դադարեցնելու տարբեր եղանակներ: Ֆրանչայզինգի պայմանագիրը գործում է այն ժամանակահատվածում, որը նախատեսված է պայմանագրով: Ֆրանչայզինգային հարաբերությունները որպես կանոն ենթադրում են երկարաժամկետ համագործակցություն, ինչը թելադրված է պայմանագրի կնքման նպատակով: Այդուհանդերձ, քիչ չեն դեպքերը, երբ կողմերը չեն նախատեսում համագործակցության ժամկետային սահմանափակում⁵: Որոշակի ժամկետով կնքված պայմանագիրը կարող է դադարել ոչ միայն այդ ժամկետի ավարտմամբ, այլև մինչև ժամկետի լրանալը՝ կողմերի կողմից այն լուծելու հիմքով: Հնարավոր է, որ որոշակի ժամկետով կնքված պայմանագիրը լուծելու պահանջով հանդես գա կողմերից միայն մեկը: Այս դեպքում էլ գործում են ՔՕ 30-րդ գլխով նախատեսված կանոնները: Որպեսզի միակողմանի լուծվի պայմանագիրը, անհրաժեշտ է՝ մյուս կողմը թույլ տված լինի պայմանագրի էական խախտում: Ընդհանուր ձևակերպմամբ էական է համարվում այն խախտումը, որ հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալելու պայմանագիրը կնքելիս: Նշվում է, որ պայմանագրի խախտման էական լինելը նախ և առաջ պետք է գնահատել տնտեսական չափորոշիչով⁶: Կողմը, որը հայտարարել է պայմանագիրը միակողմանի լուծելու

մասին, պետք է ապացուցի, որ խախտման արդյունքում կրել է վնասներ կամ կունենա այդպիսիք, եթե շարունակի պայմանագրային հարաբերությունները: Ցանկացած խախտում չէ, անշուշտ, որ կարող է հիմք հանդիսանալ ֆրանչայզինգի պայմանագիրը լուծելու համար: Մեր համոզմամբ ցանկացած խախտում, անկախ նրանից՝ վերաբերո՞ւմ է պայմանագրի էական պայմանին, թե՞ ոչ, կոնկրետ պայմաններում կարող է գնահատվել որպես պայմանագրի էական խախտում: Օրինակ՝ պայմանագրով հասանելիք ռոյալթիների հերթական ամսական վճարումը չկատարելը կարող է չգնահատվել որպես պայմանագրի էական խախտում: Սակայն երկու և ավելի ամիս անընդմեջ վճարում չկատարելը կարելի է գնահատել որպես պայմանագրի էական խախտում, քանզի օգտագործողի կողմից հարաբերականորեն կայուն հակաիրավական վարքագիծ է ցուցաբերվում (խախտվում է պայմանագրի համապատասխան դրույթը), ինչը իրավատիրոջը զրկում է եկամուտներից, որը նա ակնկալում էր պայմանագիրը կնքելիս: Նմանատիպ մոտեցում կարելի է ցուցաբերել պայմանագրի մյուս պայմանների հետ կապված խախտումներ թույլ տալը գնահատելիս:

Եթե պայմանագիրը կնքվել է առանց ժամկետի նշելու, ապա այն գործում է մինչև օրենքով սահմանված կարգով դադարեցնելը: Մասնավորապես, կողմերից յուրաքանչյուրը կարող է միակողմանի պահանջով դադարեցնել առանց ժամկետի նշման կնքված պայմանագիրը՝ այդ մասին մյուս կողմին վեց ամիս առաջ ծանուցելով, եթե ավելի երկար ժամկետ նախատեսված չէ պայմանագրով⁷: Կան երկրներ, որտեղ պայմանագրի միակողմանի դադարեցման համար սահմանված է ավելի կարճ ժամկետ: Այսպես՝ Մեծ Բրիտանիայում և Ֆրանսիայում գործում է ծանուցման երեսուօրյա ժամկետ⁸: Պրակտիկան ցույց է տալիս, որ պայմանագրերում նշվում են հնարավոր այն դեպքերը, որոնց առկայության դեպքում կողմերը կարող են լուծել պայմանա-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

գիրը: Շատ հաճախ չի պահպանվում համասանությունը, և պայմանագիրը լուծելու հարցում իրավատիրոջ իրավունքները շատ ավելին են լինում, քան օգտագործողին⁹: Ընդ որում՝ խախտում թույլ տված կողմին կարող է տրվել հնարավորություն վերացնելու այն պայմանագրով սահմանված ժամկետում:

Անհրաժեշտ է տարբերակել պայմանագրի միակողմ լուծումը և պայմանագրից կամ դրա կատարումից միակողմանի հրաժարվելը: ՔՕ 979-րդ հոդվածի 1-ին մասում խոսքը հենց պայմանագրից 466-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված ընդհանուր կանոնի միակողմանի հրաժարվելու մասին է: Այս հատուկ դրույթը ՔՕ 466-րդ հոդվածի 3-րդ մասի ամրագրված դրույթի մասնավոր դրսևորումն է: Միակողմանի հրաժարման դեպքում բավարար է պայմանագրի կատարումից հրաժարվելու մասին սահմանված ժամկետում մյուս կողմին ծանուցելը: Իրավական հետևանքի առումով պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարումը հավասարվում է պայմանագիրը լուծելուն. արդյունքում դադարում է պայմանագիրը:

Պայմանագրի լուծումը ենթակա է գրանցման ՔՕ 970-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված կարգով: Այս դեպքում ևս խնդիր է առաջանում՝ կապված մտավոր սեփականության օբյեկտների հետ: Մասնավորապես, երբ օգտագործման են տրամադրվում ապրանքային նշանը, արտոնագրային իրավունքի օբյեկտը, ինչպես նաև լիցենզային պայմանագրով փոխանցման ենթակա մտավոր սեփականության այլ օբյեկտ, ապա պայմանագիրը ենթակա է գրանցման գործակալությունում: Մինչդեռ որևէ իրավական ակտով ամրագրված չէ, որ վերը նշված օբյեկտների նկատմամբ կնքված զիջման կամ լիցենզային պայմանագրի լուծումը ենթակա է գրանցման գործակալությունում: Հետևաբար

ստացվում է, որ այն դեպքում, երբ լուծվում է ֆրանչայզինգի պայմանագիրը, որով օգտագործման է տրամադրվել հիշատակված օբյեկտներից որևէ մեկը, պարտադիր չէ պայմանագրի լուծումը գրանցել գործակալությունում¹⁰: Ասվածին հավելենք նաև, որ այս դեպքում ևս որևէ իրավական ակտով սահմանված չէ, թե ինչ ժամկետում պետք է գրանցվի պայմանագրի լուծումը: Ուստի կարծում ենք, որ այս բացը վերացնելու լավագույն լուծում կարող է հանդիսանալ այն, որ օրենսդրորեն ամրագրվի ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների օգտագործման տրամադրման պայմանագրերի լուծման գրանցման պարտադիր լինելը, ինչպես նաև այն ժամկետը, որի ընթացքում պետք է իրականացվի այդ գրանցումը: Կարծում ենք, որ պայմանագրի լուծումը գրանցելու ժամկետը կարող է հավասար լինել այն նույն ժամկետին, որն անհրաժեշտ է կնքված պայմանագիրը գրանցելու համար¹¹:

ՔՕ-ում ամրագրված դրույթներից հետևում է, որ գրանցման է ենթակա միայն պայմանագրի լուծումը: Պայմանագրի գրանցումը նպատակ ունի տեղեկացնելու երրորդ անձանց իրավատիրոջը և վերջինիս ապրանքները, ծառայությունները և արտադրանքը անհատականացնող միջոցների՝ երրորդ անձանց տրամադրված լինելու մասին:

Պայմանագրի լուծումը գրանցելու հարցում միանշանակ մոտեցում չի ցուցաբերվում: Այսպես՝ արտահայտվում է տեսակետը, ըստ որի՝ պայմանագրի դադարումը ևս պետք է գրանցվի¹² ՔՕ 970-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված կարգով: Եթե պայմանագրի գրանցումը նպատակ է հետապնդում սպառողներին տեղեկացնել պայմանագրով նախատեսված համապատասխան սահմանափակումների, օգտագործողին տրված իրավունքների մասին, ապա գտնում ենք, որ պայմանագրի դադարեցումը՝ որպես այդ սահմանափակումների և իրավունքների վերացման փաստ, ևս պետք է հայտնի դառնա սպառողներին:

Բացի այդ, եթե պայմանագիրը, դրա լուծումը, փոփոխումը ենթակա են գրանցման համապատասխան մարմիններում, ապա պայմանագրի դադարումը նույնպես պետք է ենթակա լինի գրանցման:

Իրավաբանական գրականությունում նշվում է նաև, որ պայմանագրի լուծմամբ դադարում են պայմանագրային պարտավորությունները, և հետևաբար անհրաժեշտություն չկա գրանցելու պայմանագրի լուծումը: Նշվում է, որ առավել նպատակահարմար կլինի պայմանագրի լուծման գրանցումը վերաձևակերպել այնպես, որ անհրաժեշտ լինի վերացնել արդեն իսկ գրանցված պայմանագրի մասին կատարված գրառումը համապատասխան մարմնում¹³: Համաձայնելով նման կարծիքի հետ՝ գտնում ենք, որ պայմանագրի դադարման մասին կանոնը չպետք է ունենա բացառություն՝ կախված պայմանագրի դադարեցման հիմքերից: Հատկանշական է, որ օրենսդիրը պայմանագրի դադարման եղանակներից պարտադիր է համարում բացառապես պայմանագրի լուծման գրանցումը: Եթե պայմանագրի լուծումը, որը անվերապահորեն հանգեցնում է պայմանագրի լուծման, ենթակա է գրանցման գործակալությունում, ինչպես նաև իրավաբանական անձանց գրանցման համար լիազորված պետական մարմնում, ապա անհասկանալի է, թե ինչու է օրենսդիրը ցուցաբերել տարբերակված մոտեցում և պայմանագրի դադարեցման հիմքից կախված մի դեպքում պարտադիր համարել այդ փաստի գրանցումը, մյուս դեպքում՝ ոչ: Կարծում ենք, որ արդարացված չէ նման կառնանկարգումը մի քանի պատճառներով: Նախ՝ անկախ այն բանից, թե լուծման, միակողմանի հրաժարվելու, անհատ ձեռնարկատիրոջ մահվան, իրավաբանական անձի լուծարման, թե որևէ այլ հիմքով է վերանում կողմերի միջև ձեռք բերված համաձայնությունը, միևնույնն է, սրանք բոլորն էլ առաջացնում են նույն հետևանքը: Վերը նշված բոլոր իրավաբանական փաստերն էլ իրավադարեցնող

տեսակի փաստեր են: Ի վերջո դրանցից մեկի վերաբերյալ նշում կատարելը, իսկ մյուսի վերաբերյալ չկատարելը լիազորմարմնի համապատասխան բազաներում ստեղծում են մի վիճակ, երբ փաստացի հարաբերությունը գոյություն չունի, դադարել է պայմանագրային պարտականությունը՝ սակայն ֆրանշիզան կազմող օբյեկտների որպես օգտագործող սուբյեկտի կողմից իր բիզնեսում կիրառվող անհատական միջոցների և մտավոր սեփականության այլ օբյեկտների, վերաբերյալ գրանցումը շարունակում է գոյություն ունենալ: Անշուշտ, սա խոչընդոտում է նաև ճշգրիտ տեղեկատվական բազայի ձևավորմանը և նպաստում սխալ ինֆորմացիայի տրամադրմանը¹⁴: Ուստի առաջարկում ենք կատարել փոփոխություն ՔՕ 979-րդ հոդվածում, մասնավորապես ուժը կորցրած ճանաչել 2-րդ մասը և լրացնել նույն հոդվածը 4-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «Համալիր թույլտվության պայմանագրի դադարումը հիմք է սույն օրենսգրքի 970-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված կարգով կատարված գրանցումը վերացնելու համար»:

Գործող օրենսդրական կարգավորման շրջանակներում պայմանագրային պարտավորության դադարեցման գրանցման համար իրավատերը կամ օգտագործողը պետք է դիմի գործակալություն կամ իրավաբանական անձանց պետական գրանցման լիազոր մարմին: Պայմանագրի լուծումը գրանցելու հարցը կարգավորվում է ՔՕ 970-րդ հոդվածով, քանզի հղում է պարունակվում այն նույն կանոններին, որոնցով կարգավորվում է պայմանագրի գրանցման ընթացակարգը: Առաջնորդվելով այդ նույն կանոններով՝ պետք է նշել, որ գրանցումը ապահովելու պարտականությունը կրում է իրավատերը: Բացառություն է այն դեպքը, երբ իրավատերը օտարերկրյա ռեզիդենտ է: Այս դեպքում պարտականությունը կրում է օգտագործողը: Սակայն կարող է ստացվել իրավիճակ, երբ պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվում է օգ-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

տագործողը, իսկ իրավատերը օտարերկրյա իրավաբանական անձ է: Որոշ գիտնականներ նշում են, որ պրակտիկայում կարող է ստեղծվել վիճակ, երբ որպես իրավատեր հանդես եկող օտարերկրյա կազմակերպությունը միակողմանի լուծի պայմանագիրը, իսկ ռեզիդենտ օգտագործող կազմակերպությունը, որը կրում է պայմանագրի լուծումը գրանցելու պարտականություն, շարունակի օգտագործել իրավատիրոջը պատկանող բացառիկ իրավունքները: Արդյունքում գրանցման բեռը կրելու է որպես իրավատեր հանդես եկող օտարերկրյա կազմակերպությունը¹⁶: Կարծում ենք, որ պրոբլեմի նման ներկայացումը արհեստածին է և գործնական նշանակություն չունի, քանի որ իրավատերը բնավ պարտավոր չէ և ստիպված էլ չէ իր վրա վերցնելու օգտագործողի պարտականության կատարումը, քանզի զրկված չէ պարտականությունները կատարելուն պարտավորեցնելու, ներառյալ նաև կրած վնասները հատուցելու պահանջ ներակայցնելու դատարան:

Պայմանագիրը դադարելու հաջորդ անվերապահ հիմքը ֆիրմային անվանման նկատմամբ իրավատիրոջ իրավունքների դադարումն է: Այսպես՝ ՔՕ 979-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ֆրանչայզինգի պայմանագիրը դադարում է, եթե պայմանագրի գործողության ընթացքում դադարել է իրավատիրոջը պատկանող ֆիրմային անվանման նկատմամբ իրավունքը: Իրավունքների համալիրում ներառված մյուս օբյեկտների նկատմամբ իրավատիրոջ իրավունքների դադարեցումը անվերապահ հիմք չէ պայմանագիրը դադարեցնելու համար, և այս դեպքում պայմանագրի գործողությունը կարող է շարունակվել՝ բացառությամբ դադարած իրավունքին վերաբերող դրույթների:

Նշվում է, որ պայմանագրի դադարումը, հատկապես ֆիրմային անվանման նկատ-

մամբ իրավունքի դադարման դեպքում, խոսում է այդ իրավունքի՝ համալիրում ունեցած դերի մասին: Հենց նշված իրավունքն է ապահովում, որ օգտագործողը հնարավորություն ունենա հանդես գալու իրավատիրոջ անվան ներքո: Ֆիրմային անվանման առկայությամբ է պայմանավորված ֆրանչայզինգի գոյությունը: Ուրեմն այս օբյեկտի նկատմամբ իրավունքի դադարումը վերացնում է պայմանագրային պարտավորությունը¹⁶: Գործող օրենսդրությունը կանոնակրգում է ֆիրմային անվանման նկատմամբ իրավունքների դադարման հիմքերը¹⁷: Այդպիսիք են իրավաբանական անձի լուծարումը, ֆիրմային անվանման փոփոխումը¹⁸, դատական կարգով ֆիրմային անվանման գրանցումն անվավեր ճանաչելը և ֆիրմային անվանումն օգտագործելն արգելելը¹⁹: Չնայած օրենսդրական կարգավորում է ստացել ֆիրմային անվանման նկատմամբ իրավունքներ դադարեցման հարցը, այդուհանդերձ բաց է մնում որպես իրավատեր հանդես եկող անհատ ձեռնարկատիրոջ մահվան կամ կարգավիճակի դադարեցման դեպքում պայմանագրի հետագա գործողության խնդիրը: Պրակտիկորեն նման իրավիճակի վրա հասնելը կհանգեցնի պայմանագրի դադարեցման: Սակայն բացակայում է այդ հարաբերության օրենսդրական կարգավորումը²⁰:

Ֆրանչայզինգի պայմանագրի անվերապահ դադարման վերջին հիմքը իրավատիրոջը կամ օգտագործողին սնանկ ճանաչելն է: ՔՕ 979-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համալիր թույլտվության պայմանագիրը դադարում է իրավատիրոջը կամ օգտագործողին սնանկ ճանաչելու դեպքում: Պայմանագրի դադարման այս հիմքը ևս հատուկ է, քանզի չի նախատեսվում պարտավորությունների դադարման ընդհանուր հիմքերում: Քաղաքացիաիրավական կարգավորման շրջանակներում սնանկությունը հանդիսանում է իրավաբանական անձի (անհատ գործարարի գործունեության դադարեցման) լուծարման²¹

հիմքերից մեկը²²: սնանկության վարույթի շրջանակներում սնանկ ճանաչելը իրականացվում է դատարանի վճռով: Սուբյեկտը ձեռք է բերում սնանկ ճանաչվածի կարգավիճակ դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից: Հետևաբար կողմերից որևէ մեկին սնանկ ճանաչելն իսկ հանգեցնում է պայմանագրի դադարեցման²³: Այստեղ պարզ չէ՝ խոսքը ուղղակի սնանկ ճանաչվելու, թե սնանկ ճանաչվելու հետևանքով լուծարվելու կամ գործունեության դադարեցման մասին է: Համաձայն «Սնանկության մասին» ՀՀ 2006թ. օրենքի (այսուհետ՝ ՍՄՕ) 70-րդ հոդվածի՝ սնանկ ճանաչվելուց հետո իրավաբանական անձի, անհատ ձեռնարկատիրոջ կողմից օրենքով սահմանված ժամկետում ֆինանսական առողջացման ծրագիր չներկայացվելու, ներկայացված ծրագրի հաստատումը մերժվելու, ծրագիրը վաղաժամկետ դադարեցվելու, ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվության հաստատումը մերժվելու դեպքում դատարանը որոշում է կայացնում պարտապան իրավաբանական անձի լուծարման կամ պարտապան անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման վարույթ սկսելու մասին: Իսկ ֆինանսական առողջացման ծրագիր է համարվում պարտապանի վճարունակությունը վերականգնելու նպատակով նրա նկատմամբ կիրառվող, օրենքով չարգելված միջոցառումների համալիրը, որի արդյունքում պարտապանը չի լուծարվում (ՍՄՕ 59-րդ հոդված): Ֆինանսական առողջացումը կարևոր օղակ է սնանկացման գործընթացում: Եթե պարտապանի վճարունակությունը վերականգնվում է ֆինանսական առողջացման ընթացքում, և պարտատերերի պահանջները բավարարվում են, ապա դատարանն ավարտում է սնանկության վարույթը, և պարտապանը՝ որպես ինքնուրույն տնտեսավարող սուբյեկտ, շարունակում է իր բնականոն գործունեությունը քաղաքացիաիրավական շրջանառությունում²⁴: Կարծում ենք, որ օրենսդիրը, կողմերից մեկի սնանկություն ասե-

լով, նկատի ունի իրավաբանական անձի դեպքում՝ լուծարումը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ գործունեության դադարումը, ինչն էլ ճիշտ կլինի ամրագրել օրենսդրությամբ: Միայն սնանկ ճանաչելը չպետք է հիմք հանդիսանա պայմանագրի դադարման համար: Նախ՝ Հայաստանի Հանրապետությունում սնանկության հարաբերությունների իրավական կարգավորումը հնարավորություն է տալիս պարտապանին վերականգնել իր վճարունակությունը, վճարել առաջացած պարտքերը և շարունակել իր գործունեությունը²⁵, ֆինանսական առողջացման միջոցով շարունակել մնալ տնտեսական շրջանառությունում: Չնայած իրավատիրոջ կամ օգտագործողի սնանկ ճանաչվելուն վերջիններս սնանկության գործով կառավարչիցների միջոցով զրկված չեն ապրանքաշրջանառությանը մասնակցելու հնարավորությունից: Հետևաբար՝ ֆրանչայզինգային հարաբերությունը կարող է շարունակվել, իսկ ստացված եկամուտները՝ ուղղվել պարտապանների նկատմամբ պարտավորությունների կատարմանը: Բացի այդ՝ ինչպես նշվում է գրականությունում, հնարավոր է, որ սնանկ ճանաչված իրավատերը կամ օգտագործողը սնանկության վարույթի ընթացքում որպես ամբողջական միավոր (լոտ) կարող է ձեռք բերել մեկը մյուսի գույքը, այլ կերպ ասած՝ իրավատերը հետ է գնում ֆրանչիզան²⁶, իսկ օգտագործողը կարող է գնել սնանկ ճանաչված իրավատիրոջ բիզնեսը²⁷:

Վերոնշյալ բոլոր դեպքերը պայմանագրի դադարեցման անվերապահ հիմքեր էին: Դրանց առկայությունը դադարեցնում է ֆրանչայզինգային հարաբերությունների հետագա շարունակումը:

Բացի նշված հիմքերից՝ առկա են նաև այնպիսիք, որոնք հիմք են պայմանագրային հարաբերությունները դադարեցնելու համար, եթե կողմերը այլ բան չեն նախատեսել:

Հնարավոր է նաև իրավիճակ, երբ պայմանագրի գործողության ընթացքում փոխ-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

վի իրավատիրոջ ֆիրմային անվանումը: Այս հանգամանքը ևս իր արտացոլումն է ստացել ՔՕ-ում: Մասնավորապես՝ նման պարագայում պայմանագիրը գործում է իրավատիրոջ նոր ֆիրմային անվանման նկատմամբ, եթե օգտագործողը չի պահանջում պայմանագրի լուծում և վնասների հատուցում: Եթե պայմանագրի գործողությունը շարունակվի, ապա օգտագործողը իրավունք է ստանում պահանջել համաչափ նվազեցնելու իրավատիրոջը հասանելիք վարձատրությունը (ՔՕ 981-րդ հոդված): Այս հոդվածում խոսքը իրավատիրոջ նոր ֆիրմային անվանման, այլ ոչ թե նոր իրավատիրոջ ֆիրմային անվանման մասին է, ինչպես ամրագրված է հոդվածում: Յետևաբար այդ սխալը ենթակա է ուղղման: Օրենսդիրը հստակ տարանջատել է ֆիրմային անվանման նկատմամբ իրավունքների դադարման եղանակներից կախված վրա հասնող հետևանքները և ՔՕ 982-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում, հենց այդ հանգամանքից ելնելով, հղում է կատարում 979-րդ հոդվածի 3-րդ կետին (ֆիրմային անվանման իրավունքի դադարեցումը գրանցումն անվավեր ճանաչելու, սուբյեկտի լուծարման և օգտագործումը անվավեր ճանաչելու հիմքերը) և 981-րդ հոդվածին (ֆիրմային անվանման փոփոխություն):

Ինչպես վերը նշվեց, փոփոխումը ֆիրմային անվանման նկատմամբ իրավունքի դադարման եղանակներից մեկն է: Սակայն ֆիրմային անվանման նկատմամբ իրավունքի դադարման այս եղանակը որպես կանոն չի հանգեցնում պայմանագրային պարտավորությունների դադարեցմանը, քանզի ֆրանչայզինգային հարաբերությունները շարունակում են գործել այս անգամ արդեն իրավատիրոջ նոր ֆիրմային անվանման նկատմամբ: Քիչ չեն պրակտիկայում նման դեպքերը: Օրինակ՝ 2002 թվականին Tricon Global Restaurants ընկե-

րությունը, որն աշխարհում ամենամեծ ռեստորանային ցանցն ունի և տիրապետում է այնպիսի հայտնի ապրանքանիշերի, ինչպիսիք են Pizza Hut-ը, KFC-ն²⁸, Taco Bell-ը, 2002 թվականին փոխեց իր ֆիրմային անվանումը Yum! Brands-ի²⁹: Արդյունքում չդադարեցին ֆրանչայզինգային հարաբերությունները: Ֆիրմային անվանման փոփոխման դեպքում միշտ չէ, որ շարունակվում է պայմանագրային հարաբերությունը: Այնուամենայնիվ օգտագործողը կարող է հրաժարվել պայմանագրային հարաբերությունները շարունակելուց, և հետևաբար այս դեպքում իրավադադարեցնող երկու իրավաբանական փաստերի համակցության արդյունքում է դադարում հարաբերությունը: Ֆիրմային անվանման փոփոխում և հարաբերությունները դադարեցնելու օգտագործողի պահանջ: Կարևոր է ընդգծել այն, որ իրավադադարեցնող երկրորդ փաստը ակտիվ բնույթ ունի և դրսևորվում է օգտագործողի կողմից **պահանջի ներակայացմամբ**: Ֆիրմային անվանման փոփոխությունից հետո նույնիսկ համաձայնություն չտալը չի հանգեցնում պայմանագրային հարաբերությունների դադարեցման, քանզի օրենքի ուժով պայմանագիրը համարվում է փոփոխված³⁰:

Ֆրանչայզինգային հարաբերության դադարման ոչ պարտադիր հիմքերից հաջորդը պայմանագրի դադարումն է այն դեպքում, երբ դադարել է համալիրը կազմող բացառիկ իրավունքի գործողության ժամկետը, կամ այդ իրավունքը դադարել է այլ հիմքով³¹, բացառությամբ ֆիրմային անվանման նկատմամբ իրավունքի: Պետք է նշել, որ օրենսդրությամբ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ բացառիկ իրավունքի գործողության ժամկետը ուղղակիորեն կապված է այդ օբյեկտների նկատմամբ գույքային իրավունքների գործողությունից: Օրենսդրությամբ նախատեսվում են դրանց նկատմամբ ժամկետային սահմանափակումներ³²: Կախված այն հանգամանքից, թե որ բացառիկ իրավունքի գործողության ժամկետն է լրանում,

պայմանագիրը կարող է փոփոխված համարվել կամ դադարել տարբեր ժամանակահատվածներում³³: Այսպես՝ հեղինակային իրավունքի օբյեկտների նկատմամբ այդ ժամկետը սահմանափակված է 70 տարով, հարակից իրավունքների դեպքում՝ 50 տարով³⁴, գյուտի և օգտակար մոդելի դեպքում՝ համապատասխանաբար 20 և 10 տարի ժամկետով, արդյունաբերական նմուշի դեպքում՝ 5 տարով³⁵, սելեկցիոն նվաճումների համար՝ 20-30 տարով³⁶, ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիայի դեպքում՝ 10 տարով³⁷, չբացահայտված տեղեկակատվության դեպքում՝ այնքան ժամանակ, քանի դեռ այն գաղտնի է պահվում, և չկա օրինական միջոցներով այն ձեռք բերելու հնարավորություն³⁸, ապրանքային նշանի դեպքում՝ 10 տարով³⁹, աշխարհագրական նշումների, ծագման, տեղանվան և երաշխավորված ավանդական արտադրանքի դեպքում՝ անժամկետ⁴⁰: Այս դեպքում ևս պայմանագրային հարաբերության դադարումը վրա է հասնում իրավաբանական փաստերի բարդ կազմի հիման վրա: Անհրաժեշտ է, որ դադարի համալիրը կազմող բացառիկ իրավունքը⁴¹, պայմանագրով նախատեսված լինի պայմանագիրը լուծելու կամ պայմանագիրը կատարելուց միակողմանի հրաժարվելու օգտագործողի իրավունքը, և երրորդ՝ օգտագործողն օգտվի իր այդ իրավունքներից որևէ մեկից: Եթե փաստերի նման կազմը բացակայում է, ապա պայմանագիրը շարունակվում է գործել, բացառությամբ դադարած իրավունքին վերաբերող դրույթների: Ընդ որում՝ այս դեպքում ևս, ինչպես նախորդ հիմքում, օգտագործողն իրավունք ունի պահանջելու նվազեցնել պայմանագրի գինը: Այսինքն՝ բացառությամբ իրավատիրոջ՝ ֆիրմային անվանման նկատմամբ իրավունքները դադարելու դեպքից (բացի ֆիրմային անվանման փոփոխումից), մնացած դեպքերում պայմանագիրը կարող է շարունակել գործել:

Ֆրանսյազիցի գի պայմանագրի գործո-

ղությունը որոշակի փաստերի վրա հասնելու ուժով կարող է դադարել նաև այն դեպքում, երբ փոխվում են պայմանագրի կողմերը: Կախված նրանից, թե իրավաբանական ինչպիսի փաստ է նախորդել կողմերի փոփոխմանը, պայմանագիրը կարող է շարունակել պահպանել իր ուժը⁴² կամ դադարել: Օգտագործողին տրված բացառիկ իրավունքներից մեկի փոխանցումը այլ անձի հիմք չէ պայմանագիրը փոխելու կամ լուծելու համար⁴³: Նոր իրավատերը դառնում է այդ պայմանագրի կողմ փոխանցված բացառիկ իրավունքի մասով: Պրակտիկայում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ որևէ ընկերություն ձեռք է բերում այլ ֆիրմաների պատկանող մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ բացառիկ իրավունքները: Ընդ որում՝ չնայած ԲՕ 980-րդ հոդվածի 1-ին մասում խոսքը միայն առանձին բացառիկ իրավունքի՝ այլ անձի փոխանցվելու մասին է, կարծում ենք, որ պայմանագիրը կարող է շարունակել գործել նույնիսկ այն դեպքում, երբ ամբողջ ֆրանսիզայի իրավատեր է դառնում մեկ այլ կազմակերպություն⁴⁴: Այս դեպքում նոր իրավատիրոջն է փոխանցվում բացառիկ իրավունքների համալիրն ամբողջությամբ⁴⁵: Չի բացառվում նաև իրավատիրոջ կողմում մի քանի անձանց հանդես գալու հնարավորությունը:

ԲՕ 980-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է պայմանագրի դադարման հիմք իրավատիրոջ մահվան դեպքում⁴⁶: Ֆրանսյազիցի գային նման հարաբերություններում որպես իրավատեր բնականաբար հանդես է գալիս անհատ ձեռնարկատերը⁴⁷: Այս դեպքում պայմանագրի դադարումը կախվածության մեջ է դրվում ժառանգի՝ անհատ ձեռնարկատեր գրանցված լինելու հանգամանքից: Ժառանգը պետք է գրանցված լինի կամ ժառանգության բացման պահից վեց ամսվա ընթացքում գրանցվի որպես անհատ ձեռնարկատեր: Հակառակ դեպքում պայմանագիրը դադարում է: Նուտարի նշանակած կառավարիչն իրականացնում է մահացած իրավատիրոջ իրա-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

վունքները և կատարում նրա պարտականությունները մինչև ժառանգի կողմից դրանց ընդունելը կամ մինչև ժառանգի՝ որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելը: Համանման իրավիճակ կարող է ստեղծվել նաև օգտագործողի մահվան պարագայում: Արտասահմանյան պրակտիկայում եթե իրավատերը, համոզվելով, որ օգտագործողը ի գորու չէ անհրաժեշտ ձևով վարելու բիզնեսը, հետ է գնում ֆրանչիզան շուկայական գնով⁴⁶: Հետևաբար իրավատերը նույնպիսի իրավունք պետք է ունենա օգտագործողի իրավահաջորդների նկատմամբ:

Ինչպես երևում է վերոնշյալից, ֆրանչայզինգային հարաբերությունը այս դեպքում որոշակի աղետներ ունի ժառանգման ինստիտուտի հետ: Իրավաբանական գրականությունում գրեթե չի խոսվում պայմանագրի դադարման կամ փոփոխման այս հիմքերի մասին: Թեև օրենսդրական կարգավորում է ստացել պայմանագրի փոփոխման հնարավորությունը այն դեպքում, երբ իրավատերը մահանում է⁴⁷, և վերջինիս ժառանգին համարփակ իրավահաջորդության կարգով անցնում են պայմանագրային պարտավորությունները, այդուհանդերձ բազմաթիվ և տարատեսակ հարցեր են առաջանում այս հարաբերության հետ կապված: Այսպես՝ հնարավոր է, որ նույն հերթի ժառանգները մեկից ավելի են, կամ առկա է պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգ: Այս դեպքում նույն հերթի ժառանգները, եթե այլ համաձայնություն բացակայում է, կժառանգեն հավասար բաժիններով, և ֆրանչայզինգի պայմանագրից բխող պարտավորական հարաբերությունում առկա կլինի անձանց բազմաթիվություն: Իրավատիրոջ կողմում հանդես կգան մեկից ավելի անհատ ձեռնարկատերեր⁴⁸: Այս դեպքում պայմանագիրը կդադարի, եթե ժառանգներից որևէ մեկը չունենա կամ ձեռք չբերի անհատ ձեռնարկատիր-

րոջ կարգավիճակ:

Հաջորդ խնդիրը վերաբերում է ժառանգության ընդունմանը: Արդյոք այս դեպքում հնարավոր է ընդունել ժառանգությունը փաստացի տիրապետմամբ: Նշված հարցի հետ կապված կարծում ենք, որ փաստացի տիրապետումը՝ որպես ժառանգության ընդունման եղանակ, չի կարող հիմք հանդիսանալ պայմանագրի գործողությունը շարունակելու համար: Մեր նման դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ որպեսզի շարունակվի պայմանագրի գործողությունը, անհրաժեշտ է ժառանգության ընդունման փաստն ապացուցել կոնտրագենտին: Այդպիսիք կարող են լինել նոտարի կողմից տրված ժառանգության իրավունքի վկայականը կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտը: Մինչդեռ փաստացի տիրապետմամբ ժառանգության ընդունումը ենթադրում է միայն ակտիվ գործողություններ՝ ուղղված ժառանգական զանգվածում ներառված գույքի տիրապետմանը և օգտագործմանը: Ժամանակային առումով փաստացի տիրապետմամբ ժառանգության ընդունումը և ժառանգության իրավունքի վկայական տրամադրելը կարող են չհամընկնել⁴⁹:

Ինչ վերաբերում է այն խնդրին, որ ժառանգման հարաբերությունները կանոնակարգող գլխում ամրագրված դրույթները հնարավորություն են տալիս ընդունելու ժառանգությունը օրենքով սահմանված վեցամսյա ժամկետի ավարտից հետո՝ ժամկետի բացթողումը հարգելի համարելու միջոցով, ապա կարծում ենք, որ վեցամսյա ժամկետի բացթողումը պայմանագրի դադարման հիմք է: Մասնավորապես, ժառանգը կարող է գրանցված լինել որպես անհատ ձեռնարկատեր կամ ձեռք բերել այդպիսի կարգավիճակ ժառանգությունը բացվելուց վեց ամսվա ընթացքում, սակայն չընդունել ժառանգությունը: Այսինքն՝ վեց ամսում ձեռնարկատիրոջ կարգավիճակ ստանալու փաստը առկա է, սակայն առկա չէ ժառանգությունը ընդունելու

փաստը: Այս դեպքում վեցամսյա ժամկետի ավարտն ինքնին պետք է դադարեցնի պայմանագրի գործողությունը, քանզի օգտագործողը անվերջ չի կարող սպասել ժառանգության ընդունմանը, որը պրակտիկայում կարող է հաստատվել տարիներ հետո⁵²:

Վերը նշվածը ցույց է տալիս, որ անհատ ձեռնարկատեր հանդիսացող իրավատիրոջ կամ օգտագործողի համար պայմանագրային պարտավորությունների դադարումը կախված է որոշակի իրավաբանական փաստերի, մասնավորապես ժառանգության ընդունման, անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակ ունենալու կամ ձեռք բերելու հետ: Այդուհանդերձ, հնարավոր է, որ անհատ ձեռնարկատեր իրավատիրոջ կամ օգտագործողի ժառանգը ընդունի ժառանգությունը և ձեռք բերի անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակ, սակայն պայմանագրային հարաբերությունների շարունակումը մյուս կողմի համար դառնա ոչ նպատակահարմար: Խնդիրն այն է, որ անձը, հանդես գալով որպես իրավատեր, մշակում է բիզնեսը վարելու այնպիսի մոդել, որն ունակ է տեղ գրավելու շուկայում: Նշված մոդելի ստեղծումը պայմանավորված է կոնկրետ սուբյեկտի՝ բիզնես վարելու ունակությամբ և անձնային հատկանիշներով: Այս մասին անառարկելիորեն վկայում են տարբեր ֆրանչայզինգային ցանցերի վերաբերյալ կատարված մեր ուսումնասիրությունները⁵³: Ուստի օգտագործողը, հնարավոր է, չցանկանա շարունակել պայմանագրային հարաբերությունները իրավատիրոջ ժառանգի հետ, քանզի վերջինս չունի այն ունակությունները, որոնք անհրաժեշտ են ֆրանչայզինգային ցանցը պահպանելու համար: Խնդիրը նույնն է, երբ մահանում է որպես օգտագործող հանդես եկող անհատ ձեռնարկատերը: Վերը նշվածով էլ պայմանավորված՝ կարծում ենք, որ յուրաքանչյուր դեպքում կողմերն իրենք պետք է որոշեն հարաբերությունները շարունակելու նպատակահարմարու-

յունը: ՔՕ-ով նախատեսված կարգավորումը ենթադրում է բոլոր անհատ ձեռնարկատեր իրավատիրոջ մահվան դեպքում վերջինիս ժառանգների կողմից անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակ ձեռք բերելու պարագայում պայմանագրային պարտավորությունների շարունակում: Մեր կողմից վերը նշված խնդիրները առաջանալու դեպքում կողմերը կարող են լուծել պայմանագիրը ՔՕ 979-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և ՔՕ 30-րդ գլխով նախատեսված դեպքերում և կարգով: Եթե ՔՕ 979-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորման հետ կապված խնդիր չի առաջանում, ապա նույնը չի կարելի ասել նույն հոդվածի 2-րդ մասի առնչությամբ: Այսպես՝ ՔՕ 979-րդ հոդվածի 2-րդ մասը ընդամենը նախատեսում է պայմանագրի լուծման հնարավորություն: Եթե կողմերը հանգել են այն հետևության, որ առկա սուբյեկտային կազմով հնարավոր չէ կամ նպատակահարմար չէ շարունակել հարաբերությունը, ապա փոխադարձ համաձայնությամբ լուծում են պայմանագիրը: Սակայն հնարավոր է, որ կողմերից մեկը չցանկանա շարունակել պայմանագրային պարտավորությունը մյուս կողմի իրավահաջորդի հետ, թեև վերջինս ձեռք է բերել անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակ, սակայն իր ունակություններով ի գործու չէ վարելու բիզնեսը: Այս դեպքում պայմանագիրը **միակողմանի** լուծելու համար անհրաժեշտ է, որ առկա լինի կամ պայմանագրի էական խախտում կամ հանգամանքների էական փոփոխություն: Պայմանագրի էական խախտումը այս դեպքում պետք է բացառել, քանզի իրավահաջորդը ձեռք է բերում անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակ, ինչն էլ ապահովում է օրենսդրությամբ: Ուստի պայմանագրի լուծման հարցում շահագրգիռ կողմը պետք է հիմնավորի հանգամանքների էական փոփոխության առկայության փաստը: Հետևաբար գնահատման առարկա պետք է դառնա այն խնդիրը, թե արդյոք իրավատիրոջ կամ օգտագործողի իրավա-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

հաջորդի ձեռնարկատիրությամբ զբաղվելու ունակության բացակայությունը կարող է դիտվել հանգամանքների էական փոփոխություն: Գտնելով, որ սույն խնդիրը առավելապես իրավակիրառի խնդիրն է, և կոնկրետ դեպքում հանգամանքների բազմակողմանի գնահատմամբ պետք է որոշել՝ արդյոք այս դեպքում էականորեն փոփոխվում են հանգամանքները, թե՞ ոչ, այնուամենայնիվ կարծում ենք, որ ձեռնարկատիրությամբ զբաղվելու ունակության բացակայությունը հանգամանքների էական փոփոխություն չպետք է դիտել: Մեր նման դիրքորոշումը պայմանավորված է նրանով, որ օրենսդրորեն նախատեսվում է նման փոփոխման հնարավորությունը, և իրավատերը գիտակցում է, որ օրենսդիրը, կարևորություն տալով այս հարաբերությանը, ենթարկել է այն իրավական կարգավորման: Հետևաբար, ՔՕ 467-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որևէ հիմքով

այն չի կարող դիտվել հանգամանքների էական փոփոխություն:

Վերոգրյալը խնդիրների առկայությունը հաշվի առնելով՝ կարծում ենք, որ առավել նպատակահարմար է ՔՕ 980-րդ հոդվածի 2-րդ մասում կատարել փոփոխություն և նախատեսել դրույթ, որը ոչ թե ինպերատիվ կերպով կամրագրի պայմանագիրը շարունակելու **պարտադիրություն**, երբ իրավահաջորդը ձեռք է բերել անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակ, այլ **հնարավորություն**: Ըստ այդմ էլ առաջարկում ենք ՔՕ 980-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. *Իրավատիրոջ և (կամ) օգտագործողի մահվան դեպքում պայմանագիրը կարող է շարունակվել, եթե համալիր թույլտվության պայմանագրով վերջիններիս իրավունքները և պարտականությունները փոխանցվում են համապատասխանաբար իրավատիրոջ և (կամ) օգտագործողի ժառանգին, պայմանով, որ նա ընդունել է ժառանգությունը ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում և նույն ժամկետում գրանցվել է կամ գրանցված է որպես անհատ ձեռնարկատեր: Հակառակ դեպքում՝ պայմանագիրը դադարում է*»:

¹ Ст'я Абрамова Е.Н., Аверченко Н.Н., Байгушева Ю.В.Гражданское право. Учебник В 3-х томах. Том 2. Проспект, М., 2010, էջ 443:

² Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք ՀՀ ՊՏ N 17(50), 10.08.98 (այսուհետ՝ ՔՕ):

³ Ст'я Договорное право. Книга третья: Договоры о выполнении работ и оказании услуг. Брагинский М.И., Витрянский В.В.. Москва. 2002 (<http://www.pravoznavec.com.ua/books/242/41/#chlist> 2011 թվականի դրությամբ), Лысов К. П. Договор коммерческой концессии по законодательству Российской Федерации и практика его применения в предпринимательской деятельности: Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук: Санкт-Петербургский

университет, СПб.,2004, էջ 15:

⁴ Ст'я Гражданское право Российской Федерации. В 2-х томах. Том 1. Под ред. О.Н. Садикова. Инфра-М, М., 2006, էջ 372, Гражданское право. Под ред. С. Гришаева. Норма, Инфра-М., (<http://pravoznavec.com.ua/books/12/749/41/#chapter> 2011 թվականի դրությամբ), Гражданское право. В 2-х частях. Часть 2-е. Под ред. Мозолина В.П., Москва. 2007 (<http://www.alleng.ru/d/jur/jur137.htm> 2011 թվականի դրությամբ):

⁵ Ֆրանչիզաներից «Orange elephant»-ը չի նախատեսում համագործակցության որևէ ժամկետ:

⁶ Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации. В 3-х томах. Юрайт-Издат, М., 2004 (<http://www.alleng.ru/d/jur/jur097.htm> 2011 թվականի դրությամբ):

- ⁷ Տե՛ս ՔՕ 979-րդ հոդվածի 1-ին մասը:
- ⁸ Տե՛ս Ян Мюррей. Франчайзинг. Питер. 2004, էջ 99:
- ⁹ Տե՛ս Жерар Дельтей. Франчайзинг. Нева. Санкт-Петербург. 2003, էջ 70:
- ¹⁰ Տե՛ս С.Смирнов. Практические проблемы института коммерческой концессии. Хозяйство и право. N 1 (360) январь 2007, 88-89-րդ էջեր:
- ¹¹ Նույն տեղը:
- ¹² Տե՛ս С.Смирнов, նույն տեղը, էջ 89:
- ¹³ Տե՛ս Договорное право. Книга третья: Договоры о выполнении работ и оказании услуг. Брагинский М.И., Витрянский В.В.. Москва. 2002 (<http://www.pravoznavec.com.ua/books/242/41/#chlist> 2011 թվականի դրությամբ)
- ¹⁴ Հայաստանի Հանրապետությունում գործող և շուրջ հինգ տասնյակի հասնող լիցենզային, այդ թվում՝ ֆրանչայզինգի պայմանագրերի պայմաններում առայժմ նման վտանգը բացակայում է զուտ թվաքանակի քիչ լինելու առումով:
- ¹⁵ Տե՛ս Шульга Д.В. Регулирование договора коммерческой концессии (франчайзинга) в гражданском праве России: Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук: Волгоград, 2005, էջ 22:
- ¹⁶ Տե՛ս Коммерческое право. Часть I - А.Ю. Бушев, О.А. Городов, Н.Л. Вещунова, Санкт-Петербург, 1998, էջ 428:
- ¹⁷ Տե՛ս «Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը, ՀՀ ՊՏ 2008.07.09/42 (632), հոդ. 718:
- ¹⁸ Ֆիրմային անվանման փոփոխումը չնայած հանգեցնում է նախկին անվանման նկատմամբ ունեցած իրավունքի դադարման, այդուհանդերձ իրավունքի դադարման այս հիմքը չի հանգեցնում ֆրանչայզինգի պայմանագրի գործողության դադարեցման, քանզի նոր ֆիրմային անվանումը փոխարինում է նախկինին, և պայմանագիրը շարունակում է գործել նոր անվանման նկատմամբ:
- ¹⁹ Ֆիրմային անվանման նկատմամբ իրավունքների դադարման վերաբերյալ օրենսդրությունում առկա է հակասություն: Այսպես՝ ՔՕ 1169-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված է, որ ֆիրմային անվանման նկատմամբ իրավունքի գործողությունը դադարում է **միայն** (ընդգծումը մերն է) իրավաբանական անձի լուծարման և նրա ֆիրմային անվանման փոփոխության դեպքերում: Մինչդեռ ավելի ուշ ընդունված «Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածում ամրագրված է հիմքերը, ի թիվս ՔՕ-ի վերը հիշատակված հոդվածում ամրագրված հիմքերի, ամրագրված են նաև դատական կարգով ֆիրմային անվանման գրանցումն անվավեր ճանաչելը և ֆիրմային անվանումն օգտագործելն արգելելը:
- ²⁰ Որպես խնդրի լուծման տարբերակ առաջարկում ենք այս դեպքում ևս ՔՕ 435-րդ հոդվածում որպես պարտավորության դադարման հիմք ամրագրել անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակի դադարեցումը: Քանի որ նշված հոդվածը տեղ է գտել պարտավորությունների դադարմանը վերաբերող զլխում որպես ընդհանուր կանոն, կարծում ենք, որ այն հավասարապես կիրառելի է նաև ֆրանչայզինգի պայմանագրի դադարման դեպքում:
- ²¹ Օ. Ա. Բելյանան օգտագործում է «հարկադիր լուծարման հիմք» եզրույթը (տե՛ս Беляева О. А. Предпринимательское право. Уч. пособие. Контракт, Инфра-М, М., 2006 էջ 84)
- ²² Տե՛ս Բարսեղյան Տ.Կ. Գործարարական իրավունք: Ուսումնական ձեռնարկ, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2007, էջ 134:
- ²³ Տե՛ս Соколов Г.А. Договора коммерческой концессии по гражданскому законодательству Российской Федерации: Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук: М., 2007, էջ 25:
- ²⁴ Տե՛ս Մեկնաբանություններ «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքի, ըստ հոդվածների, Հ. Մանուկյանի, Տ.Մուկուչյանի խմբագրությամբ, Երևան, 2005, էջ 201:
- ²⁵ Տե՛ս Բարսեղյան Տ.Կ. Գործարարական իրավունք: Ուսումնական ձեռնարկ, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2007, էջ 135:
- ²⁶ Նշենք, որ, անկախ կողմերի սնանկ ճանաչվելուց, պրակտիկայում հաճախ է կիրառվում ֆրանչիզայի հետգնումը: Մեր ուսումնասիրած օրինակներից «Orange Elephant»-ի դեպքում իրավատերը հետ է գնում ֆրանչի-

ՔՎՈՎԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- զան, եթե օգտագործողի կողմից որոշակի ժամանակահատվածում չեն իրացվում տրամադրված ապրանքները:
- ²⁷ Տե՛ս Договорное право. Книга третья: Договоры о выполнении работ и оказании услуг. Брагинский М.И., Витрянский В.В.. Москва. 2002 (www.pravoznavec.com.ua/books/242/41/#chlist 2011 թվականի դրությամբ): Ոչ միայն սնանկ ճանաչվելու դեպքում է հնարավոր գնել ֆրանչիզայի նկատմամբ իրավատիրոջ իրավունքները, այսինքն՝ դառնալ իրավատեր: Ընդունված է նշել, որ ֆրանչայզինգի պատմության մեջ ամենամեծ նման իրադարձությունը այն է, երբ IY Group-ը 1991 թվականին գնեց իրավատեր հանդիսացող 7-Eleven ընկերության ֆրանչիզան և դարձավ իրավատեր: IY Group-ը սուպերմարկետների, հագուստի խանութների, սննդամթերքի վերմշակման, ֆինանսական և ապահովագրական ընկերությունների խոշորագույն ցանցերից է (Տե՛ս Стивен Спинелли-мл., М. Розенберг Роберт, Берли Сью. Франчайзинг: путь к богатству. М., 2007г., 354-355 էջեր):
- ²⁸ KFC և Pizza Hut ապրանքանիշերի մատվ օգտագործող ընկերություններ կան նաև Հայաստանում:
- ²⁹ Տե՛ս <http://www.kfc.com/about/history.asp> (2011 թվականի դրությամբ), Carrie Shook, Robert L. Shook. Franchising: The business strategy that changed the world. USA. 1993. էջ 177:
- ³⁰ Տե՛ս Договорное право. Книга третья: Договоры о выполнении работ и оказании услуг. Брагинский М.И., Витрянский В.В.. Москва. 2002 (www.pravoznavec.com.ua/books/242/41/#chlist 2011 թվականի դրությամբ):
- ³¹ Այս կանոնները ամրագրված են ՔՕ 981-րդ հոդվածում:
- ³² Տե՛ս ՔՕ 1109-րդ հոդվածը:
- ³³ Ժամկետների հաշվարկի սկիզբը կախված է տարբեր իրավաբանական փաստերի վրա հասնելուց:
- ³⁴ Տե՛ս ՔՕ 1131-րդ և 1142-րդ հոդվածը, «Ջեդի-նակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 37-րդ և 61-րդ հոդվածները: Բացառություն է տվյալների բազան, որի նկատմամբ իրավունքների գործողության ժամկետը 15 տարի է, ՀՀ ՊՏ 2006.07.12/38(493):
- ³⁵ Տե՛ս «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական մոնուշների մասին» ՀՀ օրենքի 20-րդ, 21-րդ և 29-րդ հոդվածները, ՀՀ ՊՏ 2008.07.09/42(632):
- ³⁶ Տե՛ս «Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասը, ՀՀ ՊՏ 1999.12.27/31(97):
- ³⁷ Տե՛ս «Ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը, ՀՀ ՊՏ 1998.03.14/6(39):
- ³⁸ Տե՛ս ՔՕ 1164-րդ հոդվածի 4-րդ մասը և 141-րդ հոդվածի 1-ին մասը:
- ³⁹ Տե՛ս «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը, ՀՀ ՊՏ 2010.06.02/24(758):
- ⁴⁰ Տե՛ս «Աշխարհագրական նշումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ ՊՏ 2010.06.02/24(758):
- ⁴¹ Պայմանագրի լրիվ կամ մասնակի դադարումը չի սահմանափակվում միայն բացառիկ իրավունքների գործողության ժամկետով: Այդ իրավունքների դադարման համար օրենսդրությամբ նախատեսված են բազմապիսի հիմքեր: Այդ իսկ պատճառով էլ ՔՕ 982-րդ հոդվածում օրենսդիրը չի սահմանափակվել բացառապես գործողության ժամկետի ավարտը որպես պայմանագրի դադարման հիմք նշելով:
- ⁴² Այստեղ ևս դրսևորվում է պայմանագրի առանձնահատկությունը. այն համարվում է փոփոխված օրենքի ուժով (ՔՕ 980-րդ հոդվածի 1-ին մաս):
- ⁴³ Օրենսդրական նման ձևակերպումը ենթադրում է, որ իրավատիրոջ կողմում սկսվում են հանդես գալ մեկից ավելի սուբյեկտներ, և բացառիկ իրավունքների մի մասի փոխանցումը այլ սուբյեկտի չի հանգեցնում պայմանագրի փոփոխման: Նոր իրավատերը պայմանագրային հարաբերությունների մասնակից է դառնում օրենքի ուժով: Այնուամենայնիվ կարծում ենք, որ ձևական առումով ֆրանչայզինգի պայմանագրում պետք է կատարվի

փոփոխություն և ամրագրվի նոր իրավատիրոջ մասնակցության վերաբերյալ համապատասխան դրույթ: Նշվածը կիրառելի է ոչ միայն իրավատիրոջ կողմում անձանց բազմաթիվության առաջացման դեպքում, այլև օգտագործողի կողմում մի քանի անձանց մասնակցության պարագայում: Բացի այդ՝ նույն կերպ պետք է վարվել, երբ առաջանում է անհատ ձեռնարկատեր իրավատիրոջ կամ օգտագործողի իրավահաջորդի՝ պայմանագրային հարաբերություններին հետագա մասնակցություն ունենալու խնդիր:

⁴⁴ Տե՛ս Carrie Shook, Robert L. Shook. Franchising: The business strategy that changed the world. USA. 1993. էջ 178:

⁴⁵ Տե՛ս Гражданское право. Учебник. Том 2. Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. Проспект. М. 2005, էջ 758:

⁴⁶ ՔՕ 980-րդ հոդվածի 2-րդ մասում խոսվում է իրավատիրոջ մահվան դեպքում պայմանագրային պարտավորության՝ ժառանգին անցման մասին: Այս դեպքում պետք է նկատի ունենալ, որ ոչ միայն պայմանագրային պարտավորություններն են անցնում ժառանգին, այլև ֆրանչիզայում ներառված բացառիկ իրավունքները:

⁴⁷ Տե՛ս Бобков С.А. Правовое регулирование коммерческой концессии в Российской Федерации. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2004, էջ 165:

⁴⁸ Տե՛ս Руководство по франшизе. ВОИС. Женева. 1995, էջ 38:

⁴⁹ Անհատ ձեռնարկատեր իրավատիրոջ մահից հետո վերջինիս ժառանգի կողմից պայմանագրային պարտավորությունների ձեռքբերման մասին մեր կողմից ներկայացվող մոտեցումները հավասարապես վերաբերում են նաև օգտագործողին:

⁵⁰ Նման տեսակետ արտահայտվում է մի շարք հեղինակների կողմից: Այսպես, Ա.Ա. Իվանովը

նշում է, որ անձանց բազմաթիվություն առկա է նաև այն դեպքում, ֆրանչիզան կազմող իրավունքների մի մասն անցնում է այլ անձի (տե՛ս Гражданское право. Учебник. Том 1. Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. Проспект. М. 2005, էջ 758): Ե. Վ. Վասիլևան, խոսելով մի քանի ժառանգների կողմից ժառանգությունը ընդունելու արդյունքում պարտավորության մեջ անձանց բազմաթիվություն առաջանալու մասին, նշում է, որ նման իրավիճակ առաջանում է այն ժամանակ, երբ պայմանագրի առարկան կազմող մեկ կամ մի քանի բացառիկ իրավունքներ անցնում են այլ անձի (անձանց): Այս դեպքում դարձյալ իրավատիրոջ կողմում հանդես են գալիս մեկից ավելի սուբյեկտներ (տե՛ս Сосна С.А., Васильева Е.Н. Франчайзинг. Коммерческая концессия. ИКЦ «Академкнига», М., 2005, էջ 245):

⁵¹ Տե՛ս, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ5/0953/05/10 վարչական գործով 27.12.2010 թվականի որոշումը՝ Ասյա Քաղցրիկյանն ընդդեմ Գյումրու նոտարական գրասենյակի և Շողիկ Գրիգորյանի (ՀՀ ՊՏ 2011.02.18/9 (812).1):

⁵² Տե՛ս, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1621(ՎԴ) վարչական գործով 09.11.2007 թվականի որոշումը՝ Արմինե և Սամվել Հակոբյաններն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտարի, Անահիտ, Մարգարիտ, Քնարիկ Հակոբյանների (ՀՀ ՊՏ 2007.12.05/60(584)):

⁵³ Տե՛ս, օրինակ, Carrie Shook, Robert L. Shook. Franchising: The business strategy that changed the world. USA. 1993, 49-73 էջեր, Bradley J. Sugars. Successful Franchising. McGraw-Hill, USA, 2006 1-6 էջեր, Jan Norman. What no one ever tells you about franchising. Kaplan publishing, USA, 2006, 16-17 էջեր:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**SOME ISSUES ON THE TERMINATION OF
THE FRANCHISING AGREEMENT****Grigor BEQMEZYAN**

*Associate professor of the Chair of the Civil Law,
Law faculty of the YSU*

Liparit DRMEYAN

*Post-graduate student of the Chair
of the Civil Law, Law faculty of the YSU*

In the scope of the present article various issues related to the termination of the franchising agreement are examined. These are highly relevant issues both for the civil legal practice and theory. In particular, the coauthors scrutinize the methods and principles of classification of the causes of the termination of franchising agreement. It

is concluded that the classification of the causes is the theoretical aspect which contributes to deeper knowledge of the circumstances and the peculiarities of that causes.

Discussing all the causes of the termination of franchising agreement it is proved that the registration of the termination is necessary not only when the agreement is annulled but also when it is terminated in consequence of the changing of the trade name, firm name, bankruptcy of the firm etc. For this reason it is suggested to make an amendment in the article 979 of the RA Civil Code. Exploring practice and legislative regulation of franchising relations, the coauthors analyse the reasons related with losing the rights on the objects of intellectual property.

ԱՐԺԵՐՈՒԹԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Լիպարիտ ՄԵԼԻՔՏԱՆՅԱՆ

*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի
ամբիոնի ասիստենտ, իրավաբանական
գիտությունների թեկնածու*

Փաստաթուղթը արժեթուղթ է համարվում ոչ թե նրան վերապահված բնական հատկությունների ուժով, այլ որ նրանում ամրագրված են որոշակի գույքային իրավունքներ՝ դրանական գումար ստանալու իրավունք, ապրանք ստանալու իրավունք, այլ արժեթղթերի նկատմամբ իրավունքներ և այլն:

Արժեթղթերը պարունակում են այլ իրավաբանական փաստաթղթերից տարբերող այնպիսի հատկանիշներ, որոնք նույնպես կարող են ամրագրել տարատեսակ սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքներ: Եվ որպեսզի կարողանանք տարանջատել բավական լայն տարածում գտած այլ փաստաթղթերից, առավել ևս սուրոգատային արժեթղթերից, անհրաժեշտ է առանձնացնել և վերլուծել այնպիսի հատկանիշները, որոնք ներհատուկ են արժեթղթերին: Իրավաբանական գրականության մեջ տարբեր հեղինակներ արժեթղթի տարբեր հատկանիշներ են մատնանշում:

Օրինակ, Ներսեսովը գտնում է, որ արժեթուղթը տարբերվում է այն բանով, որ այն մասնավոր իրավունքների վերաբերյալ փաստաթուղթ է, փաստաթղթի տիրապետունը պայմանավորում է փաստաթղթից բխող իրավունքի իրականացումը և փոխանցումը, դրանց բնութագրական է որոշակի լեգիտիմ ձև, արժեթղթերը վինդիկացիայի չեն ենթարկվում¹:

Իր ուսումնասիրություններում Ագարկովը նշում է արժեթղթի հետևյալ հատկանիշները՝ նրանում ամրագրված իրավունքի իրականացման համար արժեթուղթը ներկայացնելու անհրաժեշտությունը, որոշա-

կի լեգիտիմությունը և արժեթղթի շրջանառունակությունը²:

Իսկ ահա Սուխանովը առանձնացնում է արժեթուղթը բնութագրող հետևյալ երեք հատկանիշները՝ արժեթուղթը որոշակի գույքային իրավունք հավաստող փաստաթուղթ է, արժեթուղթը թղթային կրիչի վրա կատարված պաշտոնական գրառում է, որն ունի խիստ որոշակի ձև և պարտադիր վավերապայմաններ, արժեթուղթը փաստաթուղթ է, որն անմիջականորեն կապված է նրանում սահմանված գույքային իրավունքի հետ, որի իրականացումը կամ այլ անձի փոխանցումը հնարավոր է միայն այդ փաստաթղթի օգտագործման դեպքում³:

Փորձենք ընդհանրացնել այն բոլոր էական հատկանիշները, որոնք անհրաժեշտ և բավարար են փաստաթուղթը արժեթուղթ որակելու համար: Նախ, ցանկացած արժեթուղթ վավերացնում է սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքներ, դրանով հավաստվող իրավունքների իրականացումը հնարավոր է նրա ներկայացմամբ, օժտված է հանրային արժանահավատությամբ, համապատասխանում է արժեթղթերի թվին դասվելու օրինական հիմքերին (դրանցից է համարվում օրենքով կամ այլ իրավական ակտերով), օժտված է շրջանառունակությամբ:

Արժեթուղթը սահմանում է սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքներ: Փաստաթուղթը դառնում է արժեթուղթ ոչ թե ինքնին, այլ որ վավերացնում է որոշակի իրավունքներ: Արժեթղթով հավաստվող իրավունքների իրավաբանական բնույթի պրոբլեմը միանշանակ պատասխան չի ստացել ինչպես գրականությամբ, այնպես էլ օրենսդրությամբ: Արժեթղթերում պարունակվող իրավունքներից ելնելով՝ տարբերվում են դրանական իրավունքներ պարունակող, ապրանքային իրավունքներ պարունակող, բաժնետիրական ընկերության գործերի վարմանը մասնակցելու իրա-

¹ Ներսեսով, 2007, 10-11: ² Սուխանով, 2007, 10-11: ³ Սուխանով, 2007, 10-11:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

վունք տվող արժեթղթեր⁴: Այսինքն՝ գույքային իրավունքների հետ մեկտեղ, արժեթուղթը կարող է պարունակել նաև այլ իրավունքներ՝ բաժնետիրական ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունք, ընկերության գործունեության մասին ինֆորմացիա ստանալու իրավունք և այլն: Տարբեր արժեթղթերի վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ արժեթղթերը կարող են վավերացնել գույքային և դրանց հետ կապված ոչ գույքային իրավունքներ:

Արժեթղթի ներկայացմամբ միայն դրանցով հավաստվող իրավունքների իրականացման պահանջը նախատեսված է ՀՀ քաղ օր-ով արժեթղթերին տրված հասկացության մեջ: Քանի որ արժեթղթի և նրանում մարմնավորված իրավունքի միջև գոյություն ունի անխզելի կապ, իսկ իրավունքը և փաստաթուղթը, որում այն արտահայտված է, ունեն նույն ճակատագիրը, իրավունքը չի կարող իրականացվել առանց փաստաթուղթը ներկայացնելու՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Արժեթուղթն իր մեջ ամրագրված իրավունքին տալիս է ինքնավար բնույթ, այսինքն՝ օրինական ճանապարհով արժեթուղթ ձեռք բերած անձը արժեթղթով ձեռք է բերում պահանջի իրավունք, որը կախված չէ նախորդ սեփականատիրոջ՝ այդ արժեթղթի նկատմամբ իրավունքից: Այդ պատճառով արժեթղթում ամրագրված իրավունքն անցնում է բարեխիղճ ձեռքբերողին այն վիճակում, ինչպես այն նշված է արժեթղթում, իսկ այդ արժեթղթով պարտավոր անձը իրավունք չունի նոր պարտատիրոջը ներկայացնելու այն առարկությունները, որոնք հիմնված են նախորդ սեփականատիրոջ հետ նրա իրավահարաբերությունների վրա: Արժեթղթի նման հատկությունը կոչվում է նաև հանրային արժանահավատության սկզբունք, որը

բնորոշ է ոչ բոլոր արժեթղթերին, օրինակ՝ սովորական անվանական բաժնետոմսերին, անվանական մուրհակներին և չեկերին:

Իրավաբանական գրականության մեջ գոյություն ունի օրենսդրական եղանակով փաստաթուղթը արժեթուղթ ճանաչելու երկու մոտեցում: Առաջին մոտեցումը կարելի է անվանել առավել լայն, որի տեսանկյունից փաստաթուղթը արժեթուղթ ճանաչելու համար այն չպետք է պետության կողմից որպես արժեթուղթ արգելված լինի: Այս մոտեցման դեպքում արժեթուղթ ճանաչվող փաստաթղթերի շրջանակը մեծանում և հասնում է հարկային ծավալների:

Երկրորդ մոտեցումը ենթադրում է նորմատիվ ձևով արժեթղթերի հստակ սահմանում: Այս մոտեցման թերությունը այն է, որ համապատասխան օրենքում հստակ պետք է նշվեն արժեթղթերի տեսակները, և արժեթղթի նոր տեսակի ի հայտ գալու դեպքում անհրաժեշտ է համապատասխան օրենսդրական ակտում կատարել փոփոխություններ⁵:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը այս մոտեցումներից չի օգտվել: Այնտեղ նշվում են արժեթղթի տեսակները՝ սահմանելով, որ դրանց թվին են դասվում նաև այն փաստաթղթերը, որոնք արժեթղթերի մասին օրենքով կամ նրանցով սահմանված կարգով դասվում են արժեթղթերի թվին:

Փաստորեն այն հարցին, թե վերաբերում է արդյոք այս կամ այն փաստաթուղթը արժեթղթերի թվին, պետք է առաջնորդվել տեսական հատկանիշով, այսինքն արժեթղթերի մասին օրենքով կամ դրանցով սահմանված կարգով նշված է տվյալ փաստաթուղթը որպես արժեթուղթ: Պրակտիկ առումով այս մոտեցումն արդարացված է, քանի որ արժեթղթերի իրավական կարգավորման մեջ մտցված է անհրաժեշտ որոշակիություն: Այս առումով բացառվում է նաև պրակտիկայում առաջացող այն դժվարությունները, որոնք կապված են որոշակի փաստաթուղթը արժեթուղթ համարելու կամ չհամարելու հետ: Բայց այստեղ

առաջանում են այլ պրոբլեմներ, թե ինչ չափորոշիչներով պետք է ղեկավարվի օրենսգիրքը փաստաթուղթը արժեթղթերի շարքին դասելու հարցը լուծելիս: Այս հարցը լուծելիս անհրաժեշտ է նախևառաջ հաշվի առնել արժեթղթերի նշանակությունը, որ դրանք կոչված են արագացնելու և հեշտացնելու քաղաքացիական շրջանառությունը, դրանց միջոցով ձևակերպվում են պայմանագրի նոր տեսակներ, որ արժեթղթերը կորցրել են դեռևս 3ին 3ոռմից գործող անձնական կապը պարտապանի և պարտատիրոջ միջև, որ արժեթղթերը հնարավոր ռիսկերը տեղաբաշխում են պարտավորության մասնակիցների միջև: Բայց արժեթղթերի «արժանիքներից» բխում են նաև դրանց թերությունները, մասնավորապես որ արժեթղթերը խիստ ձևական փաստաթղթեր են, որոնցում ձևը վեր է դասվում բովանդակությունից: Արժեթղթերի ձևական լինելը և խիստ իրավական կարգավորումը որոշակի հակասության մեջ են գտնվում քաղաքացիական իրավունքին բնորոշ դիսպոզիտիվության սկզբունքի հետ: Այդ պատճառով այս կամ այն փաստաթուղթը արժեթղթերի թվին դասվելու հարցը լուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր «կողմ» և «դեմ» հանգամանքները⁶:

Այսպիսով, փաստաթուղթը արժեթղթերի շարքին դասելիս իրավաբանական գրականության մեջ հիմնավորապես ենթադրվում է ղեկավարվել ընդհանուր գաղափարներով՝ անձի իրավունքների նկատմամբ հարգանքով, քաղաքացիական իրավունքի շրջանակներում ընտրության ազատության և առավելագույն ինքնուրույնություն վերապահելու հնարավորություն, իրավունքների ամբողջական պաշտպանության հնարավորություն քաղաքակիրթ քաղաքացիական դատավարության սկզբունքներին համապատասխան⁷:

Արժեթղթերի հաջորդ կարևոր հատկանիշը շրջանառությունն է: Այս հատկանիշը հնարավորություն է տալիս արժեթղթերը

սահմանագատել այն իրավական փաստաթղթերից, որոնք կոչված են պարտապանի համար հեշտացնելու այն անձի որոշակիացնելը, որի օգտին պետք է կատարի որոշակի գործողություն⁸:

Շրջանառունակության տակ պետք է հասկանալ քաղաքացիական գործարքների առարկա հանդիսանալու արժեթղթերի ունակությունը: 33 քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է, որ արժեթղթով հավաստվող գույքային իրավունքները կարող են իրականացվել երկու եղանակով՝ իրականացմամբ կամ փոխանցմամբ, ըստ որում՝ արժեթղթի պարտադիր ներկայացմամբ: Պարզապես փոխանցումը պետք է դիտել ոչ միայն արժեթղթի փաստացի հանձնում մեկ անձից մյուսին, այլ փաստաթղթի նկատմամբ փոխանցողի սեփականության իրավունքի դադարում և ձեռք բերողի մոտ սեփականության իրավունքի առաջացում:

Ոչ փաստաթղթային արժեթուղթը օբյեկտիվ պատճառներով չի կարող փաստացի փոխանցվել, որն էլ բնականաբար օրենսդրությամբ չի պահանջվում: Պարզապես արժեթղթերի դուալիստական բնույթը անհրաժեշտություն է առաջացնում տարբերակելու արժեթղթի նկատմամբ իրավունքի փոխանցումը արժեթղթում վավերացված իրավունքի փոխանցումից:

Իրավաբանական գրականության մեջ կարծիք կա, որ շրջանառությունը (տրանզիտիվություն) չի կարելի դասել արժեթղթերի հատկանիշների շարքը, որը հիմնավորվում է նրանով, որ գոյություն ունեն արժեթղթեր, որոնք օժտված չեն շրջանառությամբ, օրինակ՝ անվանական չեկը, որը ենթակա չէ փոխանցման: Ենթադրվում է, որ անվանական չեկի նման առանձնահատկությունը չունի ընդհանուր բնույթ և չեկերի մասին 1931 թվականի Ժնևյան կոնվենցիան թույլատրում է անվանական չեկերի փոխանցումը: Վերջապես, արժեթղթերի ստեղծման և զարգացման ամբողջ ընթացքը դրանց շրջանառության պատմությունն է, որն անհնար է առանց այնպիսի հատկա-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

նիշի, ինչպիսին շրջանառունակությունն է:

Այսպիսով, օրենսդրության համաձայն՝ արժեթուղթ ճանաչվող ցանկացած փաստաթղթի պետք է ներհատուկ լինեն վերը նշված հատկանիշները:

Արժեթղթերին վերաբերող տնտեսագիտական գրականության մեջ նշվում են նաև արժեթղթերի այլ հատկանիշներ՝ քաղաքացիական շրջանառությունը, թույլատրելիությունը, ստանդարտությունը կամ սերիականությունը, փաստաթղթայնությունը, կարգավորված և պետության կողմից ճանաչված լինելը, ռիսկայնությունը, լիկվիդայնությունը: Այդ պատճառով է, որ արժեթղթերի ուսումնասիրությանը զբաղվող տնտեսագետների կարծիքով քաղաքացիական օրենսգրքում տրված արժեթղթի հասկացությունը լիարժեք չէ և ճշգրտման կարիք ունի⁹: Իհարկե, ընդունելով տնտեսագետների վերլուծություններն ու դատողությունները (այստեղ որևէ հակասություն չկա, քանի որ ՀՀ և ՌԴ քաղաքացիական օրենսգրքերում արժեթղթերի միևնույն հասկացությունն է սահմանված), դրա հետ չի կարելի համաձայնել, քանի որ անհրաժեշտ է տարբերել արժեթղթի տնտեսագիտական և իրավական իմացությունները: Այն հասկացությունը, որ տրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում (նաև՝ ՌԴ-ում) հանդիսանում է մայրցամաքային ցիվիլիստական մտքի զարգացման արդյունք և ներառում է այն հատկանիշները, որոնք կարևոր նշանակություն ունեն արժեթղթերի իրավական կարգավորման համար: Ինչպես շատ ճիշտ նկատում է Լոմոնկինը, եթե տնտեսագիտական տեսանկյունից լիկվիդայնությունը հանդիսանում է արժեթղթի կարևորագույն հատկանիշ, ապա իրավական նորմի կիրառման համար որևէ անհրաժեշտություն չկա պարզելու տվյալ արժեթղթի լիկվիդայնությանը օժտված լինելու հարցը, այսինքն՝ արագ վաճառվելու և դրամական միջոցների վերածվելու ու-

նակությունը, քանի որ թե լիկվիդային և թե ոչ լիկվիդային արժեթղթերի համար սահմանված է ունիֆիկացված իրավական ռեժիմ¹⁰:

Ավարտելով արժեթղթերի բնորոշ հատկանիշների վերլուծության հիման վրա արժեթղթերի հասկացության հարցի քննարկումը՝ անհրաժեշտ է նշել, որ այն միանշանակ լուծում չի ստացել ոչ օրենսդրության, ոչ իրավաբանական գրականության մեջ: Ներկայումս ձևավորվել են արժեթղթի իմացության երկու հիմնական կոնցեպցիա՝ փաստաթղթային և ոչ փաստաթղթային:

Փաստաթղթային կոնցեպցիայի ներկայացուցիչները, հիմնականում հիմնվելով քաղաքացիական օրենսգրքի վրա, արժեթուղթ են ճանաչում միայն փաստաթղթային արժեթղթերը: Այս կոնցեպցիայի հետևողական ներկայացուցիչներից է Վ.Ա. Բելովը, որը նշում է, որ արժեթղթի տակ որպես քաղաքացիական իրավահարաբերությունների օբյեկտի պետք է հասկանալ միայն փաստաթղթերը և ոչ թե նրանում արտահայտված սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքները¹¹:

Ինչ վերաբերում է ոչ փաստաթղթային արժեթղթերին, ապա դրանք փաստաթղթային կոնցեպցիայի տեսանկյունից արժեթուղթ չեն համարվում, այլ միայն զույթային իրավունք կամ իրավունքի ամրագրման ձև, ուստի չեն կարող համարվել իր, հետևաբար և սեփականության իրավունքի օբյեկտ: Բելովը հանգում է հետևյալ եզրակացության. արժեթղթերը և ոչ փաստաթղթային արժեթղթերը ունեն տարբեր իրավական ռեժիմներ, ուստիև հանդիսանում են քաղաքացիական իրավահարաբերությունների տարբեր օբյեկտներ¹²:

Ժամանակակից իրավագիտության մեջ նաև կարծիք է արտահայտվում, որ արժեթղթի մեկ միասնական հասկացություն մշակել հնարավոր չէ, ուստիև առաջարկվում է ոչ փաստաթղթային արժեթուղթը բնորոշել որպես քաղաքացիական իրավունքների առանձնահատուկ օբյեկտ, որը հնարավոր է արժեթղթում սահմանված ի-

րավունքի իդեալական թաղանթի ձևով¹³:

Ոչ փաստաթղթային կոնցեպցիայի կողմնակիցները նշում են, որ ՌԴ քաղաքացիական օրենսգրքի արժեթղթեր հասկացությունը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հետ ամբողջությամբ նույնն է) մշակված է դեռևս 19-րդ դարում Գերմանիայի առևտրային իրավունքի մասնագետների կողմից, որում բնականաբար բացակայում են ներկա ժամանակի պահանջները¹⁴, ուստի արժեթղթերը սահմանում են ոչ նյութական գույք, կամ արժեթղթերը դիտարկվում է որպես գույքային իրավունքների համակցություն: Մեր կարծիքով, չի կարելի չհամաձայնել սույն տեսակետի հետ, քանի որ արժեթղթերը, ծագմամբ և զարգացմամբ պայմանավորված լինելով իրենց պարտադիր փաստաթղթային արտահայտվածության հետ, չեն կարող համապատասխանել ժամանակակից գիտատեխնիկական պահանջներին: Վերջիվերջո ոչ փաստաթղթա-

յին արժեթղթերի ծագումն ու զարգացումը պայմանավորված են հենց տեխնիկական առաջընթացի հետ, երբ հնարավորություն առաջացավ համակարգչային եղանակով վերահսկել արժեթղթերի շրջանառությունը: Քաղաքացիաիրավական բոլոր ինստիտուտներն էլ իրենց վրա զգացել են պատմական զարգացման հետևանքով փոփոխությունների ենթարկվելու օրյեկտիվ հրամայականը և որևէ պատճառ չկա դա բացառելու արժեթղթերի պարագայում:

Ներկայացված յուրաքանչյուր տեսակետ ունի իր արժանիքներն ու թերությունները, և արժեթղթի հասկացության և հատկանիշներին առնչվող տեսակետների բազմազանությունն էլ բացատրվում է նրանով, որ արժեթղթերը հանդիսանում են հետագա ուսումնասիրության և օրենսդրական կատարելագործման կարիք ունեցող առավել բարդ և դինամիկ զարգացող ինստիտուտներից մեկը:

¹ Տե՛ս Нерсесов Н.О. Избранные труды по представительству и ценным бумагам в гражданском праве, М., 1998, էջ 141-142:

² Տե՛ս Агарков М.М. Основы банковского права. Учение о ценных бумагах. М., 1994, էջ 173-188:

³ Տե՛ս Комментарий части первой ГК РФ для предпринимателей. М., 1995, էջ 183:

⁴ Տե՛ս Բարսեղյան Տ.Կ. ՀՀ Քաղաքացիական իրավունք. Առաջին մաս, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան-2006, էջ 192:

⁵ Տե՛ս Трофименко А. Признаки ценной бумаги // Российская юстиция. 1997, N7, էջ 16:

⁶ Տե՛ս Шевченко Г.Н. Правовое регулирование ценных бумаг, М., СТАТУТ, 2005, էջ 11:

⁷ Տե՛ս Мурзин Д.В. Ценные бумаги и тенденции развития гражданского права // Циви-

листические записки: Межвузовский сборник научных трудов. М., 2001, էջ 263-264:

⁸ Տե՛ս Крашенинников Е.А. О легальных определениях ценных бумаг // Правоведение, 1992, N4, էջ 38:

⁹ Տե՛ս Миркин Я.М. Ценные бумаги и фондовый рынок. М., 1995, էջ 67, 72:

¹⁰ Տե՛ս Ломакин Д.В. Акционерное правоотношение. М., 1997, էջ 54:

¹¹ Տե՛ս Белов В.А. Бездокументарные ценные бумаги: Научно-практический очерк. М., 2001, էջ 14:

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 17:

¹³ Տե՛ս Степанов Д. Вопросы теории и практики эмиссионных ценных бумаг // Хозяйство и право. 2002, N3, էջ 76:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 65:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**SPECIFIC FEATURES OF SECURITIES****Liparit MELIQJANYAN**

*Assistant Professor, YSU Chair of Civil Law,
Candidate of Legal Sciences*

Nowadays the role of securities is of great importance. The Law on the Securities Market of the Republic of Armenia does not stipulate the main specific features of securities, as well as their types and mandatory requisites that signifi-

cantly hinders formation and development of the securities market. Most of the crucial issues are regulated by the government decisions and other sublegislative acts which are often being changed and amended thus negatively reflecting their stability.

Hence it is of great importance to analyze in depth the essence of securities, their immanent features which will be helpful for understanding their nature as an important civil-legal instrument.

ԱՎՏՈՍՈՐԻԼԱՅԻՆ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Լիլիթ ՔԱՍԱԼՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Յուրաքանչյուր պետության տնտեսության զարգացվածության մակարդակը պայմանավորված է տրանսպորտային գործունեության և այն ապահովող ենթակառուցվածքների միջազգային չափանիշներին համապատասխանության աստիճանով:

Տրանսպորտային ծառայությունների տարատեսակներից մեկը փոխադրումն է: Ինչպես նշում է Տ. Կ. Բարսեղյանը¹, փոխադրումները՝ որպես տրանսպորտային ծառայությունների տարատեսակ, դրսևորվում են տարածության մեջ մարդկանց, բեռի և ուղեբեռի տեղափոխության տեսքով ու կազմում են տրանսպորտային տնտեսական գործունեության առանցքը: Ա. Պ. Սերգեյևի և Յու. Կ. Տոլստոյի դիրքորոշման համաձայն՝ փոխադրումների արժամիքը բեռի, ուղեբեռի և (կամ) ուղևորի՝ մեկ վայրից մյուսը փոխադրելու հետևանքով ստեղծվող տնտեսական արդյունքն է²: Համանման կարծիք է արտահայտում նաև ռուս իրավագետ Վ. Վ. Պիլյական³՝ նշելով, որ տրանսպորտային գործունեության՝ որպես նյութական արտադրության բնագավառի գլխավոր առանձնահատկությունը, դրսևորվում է նրանում, որ այն նոր նյութական բարիքներ չի ստեղծում, իսկ նրա արդյունքը տարածության մեջ որոշակի մարդկանց, ուղեբեռի, ինչպես նաև բեռների տեղափոխությունն է:

Փոխադրումները համարվում են տրանսպորտային ծառայությունների ինքնուրույն տարատեսակ: Դրանք բացառապես պայմանագրային իրավահարաբերություններ են, որոնք ծագում են պայմանագրի

նագրի առանձին և ինքնուրույն տարատեսակի՝ փոխադրման պայմանագրի հիման վրա: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 854-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բեռների, ուղևորների և ուղեբեռների փոխադրումն իրականացվում է փոխադրման պայմանագրի հիման վրա»: Հարկ է նշել, որ քաղաքացիական իրավունքի տեսաբանների կողմից փոխադրման պայմանագրին բավականին մեծ ուշադրություն է դարձվում: Դրա հետ մեկտեղ՝ փոխադրման հարաբերությունները կարգավորող պայմանագրերի համակարգում շատ իրավագետներ կարևոր տեղ են հատկացնում հենց ավտոմոբիլային բեռնափոխադրման պայմանագրին⁴: Ուստի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավտոմոբիլային բեռնափոխադրման պայմանագիրը փոխադրման պայմանագրի տարատեսակ է, և որ գրեթե բացակայում են այն իրավական նորմերը, որոնք նվիրված են դրա առանձին կարգավորմանը, հարկ ենք համարում ներկայացնել փոխադրման պայմանագրի համատեքստում ավտոմոբիլային բեռնափոխադրման պայմանագրի համառոտ իրավական բնութագիրը՝ առանձնահատկություններով հանդերձ: Մեր կարծիքով, դա հնարավորություն կտա ոչ միայն առավել ամբողջական ներկայացնելու խնդրո առարկա պայմանագիրը, այլև հստակ սահմանազատելու այն տրանսպորտային մի շարք ուրիշ պայմանագրերից: Այս առումով տեղին է ռուս իրավագետ Գ. Պ. Սավիչևը, երբ նշում է, որ փոխադրման պայմանագրի ճիշտ իրավաբանական սահմանումն էական նշանակություն ունի տրանսպորտային օրենսդրության կատարելագործման և ունիֆիկացման (միասնականացման) համար⁵:

Այսպիսով, անդրադառնալով ավտոմոբիլային բեռնափոխադրման պայմանագրի՝ որպես փոխադրման պայմանագրի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

տարատեսակի իրավական բնութագիրը ձևավորող առանձնահատկություններին՝ նախ և առաջ հարկ ենք համարում անդրադառնալ դրա ռեալ լինելու հանգամանքին: Մասնավորապես, ըստ մի շարք իրավագետների՝ տրանսպորտային փոխադրման պայմանագրերը, բացառությամբ ֆրախտի և փոխադրումների կազմակերպման պայմանագրերի, ռեալ պայմանագրեր են⁶: Ինչպես նշում է Տ. Կ. Բարսեղյանը, կոնսենսուալ են համարվում այն պայմանագրերը, որոնց կնքման համար բավական է միայն դրա կողմերի համաձայնությունը, **և այն հավաստելու նպատակով [ավելացված է իմ կողմից – Լ.Ք.]** որևէ գործողության կատարում չի պահանջվում: Մինչդեռ ռեալ են այն պայմանագրերը, որոնք կնքված են համարվում, երբ կողմերի փոխադարձ համաձայնության հիման վրա մի կողմը մյուսին իր է հանձնում⁷: Հեղինակը փոխադրման պայմանագիրը, բացառությամբ ֆրախտի (չարտերի) պայմանագրի (որի կատարման միջոց ավտոմոբիլային տրանսպորտը չի հանդիսանում), համարում է ռեալ պայմանագիր⁸: Այս առնչությամբ հարկ է նշել, որ փոխադրման պայմանագրի կնքումից բացի, ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսվում է նաև այն հավաստող տրանսպորտային բեռնագրի տրամադրման իմպերատիվ պահանջը: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 854-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համապատասխան բեռնափոխադրման պայմանագրի կնքումը հավաստվում է՝ բեռնառաքիչին տրանսպորտային բեռնագիր հանձնելով⁹: Փոխադրման պայմանագիրը որպես ռեալ պայմանագիր է բնութագրել նաև Ս. Յու. Մորոզովը¹⁰, ով արդարացիորեն նշում է, որ, բացառությամբ ֆրախտի պայմանագրի, փոխադրման պայմանագիրը համարվում է բացառապես ռեալ պայմանագիր, քանի որ այն կնքելու համար բավարար չէ պայմա-

նագրի առարկայի վերաբերյալ միայն կողմերի փոխադարձ համաձայնությունը: Ինչպես նշում է հեղինակը, պայմանագիրը կարող է կնքված համարվել բեռը փոխադրողին հանձնելու պահից, և նման պահանջը, առանց որևէ տարակարծության, օրենսդրական ամրագրում է ստացել¹¹: Եվ իսկապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 855-րդ հոդվածի 2-րդ մասով ուղղակիորեն պահանջվում է, ի հավաստումն բեռնափոխադրման պայմանագրի կնքման վերաբերյալ կողմերի կամաարտահայտության դրսևորման, տրամադրել նաև տրանսպորտային բեռնագիր: Վ. Ա. Եգիազարովը¹² փոխադրման պայմանագրերը որակում է որպես ռեալ և կոնսենսուալ պայմանագրեր: Մասնավորապես, ըստ հեղինակի՝ փոխադրման պայմանագիրը համարվում է կոնսենսուալ, եթե փոխադրողը պարտավորվում է տրանսպորտային միջոցը տրամադրել ավելի վաղ, քան բեռն իրեն վստահելն ու հանձնելը: Վերջին դեպքի առնչությամբ հեղինակը վկայակոչում է ֆրախտի կամ չարտերի պայմանագրերը¹³: Փոխադրման և մասնավորապես ավտոմոբիլային բեռնափոխադրման պայմանագրի ռեալ լինելու մասին իր դիրքորոշումն է արտահայտել նաև Վ. Վ. Վիտորյանսկին՝ ներկայացնելով վերը նշված պատճառաբանությունների հետ նույնաբովանդակ հիմնավորումներ¹⁴:

Փոխադրման պայմանագրի մյուս կարևոր առանձնահատկությունը դրա հատուցելի լինելն է¹⁵: Նշված դիրքորոշումը, նախ և առաջ, հիմնավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 855-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն որի՝ «Բեռի փոխադրման պայմանագրով փոխադրողը պարտավորվում է առաքողի կողմից իրեն վստահված բեռը հասցնել նշանակված վայրը և հանձնել բեռն ստանալու համար լիազորված անձին (ստացողին), իսկ առաքողը պարտավորվում է վճարել բեռի փոխադրման համար սահմանված վճարը»: Հատկանշական է, որ նույն իրավական ակտի 439-րդ հոդվածի 1-ին մասի համա-

ծայն՝ «Պայմանագիրը, որով կողմն իր պարտականությունների կատարման համար պետք է վճար կամ այլ հանդիպական կատարում ստանա, հատուցելի է»: Փոխադրման պայմանագրային իրավահարաբերությունների հատուցելիության հատկանիշը յուրահատուկ իրավական ամրագրում է ստացել «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ պարբերությամբ, ըստ որի՝ տրանսպորտային ծառայությունները հատուցելի կամ օրենքով սահմանված կարգով մատուցվող ծառայություններ են: Վերջին արտահայտությունը մեկնաբանելու համար անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին, համաձայն որի՝ կառավարության կամ տեղական ինքնակառավարման մարմինների սահմանած սակագներով, անվճար, զեղչ գներով ուղևորափոխադրումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կրած վնասները փոխհատուցվում են պետական կամ համայնքների բյուջեներից: Ասվածից բխում է, որ եթե անգամ տրանսպորտային փոխադրման ծառայություններից օգտվող անձինք իրենք չեն վճարում փոխադրումների համար, դրանք, միևնույն է, կատարվում են հատուցման դիմաց: Այս առնչությամբ հարկ է նշել նաև, որ եթե ուղևորափոխադրումների մասով ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսվում են փոխադրավարձից լրիվ կամ մասնակի ազատելու դեպքեր, ապա բեռնափոխադրումները բացառապես կատարվում են փոխադրավարձի դիմաց: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 860-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բեռների, ուղևորների և ուղեբեռների փոխադրման համար գանձվում է կողմերի համաձայնությամբ սահմանված փոխադրավարձ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ այլ իրավական ակտերով»: Սույն իրավական դրույթի բովանդակությունը «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքով ամրագրված պահանջների հետ համադրելիս պարզ է դառնում, որ նշված իրավական նորմերով բեռնափոխադրում-

ների համար փոխադրավարձից ազատելու դեպքեր չեն նախատեսվում: Դրա հետ մեկտեղ՝ փոխադրավարձի չափը որոշելու նկատմամբ օրենքով կարող են լրացուցիչ պահանջներ սահմանվել: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 860-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռների, ուղևորների և ուղեբեռների փոխադրավարձի չափերը որոշվում են օրենքով սահմանված կարգով հաստատված սակագնի հիման վրա»: Ուշագրավ է, սակայն, որ Հայաստանի Հանրապետությունում ավտոմոբիլային բեռնափոխադրումներն ընդհանուր օգտագործման տրանսպորտով իրականացնելու պրակտիկա դեռևս չի ձևավորվել:

Ավտոմոբիլային բեռնափոխադրման պայմանագրի հաջորդ կարևոր հատկանիշը պայմանավորված է դրա առարկան կազմող իրավահարաբերությունների մեկ այլ առանձնահատկությամբ, մասնավորապես՝ փոխադրման ծառայություններ մատուցելիս տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ օգտագործողը փոխադրումը կատարում է մասնավոր անձանց տրանսպորտային պահանջարկի (կարիքների) բավարարման համար¹⁶: Հետևապես, խնդրո առարկա իրավահարաբերությունները չեն կարող ծագել, եթե տրանսպորտային տեղափոխությունն իրականացվում է սեփական կարիքների համար¹⁷, օրինակ՝ ընկերության արտադրավայրից արտադրանքն իր պահեստ տեղափոխելիս, անձին պատկանող որոշակի առարկաները սեփական տրանսպորտային միջոցով մի վայրից մեկ այլ վայր տեղափոխելիս և այլն: Միաժամանակ, հաշվի առնելով «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ պարբերության բովանդակությունը՝ հարկ ենք համարում անդրադառնալ այն հարցին, թե փոխադրման ծառայություններից օգտվող սուբյեկտների շարքում միայն ֆիզիկական և իրավաբանական անձանց հիշատակելն արդյո՞ք բացառում է պետության կամ հա-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

մայրքների տրանսպորտային կարիքների համար փոխադրումներ իրականացնելը: Գաղտնիք չէ, որ պետությունը քաղաքացիական հարաբերություններին մասնակցում է տարբեր պետական մարմինների միջոցով: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական մարմինները Հայաստանի Հանրապետության անունից իրենց գործողություններով կարող են գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու պարտականություններ ձեռք բերել և իրականացնել, ինչպես նաև դատարանում հանդես գալ իրենց իրավասության շրջանակներում: Նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է քաղաքացիական իրավահարաբերություններին համայնքների մասնակցության հնարավորությունը: «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ պարբերության համատեքստում խնդիր չի առաջանում, երբ պետական կամ համայնքային տրանսպորտային կարիքների բավարարման նպատակով փոխադրման իրավահարաբերություններին մասնակցում է իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մարմինը: Սակայն, այն դեպքում, երբ քաղաքացիական հարաբերություններին մասնակցում է պետական կազմակերպություն կամ կառույց, որն իրավաբանական անձի կարգավիճակ չունի¹⁸, տվյալ մարմինը դուրս է մնում «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ պարբերությամբ նախատեսված սուբյեկտների շրջանակից: Ասվածը բնավ չի նշանակում, թե պետությունը կամ համայնքները չեն կարող մասնակցել ավտոտրանսպորտային իրավահարաբերություններին: Այսպես, «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի գործողությունը տարածվում է ավտոտրանսպորտային գործունեություն կազմակերպող կամ իրականացնող բոլոր

սուբյեկտների վրա: Վկայակոչված իրավական դրույթից բխում է, որ տրանսպորտային իրավահարաբերություններին իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով մասնակցելու հնարավորությունը պետական մարմինների և համայնքների համար ծագում է, երբ վերջիններս մատուցում կամ կազմակերպում են տրանսպորտային ծառայություններ, սակայն ոչ այն դեպքում, երբ դրանք հանդես են գալիս որպես պատվիրատու կամ բեռն ուղարկող: Նշվածի առնչությամբ ընդհանուր կարգավորում է նախատեսվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով: Սակայն նույն հոդվածի 2-րդ մասով ամրագրվում է, որ նշված քաղաքացիական իրավունքի սուբյեկտների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում կիրառվում են իրավաբանական անձանց մասնակցությունը սահմանող նորմերը, եթե այլ բան չի բխում օրենքից կամ տվյալ սուբյեկտների առանձնահատկություններից: Վերջին դրույթի բովանդակությունը հաշվի առնելով՝ պարզ է դառնում, որ «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքից, մասնավորապես՝ նրա 1-ին հոդվածի 4-րդ պարբերությունից, «այլ բան է բխում»: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունը հաշվի առնելով՝ հնարավոր չէ անգամ «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ պարբերությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասին հակասող ճանաչել¹⁹, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված է տվյալ հակասութ-

յունն ըստ եւթյան ի օգուտ «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի մեկնաբանելու հնարավորությունը: Ստեղծված իրավիճակի լավագույնս շտկման տարբերակը, հավանաբար, կարող է լինել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 2-րդ մասում «եթե այլ բան չի բխում օրենքից» արտահայտության փոխարեն «եթե Հայաստանի Հանրապետության (պետական մարմինների) կամ համայնքների մասնակցությունը քաղաքացիական իրավահարաբերություններին ուղղակիորեն արգելված չէ օրենքով» արտահայտությամբ փոխարինելը: Միաժամանակ, կարծում ենք, որ խնդրո առարկա հարցի կապակցությամբ խմբագրման կարիք ունի նաև «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ պարբերությունը, որն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Տրանսպորտային փոխադրում նշանակում է վճարովի կամ օրենքով սահմանված կարգով փոխադրումների իրականացման ծառայություն, եթե տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ օգտագործողը²⁰ փոխադրումն իրականացնում է ոչ անձնական կամ ոչ ծառայողական օգտագործման նպատակով, այլ սուբյեկտների տրանսպորտային կարիքների (պահանջարկի) բավարարման համար»:

Տրանսպորտային փոխադրման առանձնահատկությունները դրսևորվում են նաև նրանում, որ դրանք երկկողմ (փոխադարձ) հարաբերություններ են, քանի որ իրավահարաբերության կողմերից յուրաքանչյուրի համար առաջանում են թե՛ իրավունքներ և թե՛ պարտականություններ²¹: Տվյալ իրավահարաբերությունները նաև հանդես են գալիս որպես հարաբերական և պարտավորական հարաբերություններ, քանի որ կողմերից յուրաքանչյուրի սուբյեկտիվ իրավունքին համապատասխանում է մյուս կողմի պարտականությունը, և այդ սուբյեկտիվ իրավունքի իրականացումը տեղի է ունենում ոչ թե անմիջականորեն, այլ հարաբերության մյուս մասնակցի միջոցով²²: Մասնավորապես, հաշվի առնե-

լով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 855-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը՝ փոխադրողը կրում է առաքողի կողմից իրեն վստահված բեռը նշանակված վայրը հասցնելու և բեռն ստանալու համար լիազորված անձին (ստացողին) հանձնելու պարտականությունները, իսկ առաքողը՝ բեռի փոխադրման համար սահմանված վարձը վճարելու պարտականությունը: Ընդ որում, պայմանագրի յուրաքանչյուր կողմի պարտականությանը համապատասխանում է կոնտրագենտի՝ պարտավորության կատարում պահանջելու և ստանալու իրավունքը:

Ինչպես վերը նշել ենք, ավտոմոբիլային բեռնափոխադրման երկկողմ իրավահարաբերությունների ծագման հիմքը համապատասխան փոխադրման պայմանագիրն է: Խնդրո առարկա պայմանագրի համառոտ իրավական բնութագիրը ներկայացնելիս չենք կարող չանդարդառնալ դրա վերաբերյալ մի շարք իրավագետների²³ արտահայտած այն դիրքորոշմանը, ըստ որի՝ այն համարվում է երրորդ անձի օգտին կնքվող պայմանագիր: Մասնավորապես՝ առավել հաճախ փոխադրվող բեռն ստանում է ոչ թե բեռն ուղարկողը (առաքողը), այլ նրա կողմից մատնանշված երրորդ անձը, որը փոխադրման պայմանագրային հարաբերությունների կողմ չէ, սակայն հանդես է գալիս որպես փոխադրման պարտավորության կատարումն ընդունող երրորդ անձ, ով, որպես կանոն, բեռն ուղարկողի հետ գտնվում է մեկ այլ պարտավորական հարաբերության մեջ (առուժախ, մատակարարում և այլն)²⁴: Նման հանգամանքը որոշ իրավագետների հնարավորություն է տվել բեռնափոխադրման պայմանագիրը որակելու որպես ոչ միայն երրորդ անձի օգտին կնքվող պայմանագիր, այլև «կատարումը երրորդ անձին հանձնելու մասին պայմանագիր»²⁵: Համաձայն Վ. Վ. Վիտրյանսկիի արտահայտած դիրքորոշման՝ իրավաբանական գրականությունում գոյություն ունի նաև տեսակետ, ըստ որի՝ փոխադրման պայմանագիրը եռա-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

կողմ պայմանագիր է, որում պայմանագրի բոլոր կողմերը ձեռք են բերում ինչպես իրավունքներ, այնպես էլ պարտականություններ: Այս առնչությամբ հեղինակը մատնանշում է Ս. Ի. Բրազինսկիի հետ համահեղինակությամբ շարադրված աշխատությունը²⁶, որտեղ, սակայն, այլ դիրքորոշում է տեղ գտել: Մասնավորապես, տվյալ աշխատությունում բեռն ստացողը փոխադրման իրավահարաբերություններում հիշատակվում է ոչ թե որպես պայմանագրի կողմ, այլ երրորդ անձ²⁷: Այս առումով հարկ ենք համարում նշել, որ պայմանագիրը կարող է բազմակողմ լինել, եթե նրանում մասնակցում են երկուսից ավելի կողմեր²⁸, և այն կնքելու համար անհրաժեշտ է բոլոր կողմերի համաձայնեցված կամքի արտահայտությունը²⁹: Եթե համապատասխան սուբյեկտը պայմանագրի կողմ չէ, նա չի կարող դրա հիման վրա որևէ պարտականություն ստանձնել, սակայն կարող է ձեռք բերել որոշակի իրավունքներ: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 346-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պարտավորությունը պարտականություններ չի ստեղծում որպես կողմ չմասնակցող անձանց (երրորդ անձանց) համար: Օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում պարտավորությունը կարող է կողմերից մեկի կամ երկուսի նկատմամբ իրավունքներ ստեղծել երրորդ անձանց համար»: Հետևապես գտնում ենք, որ ինչպես ավտոմոբիլային բեռնափոխադրման պայմանագիրը, այնպես էլ ցանկացած փոխադրման պայմանագիր եռակողմ համարվել չի կարող, քանի որ նրա կողմերը, այսինքն՝ պայմանագրով սահմանված իրավունքները և պարտականությունները կրող անձինք, միայն առաքողը և փոխադրողն են, մինչդեռ բեռն ստանալու համար լիազորված անձը կամ բեռն ստացողը հանդես է գալիս բացառապես որպես համապատասխան ի-

րավունքներ ձեռք բերած անձ: Բացի դրանից, անհրաժեշտ ենք համարում նշել, որ սույն աշխատության շրջանակներում ուսումնասիրվող ավտոմոբիլային բեռնափոխադրման պայմանագիրը կարող է որակվել որպես երրորդ անձի օգտին կնքվող պայմանագիր, սակայն ոչ բոլոր դեպքերում: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 446-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հոգուտ երրորդ անձի է համարվում այն պայմանագիրը, որում կողմերը սահմանել են, որ պարտապանը պարտավոր է պարտավորությունը կատարել ոչ թե հոգուտ պարտատիրոջ, այլ պայմանագրում նշված կամ չնշված երրորդ անձի, որն իրավունք ունի պարտապանից պահանջելու իր օգտին կատարել պարտավորությունը: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 855-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրողը պարտավորվում է առաքողի կողմից իրեն վստահված բեռը հասցնել նշանակված վայրը և այն հանձնել բեռն ստանալու համար լիազորված անձին (բեռն ստացողին): Նշվածի առնչությամբ չենք կարող չանդդառառալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասին, համաձայն որի՝ մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում է անմիջականորեն ներկայացվողի համար: Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Նշված հոդվածների բովանդակությունը համադրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 855-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակության հետ՝ կարելի է եզրակաց-

նել, որ այն դեպքում, երբ որպես բեռն ստացող սուբյեկտ է հանդես գալիս բեռն ուղարկողի լիազորած անձը, ապա համապատասխան իրավունքները ծագում են ոչ թե երրորդ անձի, այլ բեռն ուղարկողի համար: Հետևապես կարծում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 855-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը խմբագրման կարիք ունի: Մասնավորապես՝ նշված հոդվածի համաձայն՝ առաքողի (բեռն ուղարկողի) լիազորված անձը, ով, համաձայն օրենքի պահանջի, պետք է հանդես գա նույն առաքողի անունից, և բեռն ստացողն օժտված է նույն կարգավիճակով, ինչը ոչ միայն հակասում է նույն հոդվածի տրամաբանությանը և փոխադրման պայմանագրի էությանը, այլև ակնհայտորեն խախտում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, քանի որ բեռն ստացողը, ով պայմանագրի կողմ է, չի կարող հանդես գալ պայմանագրի կողմերից մեկի՝ առաքողի լիազորված անձի կարգավիճակով: Հետևապես առաջարկում ենք վկայակոչված հոդվածում նշված երկու սուբյեկտներին հիշատակել այլընտրանքային տարբերակով՝ փոխադրողի համար նախատեսելով «բեռը նշանակված վայր հասցնելու և այն բեռն ստանալու համար լիազորված անձին **կամ առաքողի վկայակոչած երրորդ անձին (ստացողին) հանձնելու** պարտականությունը»:

Ինչպես պարզ դարձավ վերը նշվածից, երրորդ անձը փոխադրման պայմանագրի կողմ է, այդ իսկ պատճառով նշված պայմանագրի փոփոխման կամ լուծման իրավունքը պատկանում է պայմանագրի կողմերին՝ առաքողին և փոխադրողին, թեև տվյալ իրավունքի իրականացման համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսվում են որոշ յուրահատկություններ: Մասնավորապես, նշված իրավական ակտի 446-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ երրորդ անձի կողմից պայմանագրով իր իրավունքից օգտվելու ցանկությունը պարտապանին հայտնելու պահից կողմերն առանց երրորդ անձի համաձայնության չեն

կարող լուծել կամ փոփոխել իրենց կնքած պայմանագիրը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով: Յուրահատկություններ են նախատեսվում նաև բեռն ստանալու իրավունքից հրաժարվելու առնչությամբ, մասնավորապես՝ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ երրորդ անձը հրաժարվում է պայմանագրով իրեն տրամադրված իրավունքից, պարտատերը կարող է օգտվել այդ իրավունքից, եթե դա չի հակասում օրենքին, այլ իրավական ակտերին և պայմանագրին:

Ավտոմոբիլային բեռնափոխադրման պայմանագրի, ինչպես ցանկացած փոխադրման պայմանագրի մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ դրա կարգավորման առարկան սահմանելիս պայմանագրի ազատությունը սահմանափակ բնույթ ունի, քանի որ փոխադրման հարաբերությունները կարգավորող իրավական նորմերն աչքի են ընկնում առավել իմպերատիվ պահանջներով՝ պայմանավորված կարգավորման առարկան կազմող բնագավառի կարևորությամբ և յուրատիպությամբ: Ինչպես նշում է Տ. Կ. Բարսեղյանը, փոխադրման հարաբերությունների առանձնահատուկ օրենսդրական կարգավորումը բացատրվում է այդ հարաբերությունների առանձնահատկությամբ, այն իրողությամբ, որ փոխադրման իրավահարաբերությունները տրանսպորտային հարաբերությունների այն բաղադրամասն են, որոնց իրականացման համար անհրաժեշտ է կատարել տրանսպորտի շահագործման բարդ և բազմաբնույթ այլ աշխատանքներ՝ պահպանել տրանսպորտի աշխատանքի տեխնոլոգիական առանձնահատկությունները, տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունը և այլն³⁰: Տրանսպորտային բնագավառում իմպերատիվ բազմաթիվ պահանջների առկայությունը հանգեցնում է նրան, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածով ամրագրված պայմանագրի ա-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

զատության սկզբունքը խնդրո առարկա բնագառավում սահմանափակ կիրառություն է ստանում, քանի որ, հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի պահանջը, այն ենթակա է կիրառման միայն օրենքին չհակասելու պայմանով: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (իմպերատիվ նորմերին): Ի լրումն վերը նշված քաղաքացիաիրավական ընդհանուր նորմերի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 854-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսվում է, որ տրանսպորտի առանձին տեսակներով բեռների, ուղևորների և ուղեբեռների փոխադրման պայմանները, ինչպես նաև կողմերի պատասխանատվությունն այդ փոխադրումների համար որոշվում են նրանց համաձայնությամբ, եթե այլ բան սահմանված չէ քաղաքացիական օրենսգրքով, տրանսպորտային օրենսգրքերով, այլ օրենքներով և դրանց համապատասխան ընդունված կանոններով: Հետևապես՝ տրանսպորտային հարաբերությունների բնագավառում պայմանագրի ազատության սկզբունքը, պայմանավորված տրանսպորտային գործունեության առանձնահատկություններով, պարփակված է որոշակի շրջանակներով: Դրա հետ մեկտեղ, փոխադրման պայմանագրի կողմերը

պայմանագրի պայմանների վերաբերյալ ազատ կամահայտնությամբ կարող են համաձայնության գալ, երբ այդ պայմանները սահմանող նորմերն ունեն դիսպոզիտիվ բնույթ³¹: Փոխադրման իրավահարաբերություններում պայմանագրի ազատության սկզբունքի սահմանափակման դեպքերը նախատեսված են նախ և առաջ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածով: Մասնավորապես, նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման: Քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար: Նույն հոդվածի 3-րդ մասով ամրագրվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում ապրանքների, ծառայությունների և ֆինանսական միջոցների ազատ տեղաշարժման սկզբունքը: Դրա հետ մեկտեղ, սակայն, նույն իրավական դրույթով նախատեսվում է, որ ապրանքների և ծառայությունների տեղաշարժման սահմանափակումներ կարող են մտցվել օրենքին համապատասխան, եթե դրանք անհրաժեշտ են մարդկանց անվտանգության ապահովման, կյանքի և առողջության պաշտպանության, բնության ու մշակութային արժեքների պահպանության համար³²:

Փոխադրման իրավահարաբերություններին բնորոշ մյուս առանձնահատկությունը փոխադրողի պատասխանատվության սահմանափակ բնույթն է³³, ինչն իմպերատիվ պահանջի ինքնուրույն դրսևորում է: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի

416-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորությունների առանձին տեսակների և գործունեության որոշ տեսակների հետ կապված պարտավորությունների համար օրենքով կարող է սահմանվել վնասները ոչ լրիվ հատուցելու իրավունք (սահմանափակ պատասխանատվություն): Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 863-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փոխադրողի՝ օրենքով սահմանված պատասխանատվությունը սահմանափակելու կամ վերացնելու մասին համաձայնություններն անվավեր են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Ասվածից բխում է, որ փոխադրողի պատասխանատվությունը կարող է սահմանափակվել բացառապես օրենքով սահմանված դեպքերում: Հարկ է նաև նշել, որ պատճառված վնասի համար սահմանափակ պատասխանատվությունը կարող է դրսևորվել ինչպես միայն որոշակի տեսակի վնասներ հատուցելու եղանակով (օրինակ՝ բացառելով բաց թողնված օգուտը հատուցելու հնարավորությունը), այնպես էլ վնասը միայն որոշակի արժեքի չափով հատուցելով: Այսպես, օրինակ, բեռի կորստի կամ պակասորդի դեպքում փոխադրողը պարտավորվում է բեռի արժեքի չափով հատուցում տրամադրել, սակայն եթե խոսքը արժեքի հայտարարմամբ փոխադրման հանձնված բեռի կորստի մասին է, ապա հատուցումը տրվում է միայն բեռի հայտարարված արժեքի չափով³⁴: Բացի դրանից, բեռի փոխադրման ժամանակ բեռի վնասվածքի դեպքում փոխադրողը պարտավոր է պատճառված վնասը հատուցել այն գումարի չափով, որով նվազել է դրա արժեքը, իսկ վնասված բեռի կամ ուղեբեռի վերանորոգման անհնարինության դեպքում՝ դրա արժեքի չափով³⁵: Սակայն փոխադրողի՝ պատճառված իրական վնասի հատուցման պարտականությունը դրանով չի սահմանափակվում, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 866-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բեռի կամ ուղեբեռի կորստի, պակասորդի և վնասվածքի

հետևանքով առաջացած վնասի հատուցման հետ մեկտեղ փոխադրողն առաքողին (ստացողին) վերադարձնում է փոխադրվածը, որը զանձվել էր կորած, պակասած կամ վնասված բեռի կամ ուղեբեռի փոխադրման համար, եթե այն չի մտնում բեռի արժեքի մեջ: Հատկանշական է նաև, որ ինչպես գործարարական գործունեության ցանկացած տեսակի դեպքում, փոխադրումների դեպքում ևս սահմանվում են պատասխանատվությունից ազատվելու դեպքեր: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված ընդհանուր կանոնի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Այս առնչությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 866-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ փոխադրողը պատասխանատվություն է կրում փոխադրվող բեռի կորստի, պակասորդի կամ վնասվածքի համար, որը տեղի է ունեցել այն փոխադրման համար ընդունելուց հետո մինչև բեռն ստացողին կամ այն դրա համար լիազորված անձին հանձնելը, եթե չի ապացուցում, որ համապատասխան կորուստը, պակասորդը, վնասվածքը տեղի են ունեցել այնպիսի հանգամանքներում, որոնք փոխադրողը չէր կարող կանխել, և որոնք վերացնելն իրենից կախված չէր:

Ավտոմոբիլային բեռնափոխադրման պայմանագրի՝ որպես փոխադրման պայմանագրի տարատեսակի իրավական բնորոշումն արտացոլող առանձնահատկությունների առնչությամբ չենք կարող նաև չանդրադառնալ դրա՝ հրապարակային պայմանագիր լինելու վիճելի հարցին: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օ-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

րենսգրքի 859-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ընդհանուր օգտագործման տրանսպորտով փոխադրման պայմանագիրը հրապարակային պայմանագիր է: Միաժամանակ, նույն հոդվածի 1-ով նախատեսվում է, որ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող փոխադրումը համարվում է ընդհանուր օգտագործման տրանսպորտով կատարված, եթե օրենքից, այլ իրավական ակտերից կամ այդ կազմակերպությանը տրված թույլտվությունից (լիցենզիայից) բխում է, որ այդ կազմակերպությունը պարտավոր է բեռներ, ուղևորներ և ուղեբեռներ փոխադրել ցանկացած քաղաքացու կամ իրավաբանական անձի պահանջով: Ընդհանուր օգտագործման տրանսպորտով փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ցանկը հրապարակվում է օրենքով սահմանված կարգով»³⁶:

Ցավոք, թե՛ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը և թե՛ ՀՀ տրանսպորտային օրենսդրությունը որևէ կերպ չեն կարգավորում այն հարցերը, թե ինչ է ընդհանուր օգտագործման տրանսպորտը, և որ դեպքերում է փոխադրումը համարվում կատարված ընդհանուր օգտագործման տրանսպորտով: Այսպես, «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 7-րդ պարբերության համաձայն՝ ընդհանուր օգտագործման տրանսպորտը բնորոշվում է որպես տրանսպորտային միջոց կամ տրանսպորտային միջոցի շարժակազմ, որով փոխադրող կազմակերպությունը պարտավոր է ուղևորների, ուղեբեռի և բեռների վճարովի փոխադրում իրականացնել ցանկացած քաղաքացու կամ իրավաբանական անձի պահանջով և փոխադրման պայմանագրով: Իր հերթին, «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ պարբերությամբ նույնաբովանդակ սահմանում է անրագրված: Նշված իրավական նորմերի համեմատությունից պարզ է

դառնում, որ դրանցում տեղ է գտել տրանսպանական շրջապտույտ, որը հանգեցրել է օրենքի բացի առաջացման: Այլ կերպ ասած՝ իրավական բնորոշման նման «փակ շղթայի դեպքում» հնարավոր չէ ո՛չ սահմանել «ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցը», ո՛չ էլ, առավել ևս, պարզել, թե որ դեպքերում է տրանսպորտային կազմակերպությունը պարտավոր փոխադրում իրականացնել: Ուստի, նպատակ ունենալով պարզել՝ արդյոք փոխադրման պայմանագիրը կարող է հրապարակային պայմանագիր համարվել, հարկ ենք համարում անդրադառնալ հրապարակային պայմանագրին բնորոշ հատկանիշներին: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 442-րդ հոդվածի բովանդակությունից կարելի է բխեցնել հրապարակային պայմանագրին բնորոշ հետևյալ հատկանիշները՝ ա/ հրապարակային պայմանագրի կողմերից մեկը պարտադիր պետք է լինի առևտրային կազմակերպություն³⁷, բ/ նշված առևտրային կազմակերպությունը պայմանագրի հիման վրա պարտավորվում է ապրանքներ վաճառել, աշխատանքներ կատարել կամ ծառայություններ մատուցել, ընդ որում՝ կազմակերպությունը, իր գործունեության բնույթով պայմանավորված, պետք է դա կատարի յուրաքանչյուրի նկատմամբ, ով կղիմի իրեն, գ/ հրապարակային պայմանագիրը կնքելու դեպքում առևտրային կազմակերպությունն իրավունք չունի որևէ անձի նախապատվություն տալու այլ անձի հանդեպ, դ/ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գինը, ինչպես նաև հրապարակային պայմանագրի այլ պայմանները բոլոր սպառողների համար սահմանվում են միանման, ե/ սպառողին ապրանքներ տրամադրելու, նրա համար աշխատանքներ կատարելու և նրան ծառայություններ մատուցելու հնարավորության դեպքում առևտրային կազմակերպությունը չի կարող հրաժարվել հրապարակային պայմանագիր կնքելուց, գ/ առևտրային կազմակերպության կողմից հրապարակա-

յին պայմանագիրը կնքելուց անհիմն կերպով խուսափելու դեպքում նա կարող է դատական կարգով պարտավորեցվել կնքելու պայմանագիրը, ինչպես նաև հատուցելու պայմանագիրը կնքելուց անհիմն խուսափելու հետևանքով մյուս կողմին պատճառված վնասները. է/ հրապարակային պայմանագրով նախատեսված գինը կամ դրա պարտադիր պայմանները սպառողների համար ոչ միատեսակ լինելու դեպքում չհամապատասխանող պայմաններն առաջինն են:

Հարկ է նշել, որ իրավագետները փոխադրման պայմանագիրը հիմնականում դասում են հրապարակային պայմանագրերի թվին, ընդ որում՝ ոչ միայն այն դեպքում, երբ փոխադրումն իրականացվում է ընդհանուր օգտագործման տրանսպորտով¹: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրապարակային պայմանագրի էական առանձնահատկությունը դրա գնի հրապարակումն է և դրա միանման լինելը այն կնքելու համար դիմած բոլոր սուբյեկտների համար, ապա կարծում ենք, որ եթե տրանսպորտային փոխադրման ծառայություն մատուցող ընկերությունը հրապարակել է փոխադրավարձի չափը, ապա այն այլևս հնարավորություն չունի նույն պայմաններով փոխադրումն իրականացնել այլ գնով, ուստի պարտավորվում է նույն պայմանների դեպքում նույն գնով հրապարակային փոխադրման պայմանագիր կնքել իրեն դիմած ցանկացած անձի հետ: Ընդ որում, տվյալ դեպքում նշանակություն չունի այն հանգամանքը՝ արդյոք փոխադրումն իրականացվում է ընդհանուր օգտագործման տրանսպորտով, թե ոչ: Այսպես, ավտոմոբիլային բեռնափոխադրումը կարող է իրականացվել ընդհանուր օգտագործման

տրանսպորտով՝ առանց փոխադրավարձի հրապարակման՝ այն համաձայնեցնելով միայն փոխադրողի և համապատասխան առաքողի միջև, և հրապարակային պայմանագիր չհամարվել, քանի որ առկա չեն դրան բնորոշ՝ վերը նշված մի շարք այլ հատկանիշներ:

Վերոշարադրյալ բոլոր առանձնահատկությունները հաշվի առնելով՝ կարծում ենք, որ ավտոմոբիլային բեռնափոխադրման պայմանագիրը կարող է իրավաբանորեն բնութագրվել որպես ավտոտրանսպորտային բնագավառի այնպիսի երկկողմ, ռեալ և հատուցելի պայմանագիր, որի հիման վրա բեռը փոխադրողը պարտավորվում է բեռն առաքողի կողմից իրեն վստահված և հանձնված բեռն ավտոմոբիլային տրանսպորտով հասցնել նշանակված վայրը և այն հանձնել բեռն ստացողին կամ վերջինիս կամ իր կողմից լիազորված անձին՝ վերջիններիս տրանսպորտային կարիքների բավարարման նպատակով, իսկ բեռն առաքողը պարտավորվում է վճարել ավտոմոբիլային բեռնափոխադրման համար սահմանված փոխադրավարձը: Ընդ որում, նշված պայմանագրի կնքումը հավաստվում է բեռն առաքողին ավտոտրանսպորտային բեռնագիր հանձնելով:

Հրապարակային պայմանագրին բնորոշ հատկանիշների առկայության դեպքում, ներառյալ՝ երբ փոխադրողը հրապարակում է բեռնափոխադրման համար պահանջվող վճարը՝ փոխադրավարձը, ավտոմոբիլային բեռնափոխադրման պայմանագիրը համարվում է հրապարակային: Բացի դրանից, երբ բեռն ստացողը ոչ թե բեռն առաքողի լիազորված անձն է, այլ երրորդ անձ (կամ վերջինիս լիազորված անձը), ապա պայմանագիրը համարվում է նաև երրորդ անձի օգտին կնքվող պայմանագիր:

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երկրորդ մաս, խմբագիրներ՝ Պետրոսյան Ռ. Գ., Ղարախանյան Գ. Հ., գլուխ 44-ի հեղինակ՝ Բարսեղյան Ս. Կ., Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2001 թ., էջ 369:

² Տե՛ս Гражданское право, учебник, под ред.

А. П. Сергеева, Ю. К. Толстого, М., изд.-во “Проспект”, 1999 г., էջ 373, տե՛ս նաև Комментарий к Гражданскому кодексу, том 1, части 1 и 2 ГК, 2-ое издание, под ред. Т. Е. Абовой, А. Ю. Кабалкина, издательство “Юрайт”, էջ 642:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- ³ Տե՛ս Пиляева В. В., Гражданское право в вопросах и ответах, учебное пособие, изд.-во «КНОРУС», М., 2009 г., էջ 242:
- ⁴ Տե՛ս Хаснутдинов А. И., Вспомогательные договоры на транспорте, изд.-во Иркутского университета, Иркутск, 1994 г., էջ 63:
- ⁵ Տե՛ս Савичев Г. П., Проблемы эффективности законодательства в транспортных обязательствах, Издательство Московского университета, М., 1979 г., էջ 18:
- ⁶ Аллавердов М. А., Савичев Г. П. Договоры о перевозках грузов, издательство «Юридическая литература», М., 1967 г., էջեր 17-25, Витрянский В. В., Договор перевозки, издательство «Статут», М., 2001 г., էջեր 68-72, 248:
- ⁷ Տե՛ս Բարսեղյան Ս. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2004 թ., էջ 391:
- ⁸ Տե՛ս ՀՀ քաղաքացիական իրավունք, երկրորդ մաս, նշված աշխատության էջ 379:
- ⁹ Ավտոմոբիլային բեռնափոխադրումների դեպքում հանդես է գալիս ավտոտրանսպորտային բեռնագիրը: Այս մասին տե՛ս ՀՀ քաղաքացիական իրավունք, երկրորդ մաս, էջ 392:
- ¹⁰ Տե՛ս Ա. Յու. Մորոզովի, նշված աշխատությունը, էջեր 13-14:
- ¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 54, նաև՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 855-րդ հոդվածի 2-րդ մասը:
- ¹² Տե՛ս Егизаров В. А., Транспортное право, учебник для вузов (3-ье издание), М., 2002 г., էջ 47:
- ¹³ Տե՛ս նույն տեղը:
- ¹⁴ Տե՛ս Քաղաքացիական իրավունք, հատոր չորրորդ՝ Ե. Ա. Սուխանովի խմբագրությամբ, նշված աշխատության էջ 126, Վ. Վ. Վիտրյանսկիի նշված աշխատության էջ 248, Վ. Վ. Վիտրյանսկիի և Մ. Ի. Բրազինսկիի նշված աշխատության էջեր 254-255:
- ¹⁵ Տե՛ս Пиляева В. В., Комментарий к гражданскому кодексу Российской Федерации (постатейный), часть вторая, издательство «Кнорус», М., 2005 г., էջ 506, Витрянский В. В., Договор перевозки, издательство «Статут», М., 2001 г., էջ 248, Курноскова О. Г., Договоры на транспорте, образцы, рекомендации, комментарии, издательство «Альфа-Пресс», М., 2005 г., էջ 37:
- ¹⁶ Տե՛ս «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ պարբերությունը:
- ¹⁷ Տե՛ս Ա. Յու. Մորոզովի նշված աշխատության էջ 11:
- ¹⁸ Տե՛ս Ս. Կ. Բարսեղյան, նշված աշխատությունը, էջ 152:
- ¹⁹ Տե՛ս նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետը, համաձայն որի՝ օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին:
- ²⁰ Պատահական չէ, որ տվյալ իրավական նորմում փոխադրման ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող անձանց շարքում նշված չէ տրանսպորտային միջոցը տիրապետող անձը, քանի որ բացառապես տիրապետման իրավունքի առկայության դեպքում համապատասխան անձը չի կարող օգտագործել տրանսպորտային միջոցը, հետևաբար նաև չի կարող տվյալ տրանսպորտային միջոցով փոխադրման ծառայություններ մատուցել:
- ²¹ Տե՛ս ՀՀ քաղաքացիական իրավունք, երկրորդ մաս, էջ 379, Ա. Յու. Մորոզով, նշված աշխատությունը, էջ 54:
- ²² Տե՛ս Բարսեղյան Ս. Կ., նշված աշխատությունը, էջեր 57-59:
- ²³ Տե՛ս ՀՀ քաղաքացիական իրավունք, երկրորդ մաս, էջ 379, Ա. Յու. Մորոզով, նշված աշխատությունը, էջ 55, Մ. Ի. Բրազինսկիի և Վ. Վ. Վիտրյանսկիի, նշված աշխատությունը, էջ 294, Քաղաքացիական իրավունքի մեկնաբանություն՝ Ս. Ե. Արովայի և Ա. Յու. Կաբալիցայի խմբագրությամբ, էջ 642:
- ²⁴ Տե՛ս Гражданское право, том IV, 3-ье издание, под ред. Е. А. Суханова, автор главы — В. В. Витрянский, издательство «Волтерс Клувер», М., 2006 г., էջ 134, Брагинский М. И., Клейн Н. И., Левшина Т. Л. и др., Гражданское право России / Обязательственное право: курс лекций // отв. ред. Садиков О. Н., М., 2004 г., էջ 251:
- ²⁵ Տե՛ս նույն տեղը: Տե՛ս նաև Яичков К. К., Договор железнодорожной перевозки грузов по советскому праву, М., 1958 г., էջ 144:
- ²⁶ Տե՛ս Մ. Ի. Բրազինսկիի և Վ. Վ. Վիտրյանսկիի, նշված աշխատությունը, էջ 294:

²⁷ Տե՛ս նույն տեղը:

²⁸ Տե՛ս Տ. Կ. Բարսեղյան, նշված աշխատությունը, էջ 384:

²⁹ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասը և 290-րդ հոդվածի 2-րդ մասը:

³⁰ Տե՛ս ՀՀ քաղաքացիական իրավունք, երկրորդ մաս, նշված աշխատության էջ 379:

³¹ Տե՛ս նույն տեղը, տե՛ս նաև Օ. Գ. Կուրնոսկինա, նշված աշխատությունը, էջ 37:

³² Փոխադրման պայմանագրի բովանդակությանը ներկայացվող իմպերատիվ պահանջների վերաբերյալ մանրամասն տե՛ս նաև Ճյուղային իրավական ակտերը, այդ թվում՝ «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ պարբերությունը, 4-րդ, 16-րդ, 17-րդ, 23-րդ, 24-րդ և այլ հոդվածները, «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 8-րդ, 19-րդ, 20-րդ, 26-28-րդ և այլ հոդվածները, ինչպես նաև այլ իրավական նորմեր:

³³ Տե՛ս Ա. Յու. Սորոգով, նշված աշխատությունը, էջ 9, Ерпылева Н. Ю., Актуальные проблемы теории и практики международного транспортного права // журнал “Адвокат”, N 2, 2003 г. (февраль), էլեկտրոնային տարբերակն՝ ըստ http://sklad-zakonov.narod.ru/Vlad_st/mtp.htm#Правовое_регулирование_международных_автомобильных_перевозок հղումի:

³⁴ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 866-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը:

³⁵ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 866-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը:

³⁶ Չնայած այն հանգամանքին, որ ընդհանուր օգտագործման տրանսպորտով ավտոմոբիլային բեռնափոխադրումների իրականացման հնարավորությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և Ճյուղային օրենսդրությամբ իրավական ամրագրում է ստացել, այն իրավական լուրջ հիմքեր և կանոնակարգում չունի: Այսպես, օրինակ, ՀՀ գործող օրենսդրությամբ ամրագրված չեն ավտոմոբիլային բեռնափոխադրումներն ընդհանուր օգտագործման տրանսպորտով իրականացնելու համար նրցույթին մասնակցելուն և այն անցկացնելուն ներկայացվող որևէ իրավական պահանջներ, բացի դրանից՝ նշված գործունեությունը լիցենզավորման ենթակա չէ: Խնդրո առարկա բնագավառում չեն սահմանվում փոխադրավարձի սակագներ, չկա փոխադրավարձի նկատմամբ պետական հսկողության իրականացման որևէ

իրավական հիմք և այլն: Հավանաբար իրավական սակավ կարգավորվածության, ինչպես նաև գործարարական գործունեության բնագավառում համապատասխան շահագրգռվածության և տնտեսական հիմնավորվածության բացակայության պատճառով է, որ ավտոմոբիլային բեռնափոխադրումները պրակտիկայում ընդհանուր օգտագործման տրանսպորտով չեն իրականացվում:

³⁷ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վկայակոչված նորմով հրապարակային պայմանագրի կողմերից մեկի՝ ապրանք վաճառողի, ծառայություն մատուցողի կամ աշխատանք կատարողի կարգավիճակն անհարկի սահմանափակվել է: Կարծում ենք, որ որպես համապատասխան պայմանագրի կողմ առնվազն կարող է հանդես գալ նաև անհատ ձեռնարկատերը, ով, համաձայն «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին պարբերության, այն ֆիզիկական անձն է, ով իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնելու գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է: Նշվածի համար հիմք է հանդիսանում նույն օրենքի 1-ին հոդվածի 4-րդ պարբերությունը, համաձայն որի՝ անհատ ձեռնարկատիրոջ ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ կիրառվում են օրենքով առևտրային կազմակերպություններ համարվող իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող կանոնները, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից կամ իրավահարաբերության էությունից: Ավելին, կարծում ենք, որ որպես խնդրո առարկա պայմանագրի կողմ կարող է հանդես գալ քաղաքացիական իրավունքի ցանկացած սուբյեկտ (ինչպես նաև՝ գործարարական իրավունքի սուբյեկտ համարվող հասարակ ընկերակցությունը), եթե վերջինիս կողմից ման գործունեության իրականացումն ուղղակիորեն արգելված չէ օրենքով:

³⁸ Տե՛ս Ա. Յու. Սորոգով, նշված աշխատությունը, էջ 54, Օ. Գ. Կուրնոսկինա, նշված աշխատությունը, էջ 37, Վ. Վ. Վիտրյանսկի, նշված աշխատությունը, էջ 264 և այլն:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**GENERAL LEGAL DESCRIPTION OF THE ROAD
CARGO CARRIAGE CONTRACT****Lilit KAMALYAN**

*PhD student, Civil Law Chair,
Law Faculty, Yerevan State University*

The present scientific article covers the problem of the most complete legal description of one of the types of carriage contracts – the road cargo carriage contract. All the main features of the researched contract are divulged more fully and in detail and they are subject to deep and comprehensive private-law analysis with regard to that.

Within the framework of the present article respective norms of the Law of the

Republic of Armenia “On Road Transport”, the Law of the Republic of Armenia “On Transport” and the Civil Code of the Republic of Armenia have been compared and studied. Also theoretical researches in the Civil Law of the Republic of Armenia and the Russian Federation have served as a ground for the article.

Under the research of problematic aspects in this area a conclusion may be made that the legislation of the Republic of Armenia should be amended by respective legal norms governing the features of the road cargo carriages contract.

ВОЗЗРЕНИЯ ПРЕДСТАВИТЕЛЕЙ КЛАССИЧЕСКОЙ ЕВРОПЕЙСКОЙ ФИЛОСОФИИ НА ЮРИДИЧЕСКУЮ ПРИРОДУ АВТОРСКОГО ПРАВА

Евгения НИКОГОСЯН

*Соискатель кафедры гражданского и
гражданско-процессуального права
Российско-Армянского (Славянского)
университета*

Некоторые идеи, на которых строится современное авторское право, пришли из очень отдаленных времен. Прежде всего это касается представления об особой связи между произведением и его создателем. Заимствование чужого произведения еще в давние времена рассматривалось морально предосудительным, а искажение произведения осуждалось общественным мнением в античной Греции и Риме, а еще намного раньше и в Индии¹.

До изобретения книгопечатания литературное произведение не могло иметь того имущественного интереса, которое оно приобрело после. Механическое воспроизведение сочинений состояло в то время в простой переписке их особыми писцами. При таком положении дел, естественно, автор не мог рассчитывать на какое-либо денежное вознаграждение за свое сочинение и должен был довольствоваться тем, что находился издатель, согласившийся принять на себя все издержки по переписке данного произведения.

Вопрос об авторском праве стал актуальным с момента революции в области техники воспроизведения, которую вызвали открытие искусства книгопечатания и искусства гравюры по дереву и меди. С изобретением в 1440 г. Иоханном Сулченохом Генсфлейшем (по

прозванию Гутенберг) книгопечатания стало возможным быстро и дешево распространять экземпляры сочинений в большом количестве. Изобретение книгопечатания совпало с эпохой возрождения, когда сочинения классиков пользовались большим спросом. На первых порах главнейшим образом и печатались сочинения классиков. Но в то же время появилась и самовольная перепечатка чужих сочинений (контрафакция)², нанося большой вред не только уполномоченным авторами издателям, но и самим писателям, так как ценность их сочинений в виду возможности и безнаказанности перепечатки, все более и более понижалась.

При полнейшем отсутствии в тогдашних законодательствах каких-либо определений на счет авторского права и при совершенном молчании о ней римского права попытки тогдашних ученых мотивировать неправомерность контрафакции ограничивались лишь указаниями на ее несоответствие требованиям естественного права и справедливости³. Так, Агасфер Фрич, Адриан Бейер, а за ним и Бирнбаум утверждают, что несправедливо и противно христианским догматам предвосхищать ожидаемую другим выгоду, а Бейер прибавляет, что отсутствие привилегии на исключительное издание книги еще не указывает на отсутствие всякого права, помощи, греха и наказания. «Естественное право, говорит он, разум указывает всякому не трогать того, что принадлежит другому. Из того, что человеческая злоба, а отчасти глупость вынудили правительство запретить воровство под страхом наказания,

ԲԱՆԴԱՅԻՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

не следует еще, что до этого воровство было законно». Исходя из того же воззрения, Лейпцигский юридический факультет в своем мнении от 1706 года приходит к заключению, что перепечатка даже непривилегированных книг есть воровство: «Книга, все равно, издает ли автор ее сам, или продает ее книгопродавцу, есть истинная и законная собственность первого или последнего. Подобно тому как вообще никто не имеет права отнимать принадлежащее другому против его воли, так точно несправедливо без всякого права отнимать у другого книгу посредством контрафакции. Если же автор и добивается привилегии, то в этом отнюдь нельзя усматривать впервые выраженное им желание приобрести собственность на свою книгу, а из этого скорее следует, что он желает иметь готовую защиту (paratam executionem)»⁴.

Развитие же законодательства в области авторского права сопровождалось научным анализом прав авторов в отношении их произведений, в результате чего учеными юристами и философами были разработаны многочисленные теории вновь зародившегося права. Остановимся на одной из них, которая относит авторское право к личному праву. Данная теория основана на идее, что литературные и художественные произведения являются частью личности их создателей. Отсюда авторы обладают по отношению к своему произведению не имущественным, а личным правом. Основой же данной теории считается философия Иммануила Канта, воззрения которого стали основой для генезиса моральных прав автора.

В своей аргументации Кант не дает прямого определения юридического ха-

рактера авторских прав. Однако из смысла его аргументов можно сделать вывод, что он принимает автора за истинного собственника своего произведения. С точки зрения как Канта, так и Гегеля, частная собственность возникает благодаря приложению к внешнему объекту не столько индивидуального труда, сколько индивидуальной воли. Обращенная в обладание субъекта вещь поэтому становится воплощением его индивидуальных черт, в свою очередь, человек, отчуждая из своего обладания вещь, более не связывает вещь своим волевым усилием. При этом и для Канта, и для Гегеля отчуждаем может быть лишь объект, внешний обладающему им субъекту, те же блага, что составляют собственно личность субъекта, являются неотчуждаемыми, субъективные права на них неотъемлемы. К таким благам относится личность субъекта как таковая, свобода воли, нравственные и религиозные убеждения. Именно критерий подвластности блага волевому усилию субъекта л, г в основание фундаментального для континентальной системы деления всех правомочий на отчуждаемые и неотчуждаемые.

Уделяя немало внимания природе прав, возникающих в отношении произведения у их создателей, Кант пишет: «Книга — это сочинение (здесь безразлично, написано ли оно пером или напечатано, много в нем страниц или мало), представляющее речь, обращенную кем-то к публике в зримых знаках языка»⁵. По Канту сочинителем (autor) является тот, кто обращается к публике от своего собственного имени, издатель же в сочинении публично выступает от имени автора, то есть служит посредником для передачи этой речи публике. Однако для того, чтобы издатель действовал правомерно, автором ему должно быть предоставлено полномочие (mandatum).

В обратном случае имеет место незаконное перепечатание книги, контрафакция, наносящая ущерб личности. Отсюда тот, кто управляет делами другого от его имени и против его воли обязан возвратить этому другому или его уполномоченному все выгоды, какие сам хозяин мог бы получить от такого управления делами, и возместить ущерб, который ему причинен этим управлением. Кант считает, что самые элементарные понятия естественного права предписывают, чтобы незаконно вмешивающийся в дела другого подлежал за такое вмешательство ответственности, именно такое вмешательство проявляет контрафактор.

Кант причисляет договор об издании к разряду тех договоров, из которых вытекают права и обязанности чисто личного свойства. Покупка экземпляра книги еще не служит доказательством заключения такого договора между покупателем и автором, а потому и не дает первому права на личное действие последнего, выражающееся в публичной речи⁶.

По Канту: «книга, с одной стороны, есть физическое изделие (opus mechanicum), которое может быть воспроизведено (тем, кто правомерно владеет экземпляром его), стало быть, по отношению к ней имеется вещное право; с другой стороны, книга есть просто обращенная к публике речь издателя, которую он не имеет права повторять, если у него нет на это полномочия автора (praestatio operae), то есть она есть личное право»⁷. Таким образом, по Канту, сам по себе факт владения или обладания книгой не дает еще, права на ее воспроизведение, так как этим было бы нарушено бесспорное право автора самому решать, когда и каким образом, и посредством какого издателя обратится он своим произведением к публике. Интерес автора в выборе времени и способа такого обращения

Кант рассматривал как неотчуждаемую составляющую личности автора. Автор может лишь разрешить печатать свою книгу, само же право на печатание не становится предметом уступки. При этом, действуя фактически как доверенное лицо автора, издатель обязан представить изданную книгу таким образом и способом, которые отвечают намерению автора.

Кантианская трактовка авторского права как единичного, личного и неотчуждаемого права легла в основу возникшей в конце XIX в. школы, считавшей, что автор вправе разрешать использование своего произведения, но не может совершать уступку (или полный отказ) в пользу третьего лица своих прав на него и далее был воспринят германским законодательством об авторском праве⁸.

Взгляды Канта о природе авторских прав далее были восприняты и развиты другим не менее известным философом Фихте, который посвятил небольшую статью (*"Beweis der Unrechtmässigkeit des Vychernachdrucks. Ein Rdsonnement und ein Parabel"* 1793г.) вопросу о неправомерности контрафакции. Фихте с своей точки зрения определяет права автора, издателя и публики, различая в книге два элемента: телесный, т. е. печатную бумагу, и умственный. Собственность на первый через продажу переходит к покупателю. Умственный элемент книги, в свою очередь, распадается на материальный элемент — это содержание книги, излагаемые в ней мысли, и на форму этих мыслей — это способ их изложения, взаимная их связь, обороты речи и выражения. Материальный элемент через простую передачу книги не становится еще нашей собственностью. Чтобы сделать мысли нашими, необходимо вдуматься в содержание книги, многосторонне рассмотреть это содержание

ՔՐՈՂԱՔՆԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

и таким образом ввести ее в нашу собственную сферу мыслей. Но для этого нужно обладать книгой, то есть ее приобретение должно дать нам право и на усвоение мыслей автора. Фихте считает, что обнародованная книга дает возможность усваивать изложенные в ней мысли, и эта возможность в силу своей природы становится общим достоянием (*«gemeinschaftliches Eigenthum»*). “Но форма этих мыслей, связь идей и знаков, в которых они выражены, не может подлежать ничьему освоению вследствие невозможности последнего”⁹, так как у каждого есть своя последовательность идей, своя особая манера составлять себе понятия и взаимно их связывать. Всякая мысль воспринимается нами по аналогии с нашей манерой мыслить, и только такая переработка делает чужие мысли нашими, считает Фихте.

И действительно, невероятно, чтобы два человека думали о предмете совершенно одно и то же, в той же последовательности идей, в тех же образах. Однако считаем, что в исключительных случаях такое является возможным. Но человек, заимствующий мысли у другого, не может ввести их в сферу своих мыслей в той же точно форме, какую они получили у другого. Фихте отмечает, что так как чистые идеи без чувственных образов немислимы, а тем более не могут быть изображаемы перед другими, то само собой разумеется, всякий писатель должен давать своим мыслям форму и не может им дать другой формы кроме своей, однако, передавая свои мысли, он может не пожелать сделать общей и эту форму, которая навсегда остается его исключительной собственностью” (*sein ausschließendes Eigenthum*)¹⁰.

Исходя из вышеизложенного, Фихте приходит к заключению, что ни рукопись, ни форма изложенных в ней мыслей не передаются в распоряжение издателя, объясняя это тем, что форма является неотчуждаемой, а рукопись сама по себе лишена рыночной цены. Таким образом, издатель получает от автора не право продавать мысли автора и их форму, а лишь право пользования на возникшую путем печати возможность усвоить эти мысли. При этом издатель действует уже не от своего имени, а от имени и по поручению автора. Подтверждением этих положений Фихте считает зависимость от автора числа изданий и количества экземпляров и ответственность автора, а не издателя, за содержание книги.

Обобщая воззрения Фихте относительно авторских прав, можно сделать вывод, что, продолжая учение Канта, философ дает более подробный анализ книги и обосновывает то, что каждый имеет свою форму мыслей, которая, по причине своей уникальности, не может быть присвоена другими, то есть является неотчуждаемой.

Большой интерес представляют также мысли Гегеля об отношении автора к своему произведению. Взгляды Гегеля о литературном произведении изложены в разделе о собственности (*«Das Eigentum»*) в своем труде *«Grundlinien der Philosophie des Rechts»*.

Гегель, в свою очередь, также утверждает, что литературные произведения, наряду с изобретениями, олицетворяют мысли и таланты автора, и что эти качества являются достоянием свободного ума, чем-то причастным, а не внешним ему. В отличие от Канта, Гегель, однако, полагает, что выражение интеллектуальных достоинств автора, в том виде, в каком они оказываются воплощены в произведении, есть уже внешнее

автору, и поэтому выражение это является уже свободно отчуждаемым объектом. Таким образом, Гегель считает, что мера отчуждаемости авторских прав такая же, что и мера волевой отчуждаемости любого объекта, созданного человеческим трудом. Гегель указывает, что способ выражения может дать литературному произведению внешность такой вещи, которая может быть воспроизводима и другими, так что приобретатель последней вместе с возможностью усвоить себе высказанные в этом произведении мысли получает еще "общий способ выразиться таким именно образом и производить много таких именно вещей"¹¹. Относительно художественных произведений созданная художником вещь до такой степени носит на себе печать его творчества и искусства, что для ее копировки нужен особый умственный и технический навык. В произведениях же литературы и в изобретениях форма, дающая им значение внешней вещи, обусловлена чисто механическим сочетанием отдельных абстрактных знаков или известным механизмом, так что, будучи таковой, она может быть воспроизведена любым лицом, владеющим самым обыкновенным навыком. Приобретатель экземпляра такой вещи получает на него полное право собственности, но автор или изобретатель этой вещи остается собственником того способа ее воспроизведения, которым могут воспользоваться все вообще в одинаковой степени, так как для него не требуется особенного навыка. "Этот способ автор или изобретатель непосредственно не отчуждал, а удержал за собой как свое особое выражение."¹²

Возможность воспроизводить такую вещь механическим способом ее автор или изобретатель может либо оставить за собой, либо отчуждать как ценность, или же отдавать ее вместе с отдельным

экземпляром. Это и есть та сторона вещи, которая для ее творца имеет значение имущества, она может быть отделена и отличается от того употребления, к какому вещь непосредственно предназначена. Так как она есть часть делимого по своей природе внешнего употребления, то оставление ее за собой при отчуждении остальной части употребления не есть удержание за собой господства без «*utile*».

Таким образом, Гегель отличает собственность на отдельный экземпляр от собственности на общедоступный способ воспроизводить и размножать книгу. При продаже экземпляра, последняя полностью переходит к покупателю, способ же воспроизведения остается за автором и, составляя имущественную сторону его книги, служит ему источником дохода. Следовательно, книга может подлежать двоякому пользованию: с одной стороны, она дает возможность усвоить себе изложенные в ней мысли, а с другой - она является вещью, приносящей доход. Эти два вида пользования не связаны между собой неразрывно и по воле автора могут быть отчуждены порознь или вместе. Однако одно отчуждение экземпляра книги не предполагает отчуждения и второго вида пользования.

Под влиянием трудов вышеназванных философов далее были разработаны различные учения об авторском праве, сыгравшие значительную роль в становлении и развитии законодательства об авторских правах в юрисдикциях континентальной системы. В начале двадцатого века Otto von Gierke в своем трактате об авторских правах "*Deutsches Privatrecht*"¹³ развил взгляды о том, что авторское право есть личное право автора контролировать судьбу своего произведения. Во многом благодаря Гирке теории Канта и Фихте повлияли на не-

ՔՐԱՎԱՅԻՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

մեզու *Urheberrecht* և ֆրանսիական *droit d'auteur*. Գլխավոր թեմայի ներկայացուցիչը Գեգելի տեսությունն էր, որը ավելի քան 150 տարի անց էլ հիմնական էր մեզու տեսության համար: Գեգելը պնդում էր, որ արվեստագետը իր արվեստով իր իրավունքները փոխանցում է ընդհանուր հասարակությանը: Գեգելը պնդում էր, որ արվեստագետը իր արվեստով իր իրավունքները փոխանցում է ընդհանուր հասարակությանը: Գեգելը պնդում էր, որ արվեստագետը իր արվեստով իր իրավունքները փոխանցում է ընդհանուր հասարակությանը:

Таким образом, можно сделать вывод, что несмотря на свою метафизическую сущность, классическая европейская философия научно доказала то, что между автором и его произведением существует особая связь, нуждающаяся в обеспечении средствами правовой защиты.

- ¹ В. Веинке. Авторское право. Регламентация, основы, будущее // Под. ред. Б.Д. Паникина. — М.: «Юридическая литература» 1979. — стр. 15
- ² «Проект статей об авторском праве на литературные, музыкальные и художественные произведения». — СПб.: 1899. — стр. 2
- ³ Я. Канторович. Литературная собственность. С.-Петербург; 1895г., стр.9
- ⁴ И.Г. Табашников. Литературная, музыкальная и художественная собственность. Изд. 1878г. Стр. 10-11
- ⁵ И. Кант. Сочинения в шести томах. Т 4, ч. 2. Метафизика нравов в 2-х частях. М.1965. стр.205
- ⁶ И.Г. Табашников. Литературная, музыкальная и художественная собственность. Изд. 1878г. Стр. 28-29
- ⁷ И. Кант. Сочинения в шести томах. Т 4, ч. 2. Метафизика нравов в 2-х частях. М.1965. стр.206
- ⁸ Russell J. DaSilva. Droit Moral and the Amoral

Copyright: A Comparison of Artists' Rights in France and the United States //28 Bull. Copyright Soc'y 1. 1980.

- ⁹ Stina Teilmann-Lock, «British and French Copyright. A Historical Study of Aesthetic Implications», Copenhagen, 2009. Стр. 49-50; Johann Gottlieb Fichte, “Beweis der Unrechtmässigkeit des Вьchernachdrucks. Ein Rdsonnement und ein Parabel”, *Berlinische Monatsschrift* 21, (1793): 443-483, стр. 447.
- ¹⁰ Там же
- ¹¹ Georg Wilhelm Friedrich Hegels Werke Berlin 1840 m. 8, стр. 105 и сл. (Grundlinien der Philosophie des Rechts) § 68 и 69.
- ¹² Там же
- ¹³ См.: Otto Friederich von Gierke, *Deutsches Privatrecht*, ed. K. Binding, 2 vols., *Systematisches Handbuch der deutschen Rechtswissenschaft* (Leipzig: Duncker & Humblot, 1895-1905).
- ¹⁴ См.: Kohler Josef. *Urheberrecht an Schriftwerken und Verlagsrecht*. - Stuttgart, 1907.

VIEWS OF THE REPRESENTATIVES OF CLASSIC EUROPEAN PHILOSOPHY

ABOUT THE LEGAL NATURE OF COPYRIGHT

Evgenya NIKOGOSYAN

PHD student, RASU

Chair of Civil and Civil Procedure Law

In the making of the copyright laws the author's rights concerning their work have been the subject of scientific analysis for many times. As a result numerous theories have been put forward by academic lawyers and philosophers related to the developing right. The personality right theory, according to which the literary and artistic works are considered the part of personality, has a special place among these theories.

The views of the representatives of the mentioned theory of copyright, that is theories of German philosophers Kant, Hegel and Fichte, are presented in this article. These theories later on became the theoretical basis for the Continental European copyright law (particularly for the German Urheberrecht and French droit d'auteur) and specifically for the development of the doctrine of moral rights of authors. Especially, in the late nineteenth century German philosophers Otto Friedrich von Gierke, John Kohler (the main representative of the dualist theory of authors' rights) on the basis above mentioned theories established the foundation for the modern doctrine of moral rights.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**ՄԻԳՐԱՆՑ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՀԻՄՔԸ**

Մանե ԿԱՐԱՊԵՏՅԱԼ

*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի
ամբիոնի հայցորդ*

Աշխատանքային հարաբերությունների ծագման ավանդական հիմքը աշխատանքային պայմանագիրն է: Այն աշխատանքային իրավունքի կարևորագույն և կենտրոնական ինստիտուտն է: Առանձին երկրներում գործում են անգամ աշխատանքային պայմանագրի մասին առանձին օրենքներ, օրինակ՝ Բելգիայում, Պորտուգալիայում, Էստոնիայում և այլուր¹:

Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությունում օրենսդիրը առանձնացնում է բոլոր աշխատողների համար աշխատանքային հարաբերությունների ծագման երկու այլընտրանքային հիմք՝ աշխատանքային պայմանագիր և աշխատանքի ընդունման մասին անհատական ակտ: Այս ընդհանուր կանոնից օտարերկրացիների կամ միգրանտների համար բացառություն սահմանված չէ: Միևնույն ժամանակ, բացի այս երկու հիմքերից «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջինս օտարերկրացիների դեպքում աշխատանքային պայմանագրին այլընտրանք է համարում նաև ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը՝ որպես բնույթով քաղաքացիաիրավական պայմանագրի տեսակ:

Ուստի առերևույթ թվում է, թե միգրանտներին աշխատանքի ներգրավել հնարավոր է երեք հիմքերով՝

– աշխատանքի ընդունման մասին անհատական ակտի ընդունում,

– աշխատանքային պայմանագրի կնքում,

– ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի կնքում:

Ստորև ներկայացնում ենք այս հիմքերից յուրաքանչյուրի կիրառման առանձնահատկությունները:

Անհատական իրավական ակտի ընդունումը որպես աշխատանքային հարաբերությունների ծագման հիմք ներմուծվեց միայն 2010թ. հուլիս ամսին ՀՀ աշխատանքային օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքով, որն ուժի մեջ մտավ օգոստոսի 7-ին: Այս օրենքի ընդունմամբ աշխատանքային պայմանագրին կարծես թե փոխարինող փաստաթուղթ դարձավ նաև գործատուի կողմից ընդունվող անհատական ակտը:

Մեր համոզմամբ անհատական ակտը նույն օրենքի՝ աշխատանքային օրենսգրքի տրամաբանությամբ չի կարող հանդիսանալ աշխատանքային պայմանագրին փոխարինող փաստաթուղթ, քանի որ հրամանի ինստիտուտի ներմուծմանը պետք է հաջորդեր վերջինիս և մնացած ինստիտուտների համապատասխանեցման գործընթացը, ինչը, սակայն, չի կատարվել:

Արդյունքում անհատական իրավական ակտի ընդունմամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում առաջ են գալիս հետևյալ անլուծելի խնդիրները՝

– առանց աշխատանքային պայմանագրի կատարվող աշխատանքը շարունակում է համարվել անօրինական Օրենսգրքի 102-րդ հոդվածի ուժով,

– հրամանի դեպքում հնարավոր չէ այն լուծել, քանի որ «իրավական ակտերի մա-

սին» ՀՀ օրենքի ուժով իրավական ակտը կարող է ուժը կորցնել, անվավեր կամ չեղյալ ճանաչվել, սակայն չի կարող երբեք լուծվել,

–իրավական ակտի ընդունման համար անհրաժեշտ է միայն մեկ՝ այն ընդունող սուբյեկտի կամահայտնությունը, այնինչ Օրենսգրքի 13-րդ հոդվածը աշխատանքային հարաբերությունների ծագման հիմք է համարում նաև «**կողմերի համաձայնությամբ՝ աշխատանքի ընդունման մասին իրավական ակտը**»: Երկկողմ գրավոր համաձայնությունները դրսևորվում են պայմանագրի կնքմամբ (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 436) և ոչ թե իրավական ակտի ընդունման միջոցով: Վերջապես, որքանով է տրամաբանական, որ աշխատողը համաձայնվի անհատական ակտի միջոցով աշխատանքային հարաբերություններ ծավալել, եթե բոլոր դեպքերում իր շահերից բխում է աշխատանքային պայմանագրի կնքումը, կամ ի՞նչ եղանակով է աշխատողը հայտնելու իր համաձայնությունը անհատական ակտի ընդունման մասին, եթե նա աշխատողի կարգավիճակ ձեռք է բերում միայն աշխատանքային պայմանագրի կամ անհատական ակտի ընդունման պահից:

Կարծում ենք՝ անհատական ակտի վերստին ներմուծումը Օրենսգրքում որպես աշխատանքային հարաբերությունների ծագման հիմք չի նսեմացրել աշխատանքային պայմանագրի ինստիտուտի դերը, այլ ընդամենը ստեղծել է իրավական անորոշություն:

Ավելին՝ անհատական իրավական ակտի ինստիտուտը կիրառելու դեպքում գործատուն անգամ աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունների դադարեցման իրավական հնարավորություն չունի այնքանով, որքանով որ աշխատանքային իրավահարաբերությունները կարող են դադարել միմիայն աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում, իսկ անհատական իրավական ակտը «իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի տրամաբան

նությամբ կարող է անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվել, վերացվել կամ չեղյալ ճանաչվել, սակայն լուծվել չի կարող:

Ինչևէ, անգամ եթե, չնայած առկա խնդիրներին, ենթադրենք, որ հրամանը հանդիսանում է աշխատանքային պայմանագրին փոխարինող փաստաթուղթ, ապա, միևնույնն է, միգրանտի հետ ծագող աշխատանքային հարաբերություններում այն կիրառելի չէ նախ այն պատճառով, որ Օրենքի 27-րդ հոդվածը նույնպես սահմանում է աշխատանքային պայմանագրի կնքման գործատուի պարտականությունը, բացի այդ՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերը անգամ առանձին դեպքերում նախատեսում են, որ միգրանտը ստանա իր հետ կնքված աշխատանքային պայմանագիրը մինչև Հայաստանի Հանրապետություն ժամանելը (ԱՄԿ թիվ 97 կոնվենցիա):

Հաջորդ հարցը վերաբերում է ծառայությունների մատուցման պայմանագրին, որն արդեն Օրենքի տեսանկյունից կարծես հանդիսանում է միգրանտ աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունների ծագման հիմք:

Օրենքի 22-րդ հոդվածը վերնագրված է «Օտարերկրացիների աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում»: Այս հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության գործատուներն իրավունք ունեն օտարերկրացի աշխատողի հետ աշխատանքային պայմանագիր (ծառայությունների մատուցման պայմանագիր) կնքելու և նրա աշխատանքն օգտագործելու՝ լիազոր մարմնի կողմից օտարերկրացի աշխատողին տրամադրված աշխատանքի թույլտվության հիման վրա»: Օրենքի 27-րդ հոդվածը վերնագրված է «Աշխատանքային պայմանագրի (ծառայությունների մատուցման պայմանագրի) կնքումը», և վերջինիս բոլոր մասերում «աշխատանքային պայմանագիր» բառակապակցությունից հետո փակագծերում սահմանված է «ծառայություն-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ների մատուցման պայմանագիր» ձևակերպումը:

Աշխատանքային և ծառայությունների մատուցման պայմանագրերը նույնացնելու Օրենքում տեղ գտած մոտեցումն ունի իր տրամաբանությունը:

Առանձին գիտնականներ միգրանտ աշխատող են համարում նաև ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած անձին, ինչը մեր համոզմամբ անընդունելի է:

Օրինակ՝ պրոֆեսոր Ն.Գլադկովի և Յու. Գեֆտերի կարծիքով, աշխատանքային միգրանտ պետք է համարել այն անձին, որը ոչ իր քաղաքացիության երկրում զբաղվում է վճարովի աշխատանքով, անկախ այն հանգամանքից, այդ աշխատանքը կատարում է աշխատանքային, թե քաղաքացիական պայմանագրի հիման վրա²:

Նույն մոտեցմանն է հարում նաև Ա. Կորոտայևը, որը օտարերկրացի աշխատող է համարում օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող այն անձին, որը օրինական հիմքով զբաղվում է վճարովի գործունեությամբ՝ աշխատանքային կամ քաղաքացիական պայմանագրի հիման վրա³:

Քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատանքներ կատարող անձանց բավականին յուրօրինակ է մոտեցել Բ. Ա. Ասրիյանը, որը իր թեկնածուական ատենախոսության մեջ նշել է. «օտարերկրացի աշխատող» տերմինը վերաբերում է ոչ միայն աշխատանքային, այլ նաև քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատանք կատարող անձանց⁴:

Միևնույն ժամանակ ինչպես հայտնի է թե՛ քաղաքացիական և թե՛ աշխատանքային իրավունքի գիտությունից, այնպես էլ Օրենսգրքի մոտեցումը հաշվի առնելով կարող ենք հստակ սահմանազատել աշխատանքային և քաղաքացիական իրավունքները. ընդ որում՝ աշխատանքային

պայմանագիրը համարելով բացառապես աշխատանքային հարաբերությունների բնորոշ ինստիտուտ, իսկ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը դիտարկելով որպես քաղաքացիաիրավական պայմանագիր:

Պատահական չէ, որ դեռևս 1920-30-ական թթ. իրավաբան գիտնականները ամբողջ աշխարհում սկսեցին հիմնավորել աշխատանքային իրավունքի դուալիստական բնույթը՝ հնացած համարելով հռոմեական իրավունքից հայտի կոշտ մոտեցումը՝ իրավունքի բաժանումը հանրայինի և մասնավորի⁵: Հենց աշխատանքային իրավունքի դուալիստական բնույթով է պայմանավորված վերջինիս մեթոդի կոմպլեքսայնությունը՝ իմպերատիվ և դիսպոզիտիվ միջոցների զուգակցմամբ⁶, և աշխատանքային օրենսդրությունը առավելապես ուղղված է աշխատողի շահերի պաշտպանությանը: Աշխատողի շահերի պաշտպանությունն էր այն նախասկիզբը, որը հիմք հանդիսացավ աշխատանքային իրավունքի առանձնացման համար. աշխատանքը ապրանքից՝ վերջինիս առարկայացված արդյունքից, առանձնացնելու և աշխատանքային իրավահարաբերության կողմերի փաստացի անհավասարությունը՝ աշխատողի համար սահմանված երաշխիքների միջոցով մեղմելու համար⁷:

Աշխատանքային իրավունքը դեռևս 20-րդ դարում առանձնացավ քաղաքացիական իրավունքից և այժմ իրավունքի ինքնուրույն ճյուղ է, որը, միայն աշխատողի քաղաքացիության հանգամանքով պայմանավորված, կարծում ենք, չի կարող նորից միաձուլվել քաղաքացիական իրավունքին:

Չենք կարող ժխտել նաև այն հանգամանքը, որ երբեմն շատ դժվար է լինում տարանջատել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կարճ ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրից: Դեռ ավելին, մեկանգամյա աշխատանքի կատարման դեպքում կնքվում է ծառայությունների մատուցման պայմանա-

գիր, սակայն աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերը բոլոր դեպքերում ունեն կարգավորման տարբեր առարկաներ, իսկ վերջիններիս նմանությունների և տարբերությունների խնդիրները լուծվում են աշխատանքային և քաղաքացիական իրավունքի դոկտրինաների մակարդակով:

Վերջապես, աշխատանքային իրավունքի կոմպլեքսային և քաղաքացիական իրավունքին բնորոշ իրավահավասարության մեթոդը առավել ցայտուն է ընդգծվում պայմանագրի կնքման, պայմանների որոշման և մասնավորապես լուծման հարաբերություններում:

Աշխատանքային օրենսգիրքը ոչ միայն հստակ կանխորոշել է աշխատանքային պայմանագրի բովանդակությունը, այլ նաև իմպերատիվ ձևով սահմանել աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը՝ առանց կողմերին հնարավորություն տալու այլ բան սահմանել պայմանագրով:

Քաղաքացիական՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի դեպքում մոտեցումը ճիշտ հակառակն է. նախ կողմերը ազատ են պայմանագրի պայմանները սահմանելու հարցում, և բացի այդ՝ կողմերից յուրաքանչյուրն ազատ է առանց որևէ պատճառի ցանկացած պահի լուծելու պայմանագիրը՝ հատուցելով մյուս կողմի կատարած ծախսերը:

Այս տեսանկյունից, կարծում ենք, աշխատանքային և ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերը չեն հանդիսանում այլընտրանք մեկը մյուսի նկատմամբ:

Բացի այդ, ծառայությունների մատուցման և աշխատանքային պայմանագրերի միջև առկա է նաև մեկ այլ էական տարբերություն՝ պայմանավորված վարձատրության հարկման հետ: Աշխատանքային պայմանագրի կնքման դեպքում գործատուն է որպես հարկային գործակալ պահում աշխատողի եկամտահարկը և վճարում պետական բյուջե, ինչպես նաև յուրաքանչյուր աշխատողի համար վճարում պարտա-

դիր սոցիալական ապահովագրության գումարը, իսկ ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման դեպքում ենթադրվում է, որ ծառայություն մատուցող անձը գրանցված է որպես անհատ ձեռնարկատեր և անձամբ է վճարում հարկերը:

Բոլոր ներկայացված տարբերությունները, կարծում ենք, հիմք են հանդիսանում աշխատանքային և ծառայությունների մատուցման պայմանագրերը մեկը մյուսից հստակ տարանջատելու համար:

Վերջապես, Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը հստակ սահմանում է, որ աշխատանքային պայմանագիրը (ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը) կնքվում է ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին համապատասխան:

ՀՀ աշխատանքային օրենսդրությունը որևիցե ձևով չի անդրադառնում ծառայությունների մատուցման պայմանագրին, այն կարգավորում է միայն աշխատանքային պայմանագրին առնչվող հարաբերությունները, ինչը ևս մեկ անգամ մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ միգրանտ աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունների ծագման միակ հիմքը աշխատանքային պայմանագիրն է:

Իհարկե, օտարերկրացին կարող է կնքել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր, սակայն այս դեպքում նա միգրանտ աշխատող չի հանդիսանա, և նրա նկատմամբ չեն տարածվի միգրանտ աշխատողին վերաբերող նորմերը:

Ի վերջո քաղաքացիական և աշխատանքային պայմանագրերի նմանությունների և տարբերությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրի դիրքորոշումն առավել քան հստակ է: Այն է՝ Օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է՝ եթե դատական կարգով հաստատված է, որ գործատուի և աշխատողի միջև կնքված քաղաքացիաիրավական բնույթի պայմանագրով փաստացի կարգավորվում են աշխատանքային հարաբե-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

րություններ, ապա նման հարաբերությունների նկատմամբ կիրառվում են աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթները: Ընդ որում՝ Հայաստանի Հանրապետության դատական ատյանները քննել են նաև քաղաքացիական գործեր, որոնց շրջանակում քննարկվել է նաև ծառայությունների մատուցման պայմանագրի աշխատանքային պայմանագիր ճանաչելու և վերջինիս նկատմամբ աշխատանքային օրենսդրության նորմերը կիրառելու հարցերը⁶:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք՝ միգրանտ աշխատողների հետ աշխատանքային հարաբերությունների ծագման նկատմամբ կիրառելի չէ անհատական ի-

րավական ակտ ընդունելու ինստիտուտը, և նրանց հետ պայմանագիր կնքելը պարտադիր է: Մյուս կողմից՝ այդպիսի պայմանագիր կարող է հանդես գալ բացառապես աշխատանքային պայմանագիրը, որի ձևը և բովանդակությունը սահմանվում են աշխատանքային օրենսդրությամբ:

Ինչ վերաբերում է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրին, ապա որևէ իրավական նորմ չի արգելում միգրանտի կամ օտարերկրացու հետ կնքել նաև ծառայությունների մատուցման պայմանագիր, սակայն այս դեպքում վերջինս չի հանդիսանում աշխատանքային հարաբերությունների սուբյեկտ և միգրանտ կամ օտարերկրացի աշխատող:

Բոլոր դեպքերում գործող օրենսդրության ներքին ինքնահակասական նորմերը շտկելու տեսանկյունից կարծում ենք ճիշտ կլիներ Օրենքի 4-րդ գլխից հանել «ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր» հասկացությունը:

¹ Տե՛ս Киселев И.Я. Сравнительное трудовое право: учеб.-М.: ТК Велби, Изд-во Проспект, 2005.-360, էջ103:

² Տե՛ս Н. Гладков. Ю. Гефтер. Различие понятий иностранный работник и трудящийся-мигрант. Кадровик. Трудовое право кадровика. 2008 N 1:

³ Տե՛ս Коротаев А.С. Правовое регулирование труда иностранных работников В Российской Федерации. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Москва 2008 էջ 26:

⁴ Տե՛ս Асриян Б.А. Социальные и трудовые права мигрантов в Российской Федерации/ Дис. ... к.ю.н., 2004, էջ 38:

⁵ Տե՛ս Киселев И.Я. Сравнительное трудовое право: Учебник.- М.:ТК Велби, Изд-во Проспект, 2005, էջ 25:

⁶ Տե՛ս Киселев И.Я. Трудовое право России и зарубежных стран. Международные нормы труда: Учебник.-Изд. 2-е, испр. и доп.- М.: Эксмо, 2006, էջ 82:

⁷ 1914թ. ԱՄՆ-ում ընդունվել է Կլեյտոնի օրենքը, որի 6-րդ հոդվածը սահմանում էր, որ աշխատանքը չի կարող դիտարկվել որպես ապրանք կամ առևտրի օբյեկտ: Գերմանացի գիտնական Գ. Ջինցգեյմերը աշխատանքային իրավունքի առանձնացման իր դիրքորոշումը հիմնավորելիս նշում էր նաև, որ վարձու աշխատողների համար աշխատանքը սոցիալական գոյության հիմքն է՝ կյանքի բազան (մեջբերում The Making of Labour Law in Europe. Ed by B. Hepple, 1986. P. 8-9):

⁸ Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3326/02/08, նախագահող դատավոր Ա. Մելքունյան՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը դադարեցնելու վերաբերյալ հրամանն անվավեր ճանաչելու, հարկադիր պարապուրդում գտնվելու ժամանակաընթացքում չվճարված աշխատավարձը բռնագանձելու պ/մ:

THE BASIS OF ORIGIN OF LABOR RELATIONS WITH MIGRANT EMPLOYEES

Mane KARAPETYAN

*PHD student, YSU,
Chair of Civil Law*

The scope of this article includes the examination of the origin of relations with migrant employees and it reveals similarities and differences with the hiring process of Armenian citizens.

In the article the author analyzes the following bases of hiring:

- The individual legal act which, since August 2010, has been an alternative basis for employing Armenian citizens and has concluded that the aforementioned basis should not apply to the foreigners. The author has also pointed out the legislative obstacles from the point of view of the origin of the employment relationships with Armenian citizens.

- Service contract, which, according to

the RA Law "On foreigners", is an alternative to the employment contract. The author referred to the similarities and differences between the provision of services and employment contract, as well as presented the opinions of distinct scientists on the distinction and coincidence of the migrant employee and migrant service provider. Subsequently, the author came to the conclusion, that the civil contract may not be used as a basis for employment relationships; therefore, it does not apply to the relationships with migrant employee.

- The employment contract, which, according to the author's opinion, is the unique basis for the origination of employment relationships with foreigners.

Summarizing the article the author suggested to remove the words "of the contract on provision of remunerated services" from the Chapter 4 of the RA Law "On foreigners" to eliminate existing ambiguous provisions.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**ԿՈԱԼԻՑԻՈՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
(իրավական ասպեկտներ)****Փևոզ ԴԱՆԻԵԼՅԱՆ**

*ՀՀ սահմանադրական դատարանի
խորհրդական, «Սահմանադրական իրավունքի
կենտրոն» Հ/Կ խորհրդի նախագահ,
իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*

Ներածություն: Հաճախ օտարածին տերմինի բովանդակությունը համարժեք վերլուծելու նկատառումով անդրադառնում ենք դրա ակունքներին, մասնավորապես լատիներենի բացատրական նշանակությամբ: Կարծում ենք, այդ մոտեցումն ինքնին արդարացի է, սակայն հարկ է հավելել, որ դեռևս հնագույն քաղաքակրթությունում այդ եզրույթների առկայությունը վկայում է նաև դրանց կենսունակության, իրարանբժ քաղաքակրթության համակարգերում գոյատևելու «ունակությամբ»: Թերևս, այդպիսին է «coalitio» իտալերեն տերմինը, որը համարվել է «միություն» բառի հոմանիշ, իսկ բովանդակային կտրվածքով այն կիրառվել է որպես ընդհանուր նպատակներին հասնելու համար ուժերը համախմբելու նշանակությամբ¹: Այսպիսով, կոալիցիան կարող է իրավաչափ ու իր ներքին բովանդակությանը համարժեք համարվել բացառապես այն նախապայմանով, երբ դրա ստեղծման հիմքում դրվի բոլոր միավորվող տարրերի համար ընդհանուր, նրանց համար միանշանակ ընդունելի նպատակ:

Նորագույն քաղաքական գործընթացներն առավել հաճախ են բախվում այս կամ այն երկրում արդի մարտահրավերները հնարավորինս քաղաքակիրթ ու ժողովրդավարական լծակներով հաղթահա-

րելու երևույթին, ու առավել նկատելի է դառնում այդ առնչությամբ քաղաքական ներուժը համախմբելու անհրաժեշտությունը: Սակայն հայրենական ժամանակակից իրավագիտությունը դեռևս բավարար խորությամբ չի անդրադարձել այս խնդրի լուծման իրավական ասպեկտների բացահայտմանը, ինչն էլ թելադրում է սույն հետազոտության հրատապությունը: Ընդ որում, այս կարգի հետազոտությունների գիտագործնական նշանակությունը նկատելի է հատկապես այն երկրներում, որտեղ դեռևս չեն ձևավորվել անհրաժեշտ պատկերացումներ ու համարժեք ավանդույթներ համապատասխան պետաիրավական ինստիտուտների առնչությամբ:

Նշենք, որ հիշյալ եզրույթը, թերևս, լայն կիրառում է ստացել նաև պետական կառավարման շրջանակներում, մասնավորապես՝ «կոալիցիոն կառավարում» ձևակերպմամբ: Քաղաքագիտության շրջանում գերիշխում է այն, թերևս, միանշանակ դիրքորոշումը, ըստ որի կոալիցիոն կառավարություն ձևավորվում է այն դեպքում, երբ որևէ կուսակցության չի հաջողվում մեծամասնություն կազմել խորհրդարանական ընտրություններում: Իրավական ասպեկտներով խորհրդարանական մեծամասնության փաստարկը, իրոք, առանցքային նշանակություն ունի կոալիցիոն կառավարության ձևավորման հարցում, սակայն դա բնավ միակ ու վճռորոշ չափանիշը չէ: Վերջին հաշվով, խորհրդարանական մեծամասնությունը բավարար երաշխիք չէ ոչ միայն քաղաքական խոչընդոտները, այլև զուտ սահմանադրաիրավական մի շարք «խտրեր» հաջողությամբ հաղթահարելու համար: Այս տեսանկյունից իրավաչափ ու

հիմնավորված չեն այն տարածված տեսակետները², ըստ որոնց, իբր, ցանկացած խորհրդարանական մեծամասնություն անվերապահորեն ապահովում է խորհրդարանին վերապահված յուրաքանչյուր լիազորության շրջանակներում ակնկալվելիք արդյունք:

Նկատենք, որ հայրենական քաղաքագիտության ասպեկտներով՝ խորհրդարանական մեծամասնության բացակայության պայմաններում ևս չի բացառվում կոալիցիոն կառավարության ձևավորման հնարավորությունը, սակայն վերջինս հիմնականում դիտվում է իբրև քաղաքական հանդուրժողականության, քաղաքական տարածայնություններն անհարկի հակամարտության չվերածելու երաշխիք: Այլ կերպ ասած, հաճախ քաղաքական գործիչների տեսադաշտից դուրս են մնում զուտ իրավական ասպեկտները, որոնք առանցքային նշանակություն ունեն հիշյալ ինստիտուտի «կշռի» տեսանկյունից: Իսկ այդ ասպեկտների անտեսումը հղի է աննախադեպ ծանր հետևանքներով. այն կարող է անգամ վտանգել ողջ սահմանադրական կարգը:

Դատելով 2012թ. մայիսի 6-ի խորհրդարանական ընտրություններին նախորդող ու հաջորդող քաղաքական ելույթներից, դրանց արձագանքներից, ինչպես նաև զարգացումներից, համոզված եմ, կոալիցիոն կառավարության ինստիտուտի առնչությամբ անհեռատեսությունը, մասամբ սոսկ մեղ կուսակցական շահերով պայմանավորված քաղաքական հաշվարկների տեսանկյունից այն դիտարկելն ու կիրառման մեջ դնելը, ցավոք, մեր քաղաքական կյանքում դարձել է ոչ այնքան քիչ հավանական: Խորհրդարանական մեծամասնություն ունեցող կուսակցության պայմաններում կառավարությունը կոալիցիոն սկզբունքով ձևավորելու երևույթը ձևական համարելու տեսակետն անմիջապես հակադարձվեց ու հերքվեց, ինչը, սակայն, չուղեկցվեց անհրաժեշտ որևէ կոնկրետ հիմնավորմամբ: Քաղաքական հարթության վրա ընթացող բանավեճից այդպես էլ

պարզ չդարձավ նմանաբնույթ կոլագիոն կառավարությունը ի՞նչ նկատառումներով ձևական չի կարող համարվել, արդյոք համատեղ գործելու զուտ կամայական բաղադրիչը բավարար է կոալիցիոն կառավարությունը իրատեսական համարելու համար:

Մինչդեռ այս հարցադրումները խիստ առանցքային նշանակություն ունեն, դրանք սոսկ փոխադարձ մեղադրանքներով թելադրված քաղաքական նախընտրական քարոզչության նյութ չեն: Անհրաժեշտ են խորն ու համակողմանի վերլուծություններ և դրանցով թելադրված կողմնորոշիչ եզրահանգումներ, որոնք ի զորու կլինեն բացահայտելու այդ իրավական երևույթի բուն էությունն ու կիրառման հեռանկարները: Կոալիցիոն կառավարությունն ինքնին չի կարող դիտարկվել որպես երկրի առջև ծառայած մարտահրավերները միացյալ ուժերով հաղթահարելու «դեղատոմս», այն այդպիսին կարող է լինել բացառապես որոշակի նախապայմաններ ապահովելու ու կանոնների շրջանակներում գործելու դեպքում: Հակառակ պարագայում այն ոչ միայն չի նպաստի այդ մարտահրավերների դեմ արդյունավետ պայքար տանելուն, այլև կվերածվի քաղաքական ավելորդ խոչընդոտի, անհարկի կխաթարի բնականոն քաղաքական գործընթացները:

Ընդ որում, կոլագիոն կառավարության դեպքում նախապատվությունը տրվում է ոչ այնքան քաղաքական, որքան իրավական ասպեկտներին, *քանզի վերջինիս դեպքում կառավարության ձևավորման հիմքում դրվում են ոչ թե կուսակցականությունը, այլ այնպիսի գնահատելի իրավական չափանիշներ, ինչպիսիք են՝ արհեստավարժությունը, գործնական ունակությունները և այլն*: Թերևս դա է պատճառը, որ այս սկզբունքով ձևավորված կառավարությունը սահմանադրական իրավունքի տեսությունում ոչ թե ավանդաբար կոչվում է կուսակցական, այլ «*արհեստավարժ կառավարություն*»³:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Կոալիցիոն կառավարությանն առնչվող հիմնահարցերն ու դրանց ընդհանուր բնույթը: Նշված ելակետային նյութն արդեն իսկ կանխորոշում է առաջադրված թեմայի հետազոտության համալիր բնույթը, այն միաժամանակ քաղաքական, իրավական, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական ասպեկտներով վերլուծելու անհրաժեշտությունը:

Նախ, համակարգված տեսքով անդրադառնանք այն հարցադրումներին, որոնք պայմանավորում են կոալիցիոն կառավարության ինստիտուտի հնարավորությունը (առանձին դեպքերում նաև՝ անհրաժեշտությունը), ձևավորման նախադրյալները, նպատակները, ժամկետները, գործունեության նախապայմանները և ակնկալվելիք արդյունքները: Ընդ որում, այս հարցադրումների հետազոտության ամբողջականությունն ապահովելու նկատառումով նպատակահարմար ենք գտել անդրադառնալու նաև դրանց վերաբերյալ միջազգային փորձին:

Հավելենք, որ կոլացիոն կառավարության ինստիտուտին առնչվող վերոհիշյալ հարցադրումների *ուղիղ պատասխանները* մենք չենք կարող հայտնաբերել Սահմանադրությունում (թեպետ այն բովանդակում է այդ ինստիտուտի կանոնակարգման հիմնադրույթները), քանզի դա դեռևս ընկալվում է քաղաքական ուժերի հայեցողության ոլորտին առնչվող հարցադրում: Նկատենք նաև, որ այն իրոք ունի քաղաքական լուրջ ենթատեքստ. քաղաքական ուժերը, գնահատելով երկրում տիրող վիճակը և ղեկավարվելով երկրի Սահմանադրությամբ, իրենք պետք է պարզեն, թե իրենց առջև դրված խնդիրների լուծման համար որ եղանակներն են համարվում առավել արդյունավետ ու համահունչ քաղաքակրթության ու ժողովրդավարության չափանիշներին:

Անհրաժեշտ է նկատել, որ հայրենական

կառավարման համակարգն ու վերջինիս սահմանադրական հիմունքները, ցավոք, ոչ միայն նկատելիորեն տարանջատվում են միջազգային փորձից, այլև զարգացման միտումներից: Այսպես, օրինակ՝ վերջին 2 տասնամյակների ընթացքում բոլոր պետություններում անդառնալիորեն նկատվում է կառավարությունների և գործադիր իշխանության այլ օղակների կողմից իրավաստեղծ գործունեության շրջանակների ընդլայնում, մինչդեռ 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում հայտնվեց իր տեսակի մեջ եզակի ու գիտագործնական տեսանկյունից որևէ քննադատության չդիմացող նոր դրույթ (հոդված 83.5.), ըստ որի «ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը» բացառապես կարող է սահմանվել օրենքով: Արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ կառավարությունը հարկադրված է խախտել Սահմանադրությունը, քանի որ գործնականում պարզապես հնարավոր չէ ինքնամեկուսացվել ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների իրականացման պայմաններին ու կարգին առնչվող բազմաբնույթ ու ակնհայտ օպերատիվ լուծում պահանջող հարաբերությունների կարգավորումից: Ընդ որում, նկատենք, որ խնդիրը բնավ պետության հիմնական օրենքով ամրագրված իրավունքների ու ազատությունների սահմանափակման մասին չէ, որպիսի նախապայմանը խիստ իրավաչափ կլիներ. այն վերաբերում է սոսկ ընթացակարգային հարցի:

Ի դեպ, վերը նշված և բազմաթիվ այլ սահմանադրական դրույթներ, կարծում են, թելադրված են եղել սոսկ քաղաքական պարզունակ պատկերացումներով, այս կամ այն ինստիտուտի ժողովրդավարական բնույթի վերաբերյալ դեռևս ոչ համարժեք իրավական մշակույթի գերակայությամբ: Հակառակ դեպքում ինչպե՞ս կարող ենք մեկնաբանել Հայաստանի Հանրապե-

տության Սահմանադրության 19-րդ հոդվածով ամրագրված դրույթը, համաձայն որի՝ դռնփակ դատական նիստերում կարող է արգելվել լրատվության միջոցների «մասնակցությունը»: Ստացվում է, որ լրատվության միջոցները, որպես կանոն, մասնակցում են դատաքննությանը, ինչն արգելվում է միայն բացառիկ դեպքերում: Նկատենք, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում միանգամայն իրավաչափորեն խոսվում է բացառապես «ներկայության» մասին: Այսպիսով, սոսկ արտաքուստ անմեղ ձևակերպմամբ հավանաբար փորձել ենք առավել ժողովրդավար երևալ, անտեսելով, որ հանրության և լրատվության ներկայացուցիչներին դատավարության մասնակից դարձնելը հակասում է նույն Սահմանադրության հիմնադրույթներին, այն առավել բնորոշ էր խորհրդային իրավական համակարգին, որի պարագայում իրավաչափ էին համարվում «ժողովրդական դրուժինա», «հասարակական մեղադրող» և նմանաբնույթ այլ բազմաթիվ ինստիտուտները:

Սահմանադրաիրավական նորմերի անկատար բնույթն անխուսափելիորեն կանխորոշել է նաև խոցելի իրավակիրառ պրակտիկա: Այսպես, մեր երկրում ևս կոալիցիոն կառավարության ձևավորման հիմքում դրվել է հիմնախնդիրները համատեղ լուծելու նպատակաուղղվածությունը, սակայն իրականացման եղանակները, կոնկրետ պայմաններն ու կազմավորման, ինչպես նաև գործունեության կանոնները համահունչ չեն միջազգային չափանիշներին: Մենք դեռ կանդիդատանք այս հարցադրումներին, պարզապես նկատենք, որ *կոալիցիոն կառավարության դեպքում մեր երկրում շարունակում է ընդգծված գործել ոչ թե արհեստավարժության, այլ կուսակցականության սկզբունքն իր բոլոր դրսևորումներով՝ քվոտաներ, որոշումների ընդունման գործընթացում խորհրդարանական մեծամասնություն կազմող քաղաքա-*

կան կուսակցության վճռորոշ դիրք և այլն: Կոալիցիոն կառավարության ձևավորման, ավելին՝ անգամ ազգային միասնության կառավարության ձևավորման սկզբունքին համահունչ չէ խորհրդարանում ակնհայտ սակավ տեղ ունեցող կուսակցությունները ներգրավելու երևույթը: Այսպիսի պրակտիկան դիտվում է որպես խորհրդարանում երկրորդ կամ երրորդ ուժերն արհեստակա-նորեն թուլացնելու և մեկուսացնելու անընդունելի քաղաքականություն:

Բացի այդ, մեր երկրի քաղաքական կյանքում, ըստ էության, հավասարության նշան է դրված *«կոալիցիոն կառավարություն»*, *«ազգային միասնության կառավարություն»* ինստիտուտների միջև, որոնք միանգամայն տարբեր որակ ու ուղղվածություն ունեն: *Մասնավորապես, նկատելի խորհրդարանական մեծամասնության դեպքում առավել կիրառելի են ոչ թե կոալիցիոն կառավարության, այլ ազգային միասնության կառավարության կանոնները:*

Միջազգային փորձը: Կոնկրետ հարցադրումների վերլուծությանն անդրադառնալուց առաջ նախ նպատակահարմար ենք համարում հակիրճ ներկայացնել կոալիցիոն կառավարության վերաբերյալ միջազգային փորձը, քանզի այս ինստիտուտը մեր երկրում սոսկ առաջին քայլերն է անում՝ հիմքում ունենալով արտասահմանյան երկրների համանման փորձի վերաբերյալ, ըստ էության, ոչ այնքան համահունչ պատկերացումները: Նախապես նկատենք, որ միջազգային փորձի ուսումնասիրությունը խիստ պատասխանատու ու բարդ խնդիր է, քանզի միայն ներկա իրավիճակի առնչությամբ «գերազանց» իրազեկված լինելը ու դրանով ղեկավարվելը ոչ միայն կարող է անպտուղ լինել, այլև խիստ վտանգավոր, քանզի հարկ է իրավական կամ քաղաքական ցանկացած երևույթ գնահատել միայն համակարգված կերպով՝ իր զարգացման էվոլյուցիան և դրանք կանխորոշող նախադրյալները համամասնորեն հաշվի առնելով: Մասնավոր-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

րապես, եթե որևէ ժողովրդավարական երկրում ձևավորվել է կոալիցիոն կառավարություն և հաջողություններ է արձանագրում, դա բնավ չի նշանակում, որ անվերապահորեն այդպես կարող է լինել ցանկացած այլ երկրում: Հարկ է հաշվի առնել մի շարք քաղաքական, իրավական և բարոյա-հոգեբանական գործոններ, որոնք կանխորոշում են այդ ինստիտուտի «ճակատագիրը»:

Ինչպես նաև ազգային միասնության կառավարության ձևավորման նախադրյալները բազմաբնույթ են: Նախ, կառավարման այդպիսի կարգերը տրամաբանական և իրավաչափ են համարվում այն երկրներում, որտեղ գործում է որոշումների ընդունման կոլեգիալության սկզբունքը: Թերևս նաև դա է պատճառը, որ կոալիցիոն կառավարությունը խիստ հազվադեպ ինստիտուտ է Մեծ Բրիտանիայի պարագայում (այս երկրում Վարչապետը միանձնյա է որոշումներ ընդունում): Միաժամանակ, երբ խոսք վերաբերում է երկրի համար խիստ բարդ սոցիալ-քաղաքական մարտահրավերներ հաղթահարելուն, անգամ վերը նշված ունենաբնույթ այլ իրավական կարգավորումները բնավ խոչընդոտ չեն, որպեսզի կոալիցիաներ ստեղծվեն նաև այդպիսի երկրներում: Պատահական չէ, որ նույն Մեծ Բրիտանիայում այդ ինստիտուտին նախապատվություն են տվել 1915-1922թթ.՝ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, 1931-1945թթ.՝ Մեծ դեպրեսիայի և երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ և, վերջապես՝ 2010թ.՝ կապված դեռևս շարունակվող համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հաղթահարման անհրաժեշտության հետ: Ս.թ. մայիսին Հունաստանում կոալիցիոն կառավարության ձևավորումը ևս թելադրված է այդ երկրում ֆինանսատնտեսական խորացված ճգնաժամը հաղթահարելու նկատառումով:

Նույն կերպ է մեկնաբանվում նաև վերջերս Իսրայելում նոր ազգային միասնության կառավարության ստեղծումը. քաղաքական ուժերի մի սովոր հատված ակնկալում էր արտահերթ ընտրություններ, մինչդեռ՝ Բենիամին Նեթյահաուն ունակ գտնվեց քաղաքական տարաբնույթ ուժերի մասնակցությամբ ձևավորել նոր բնույթի կառավարություն. այս դեպքում արդեն հիմնական պատճառաբանությունը Իրանի հնարավոր ռազմական սպառնալիքն էր:

Այլ կերպ ասած, կոալիցիոն կառավարությունը, նախ և առաջ, դիտարկվում է իբրև պետության առջև ծանրացած բարդագույն խնդիրների (մեր պարագայում՝ ռազմական ընդհարումների վտանգ, շրջափակում և այլն) արդյունավետ լուծման քաղաքական գործիք: Այս խիստ կարևոր գործոնը հաշվի առնելով, կոալիցիոն կառավարություն է ձևավորվում անգամ այնպիսի երկրներում, որտեղ զուտ իրավական չափանիշներով կոալիցիայի ձևավորումը նպատակահարմար չի համարվում:

Ընդ որում, գրեթե բացառվում է խորհրդարանական մեծամասնություն կազմող կուսակցության կողմից կոալիցիա ստեղծելը միայն որոշ՝ իրեն «համակիր» կուսակցությունների կազմով, քանզի գերիշխում է այն դիրքորոշումը, ըստ որի՝ դա բացարձակապես աղերսներ չունի միացյալ ուժերով դժվարություններին դիմակայելու հետ: Վերջին հաշվով, եթե կուսակցությունների գաղափարախոսության, ծրագրերի և գործելաոճի միջև չկան խորը, սկզբունքային հակասություններ, ապա խորհրդարանական մեծամասնություն կազմող քաղաքական ուժի կողմից կոալիցիոն կառավարություն ձևավորելու հարցում «ընտրանքային վերաբերմունք» դրսևորելը զուրկ է որևէ իրավաչափ հիմնավորումից: Այդպիսի կամայական մոտեցումները ոչ թե նպաստում են ուժերի համախմբմանն ու հաղթահարում սոցիալական անհանդուրժողականությունը, այլ, ըստ էության, էլ ավելի են խորացնում առկա անհամաձայնությունները և արդեն

խորն արմատներ զգած տարակարծություններն ու դժգոհությունները:

Որպես կանոն, վերը նշված ընտրանքային կոալիցիոն կառավարություններ ձևավորվում են այն երկրներում, որտեղ սոցիալ-տնտեսական վատթար իրավիճակում իշխանության մաս չկազմած կուսակցությունները զրկվում են անգամ իրենց անդամների տարրական պահանջները (օրինակ՝ աշխատանքով ապահովելու) բավարարելու հնարավորությունից:

Ավելին, կոալիցիոն կառավարության կազմավորման հիմքում չպետք է դրվեն գործադիր իշխանության գործունեության բնույթին, խնդիրներին անմիջականորեն չառնչվող տարաբնույթ այլ նախապայմաններ, այդ թվում՝ ընտրական գործընթացներում կողմնորոշման և այլն: Խորհրդարանական մեծամասնություն կազմող քաղաքական ուժին հարիր չէ ապագա քաղաքական գործընկերներին առաջադրելու այնպիսի նախապայմաններ, որոնք հակասում են Սահմանադրության ոգուն: Մասնավորապես, հարիր չէ առաջադրել այնպիսի նախապայմաններ, որոնց լուծման պատասխանատուն ոչ թե տվյալ կուսակցությունն է՝ հանձնին իր վերադաս մարմնին, այլ ժողովուրդը, քանզի վերջինս չի կարող անվերապահորեն և ամբողջությամբ արտահայտել անգամ կուսակցության բոլոր անդամների դիրքորոշումը:

Այսպիսով, կոալիցիոն կառավարություն կամ ազգային միասնության կառավարություն, որպես կանոն, ավանդաբար կիրառվում է, երբ որևէ քաղաքական ուժի չի հաջողվում ձեռք բերել խորհրդարանական մեծամասնություն: Թերևս դրանով է բացատրվում այդ ինստիտուտի տարածված լինելը Գերմանիայում, Իտալիայում, Յնդկաստանում (13 կուսակցությունից է բաղկացած), Իսրայելում, Բելգիայում և այլն: Ընդ որում, մեծ դեր ունեն մաս ավանդույթները, ինչով և բացատրվում են ավանդաբար ձևավորված երկկուսակցականության պարագայում կոալիցիոն կառավարության ձևավորման միտումները Ավստրալիա-

յում: Ավանդույթի ուժով են կոալիցիաներ ստեղծվում մաս Կանադայում, Նոր Զելանդիայում և այլն:

Հարկ է մաս նկատել, որ վերը նշված ինստիտուտները ոչ միայն գործում են զուտ ավանդույթի, այլև սահմանադրական հիմնադրույթների ուժով: Այսպես, մենք արդեն անդրադարձանք ազգային միասնության կառավարության ինստիտուտին, նկատենք, որ այն սպառնիչ իրավական կարգավորում է ստացել, օրինակ, ՀԱՀ-ի Սահմանադրության 91-րդ հոդվածով, ըստ որի՝ խորհրդարանի ստորին պալատում առնվազն 20 տեղ ունեցող կուսակցությունը կարող է մասնակցել ազգային միասնության կառավարության ձևավորմանը և կաբինետում ունենալ առնվազն մեկ պորտֆել: Կոալիցիոն կառավարության ձևավորման իրավական կարգավորման է նվիրված մաս Բուլղարիայի Սահմանադրության 99 հոդվածը: Մի շարք երկրների Սահմանադրություններ (Բելգիա, Կանադա, Յնդկաստան, Լիբիա և այլն) ամրագրում են մաս տարբեր լեզվամշակութային, կրոնական և հանրության մասնաբնույթ այլ ներկայացուցիչների պարտադիր ներգրավվածությունը կառավարությունում: Հընթացս նկատենք, որ խորհրդարանում ակնհայտ նվազ տեղեր ունեցող կուսակցության հետ կոալիցիա կազմելը համահունչ չէ մաս միջազգային փորձին:

Կոալիցիոն կառավարություն ձևավորելու անհրաժեշտությունը պայմանավորող գործոնները: Նախ, ինչպես արդեն ընդգծվեց, միջազգային փորձը ևս կոալիցիոն կառավարություն ձևավորելու անհրաժեշտությունը հիմնականում փոխկապակցում է տվյալ պետության առջև ծառայած մարտահրավերների հաղթահարման խնդրով: Այս իրավիճակը բնավ չի ենթադրում, որ քաղաքական ուժերը միառժամանակ ընդհանրապես ձեռնպահ են մնում քաղաքական տարակարծություններից, սակայն վտանգավոր մարտահրավերներին համախմբված դիմակայելու անհրաժեշտության գիտակցումը հարկադրում է վերջիններ-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

րիս նույնիսկ այդ տարածայնությունների պարագայում փորձել մշակելու այնպիսի քաղաքական ծրագրեր, որոնք ընդհանուր գծերով ընդունելի կլինեն բոլոր կողմերին, և որոնց հաջողության գրավականը կարող է լինել հենց այդ ուժերի համախմբումը:

Մյուս կողմից, ինչպես արդեն նշեցինք, անգամ լուրջ մարտահրավերների բացակայության պայմաններում խորհրդարանական մեծամասնությունը բնավ երաշխիք չէ անարգել հաղթահարելու ցանկացած «սահմանադրական արգելք», այսինքն՝ ընդունելու ցանկացած օրենք կամ օգտվելու Սահմանադրությամբ վերապահված ցանկացած լիազորությունից: Չպետք է անտեսել, որ առանձին սահմանադրական դրույթներ որոշ հարցերի առնչությամբ խորհրդարանում բավարար չեն համարում պատգամավորների ընդհանուր թվի ծայրերի պարզ մեծամասնությունը: Այսպես, Սահմանադրության 83.1. հոդվածի համաձայն, մարդու իրավունքների պաշտպանի ընտրության համար պահանջվում է պատգամավորների ընդհանուր թվի ծայրերի առնվազն երեք հինգերորդը, իսկ Սահմանադրության 57-րդ, 59-րդ և 111-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում պահանջվում է անգամ պատգամավորների ընդհանուր թվի ծայրերի առնվազն երկու երրորդը և այլն: Հասկանալի է, որ կոալիցիայի բացակայության պարագայում այս նորմերի գործողությունը դրվում է մեծ հարցականի առաջ:

Այս «սահմանադրական խութերը», ըստ էության, լուծում են երկու հիմնարար խնդիր՝ ա) առավել էական հարցադրումների առնչությամբ ապահովել խորհրդարանի հնարավորինս ծանրակշիռ ներկայացուցչություն և բ) քաղաքական ուժերին հարկադրել նախապատվությունը տալու ոչ այնքան ժողովրդի մի, թեկուզ և մեծ հատվածի կողմից քվե ստացած կառավարման «մենաշնորհային» տարբերակին,

որքան քաղաքական ուժերի միջև համագործակցության ու իրական հանդուրժողականության ձևավորմանը:

Ի դեպ, կոալիցիոն կառավարության սկզբունքը, վերը նշված նախապայմանների պահպանմամբ, առավել համահունչ է ժողովրդաիշխանության սկզբունքին, քանզի վերջինիս էությունը սոսկ ընտրական գործընթացներին մասնակից լինելը չէ, ժողովուրդը պետք է ի գորու լինի իշխանություն իրականացնելու նաև «Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով» (Սահմանադրության 2-րդ հոդված): Իհարկե, ծայրահեղություն կլինի պնդել, թե խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի մասնակցությամբ կոալիցիոն կառավարություն չձևավորելը բացառում է ժողովրդաիշխանությունը. պարզապես խոսքն այն մասին է, թե որ մոտեցումն է համարվում առավել համահունչ ժողովրդաիշխանության էությանը:

Կոալիցիոն կառավարություն ձևավորելու հնարավորությունը պայմանավորող գործոնները: Սկզբունքորեն կոալիցիոն կառավարության ձևավորման հնարավորությունն ու անհրաժեշտությունը պայմանավորող գործոններն այքման էլ տարաբնույթ չեն, և կարելի էր դրանք միասնական հետազոտության նյութ դարձնել, սակայն նպատակահարմար համարեցինք առանձնացնել, հատկապես այնպիսիք, որոնք իրենց էությամբ առավելապես պայմանավորում են կոալիցիոն կառավարության ձևավորման հնարավորությունը:

Նախ, հարկ է նկատել, որ Սահմանադրությունը չի բացառում կոալիցիոն սկզբունքով կառավարության ձևավորումը, ավելին՝ այն առավել իրավաչափ է համարվում: Մենք արդեն անդրադարձանք ժողովրդաիշխանության խնդրին: Այժմ անդրադառնանք որոշ մասնավոր դրույթների: Այսպես, Սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, Հանրապետության Նախագահը վարչապետ է

նշանակում՝ «պատգամավորների տեղերի բաշխման և պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա... պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին»։ Նշված նորմից, թերևս, բխում է, որ վարչապետի նշանակման հարցում, նախ և առաջ, նշանակություն է տրվում պատգամավորական խմբակցությունների կարծիքին, որպիսի պարագայում առավել նախընտրելի է համարվում, երբ «պատգամավորների մեծամասնություն» եզրույթն ընկալվում է ոչ թե սոսկ քանակական ցուցանիշներով, այլ հենց խմբակցությունների կարծիքի հաշվառմամբ։

Կոալիցիոն սկզբունքով կառավարության ձևավորմանը համահունչ է նաև կառավարության գործունեության կոլեգիալ կարգը։ Մեր երկրում կառավարությունը որոշումներ է ընդունում անդամների մեծամասնության կողմից այն հավանության արժանանալու դեպքում։ Ի դեպ, կառավարության գլխի, կամ ինչպես որոշ երկրներում է կոչվում, «պրեմիեր մինիստրի» պաշտոնի ծագման նախապատմությունը բոլորովին այլ բնույթ ունի։ Այն առաջին անգամ ծագել է Անգլիայում. Հանովերի բնակիչ Քեորգ 1-ին թագավորը չափազանց վատ է խոսել անգլերեն և վատ է ճանաչել իր կառավարությանը, ուստի կարիք է առաջացել նախարարներից մեկին առանձնացնելու, որը պատասխանատու կլիներ թագավորի և կառավարության միջև կապի համար, ու հենց այդ նախարարն էլ կոչվել է՝ *prime*⁴։ Հետագայում վերջինս վերածվեց կառավարության գլխի։

Ի դեպ, կոալիցիոն կառավարության ձևավորումը գործնական իմաստ ունի հատկապես խորհրդարանական հանրապետություններում, մինչդեռ նախագահական հանրապետության դեպքում այն գրկվում է որևէ իմաստից, քանզի նախագահը միանձնյա է ղեկավարում գործադիր

իշխանությունը՝ որոշելով քաղաքական գործունեության ողջ ուղղվածությունը⁵։ Կիսանախագահական հանրապետության պարագայում, ինչպիսին մեր երկիրն է, կոալիցիոն կառավարությունը չի կարող վճռորոշ նշանակություն ունենալ, սակայն վերջինիս ձևավորումը ևս չի կարող անհեռատես կամ անիրատեսական համարվել։ Ավելին, կիսանախագահական հանրապետության պարագայում կոալիցիոն կառավարությունը, մեր կարծիքով, կարող է դիտարկվել որպես որոշ համապետական խնդիրներ միանձնյա լուծելու լուրջ հակալիզի։ Խնդիրն այն է, որ միակուսակցականության պարագայում վճռորոշ ու անվերապահ ուղղորդող դեր է ունենում Հանրատության Նախագահի դիրքորոշումը (դա հաճախ հասու է լինում նաև հրապարակային կարգով, օրինակ՝ Նախագահը նախապես հրապարակայնորեն հայտնում է իր մտեցումները), որը գործնականում գրեթե քննարկման ենթակա չէ, մինչդեռ կոալիցիոն կառավարության պարագայում իրական կոլեգիալ քննարկումներ կազմակերպելու հավանականությունը մեծանում է։

Կոալիցիոն կառավարության ինստիտուտին որևէ կերպ չի խոչընդոտում Սահմանադրությամբ և ընթացիկ օրենսդրությամբ նախատեսված իրավական նորմերի բնականոն կիրառումը, իսկ եթե գործնականում արձանագրվում են շեղումներ, ապա դրանք պարզապես իրավախախտումներ են և անմիջականորեն պայմանավորված չեն կառավարության ձևավորման սկզբունքով։ Այսպես, պաշտոնական աղբյուրները բազմիցս են վկայում այն մասին, որ առանձին նախարարներ քաղաքացիական ծառայության կտրվածքով կադրային քաղաքականություն իրականացնելիս նախապատվությունը տալիս են «յուրային» կուսակցականներին⁶։ Նկատենք, սակայն, որ քաղաքացիական ծառայողների պարագայում կուսակցական պատկանելիությունն ընդհանրապես չի կարող որևէ իրավական նշանակություն ունենալ, իսկ կու-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

սակցական պատկանելիության սկզբունքով կադրային քաղաքականություն իրականացնել կարող է բավարար հիմքերի առկայության դեպքում որակվել ոչ միայն կարգապահական, այլև քրեական հանցագործություն: Հավելենք, որ Արևմտյան Եվրոպայի երկրներում այս կարգի խախտումներն անվերապահորեն մշտապես դառնում են պատշաճ քննարկման առարկա: Բնորոշ է, օրինակ, ընդամենը երկու տարի առաջ Ֆրանսիայի նախկին նախագահ Ժակ Շիրակի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը՝ Փարիզի քաղաքապետարանում կուսակցական պատկանելության սկզբունքով մի քանի աշխատակիցների տեղավորելու փաստի առթիվ:

Մյուս կողմից, ակնհայտ է, որ կոալիցիոն կառավարության պարագայում համեմատաբար մեղմվում է կուսակցական պատկանելիության սկզբունքով կադրային քաղաքականություն վարելու արատավոր պրակտիկան, քանի որ բազմակուսակցական կազմ ունեցող կառավարություններում ակամա ձևավորվում է միմյանց նկատմամբ հսկողություն իրականացնելու առողջ մթնոլորտ, ինչի հավանականությունը նվազում է միակուսակցական կառավարության պարագայում: Կարծում են, հենց պաշտոնական աղբյուրներից տարածված հայտարարություններն այն մասին, որ երկրում առկա են վերը նշված բնույթի խախտումներ, ևս ոչ պատշաճ նախապայմաններով կազմված ու գործող կոալիցիոն կառավարության գոյության արդյունք է:

Ինչպես հայտնի է, մեր երկրում կոալիցիոն կառավարության ձևավորման իրավական հիմք է համարվում հուլիսի 19-ին հավանաբար բարի ավանդույթի է վերածվում: Մենք ևս համամիտ ենք հուլիսի 19-ի ինստիտուտին, քանզի դեռևս չեն ձևավորվել պատշաճ իրավաքաղաքական պատկերացումներ ու ավանդույթներ:

Ի դեպ, հուլիսի 19-ի ինստիտուտն ինքնին խոցելի չէ, սակայն տարակուսանքի տեղիք կարող է տալ այն, երբ այդ անհրաժեշտ փաստաթուղթը դառնում է անհարկի լայն տարածում ստացած և, ըստ էության, իր արժեքը կորցրած լծակի: Մասնավորապես, անընդունելի է, երբ հուլիսի 19-ը են ստորագրում այնպիսի կառույցների ղեկավարներ, որոնց փոխհարաբերություններն սպառնիչ կանոնակարգված են օրենսդրությամբ, իսկ վերջիններս էլ պարզապես իրավասու չեն «վերախմբագրելու» դրանք:

Այսպիսով, թեպետ կոալիցիոն կառավարության ձևավորման համար Սահմանադրությունն արգելքներ չի սահմանում, մասնավորապես վերջինս չի բովանդակում խորհրդարանային մեծամասնություն ունեցող կուսակցության կողմից այլ կուսակցությունների հետ համախմբվելու հնարավորությունը, սակայն առավել նպատակահարմար է դիտվում այդ ինստիտուտի հիմնադրույթների ամրագրումը: Ընդ որում, դա առավել նպատակահարմար է անել օրենքով, քանզի խոսքը իշխանության ճյուղ ներկայացնող մարմնի ձևավորմանն առնչվող հարաբերությունների մասին է, ինչը հարիր չէ դարձնել ենթաօրենսդրական ակտի կանոնակարգման նյութ:

Ի դեպ, կոալիցիոն կառավարության իրավական կարգավորմանն առնչվող սահմանադրական հիմնադրույթների ամրագրման անհրաժեշտության կողմնակիցները նկատելի են, հատկապես, հետխորհրդային շրջանի երկրներում, որտեղ համեմատաբար հաճախ են ծագում մարտահրավերներին մեծ ու համախմբված ուժերով դիմակայելու սոցիալ-քաղաքական իրավիճակներ, իսկ իրավական անորոշությունը հանգեցնում է ոչ բարեհաճ ավանդույթների ձևավորմանը⁷:

Բարոյահոգեբանական ասպեկտները: Հաճախ, տուրք տալով հանրության մի որոշ հատվածի՝ իշխանությունների նկատմամբ անվերապահ անհանդուրժողական, բացասական վերաբերմունքին, և ըստ այդմ էլ առաջիկա ընտրություններին առա-

վել թվով քվեներ ձեռք բերելու ակնկալիքով որոշ քաղաքական ուժեր փորձում են անհիմն բացահայտ տարանջատվել իշխանություններից և արմատական ընդդիմադիր կեցվածքով անվերապահորեն հակադրվել վերջինիս բոլոր նախաձեռնություններին: Ընդ որում, զինանոցում հայտնվում են ոչ միայն ակնհայտ հիմնավորված ու հանրության շահերին անվերապահորեն համահունչ օրինագծերի, այլև ողջ պետական ապարատի գործունեության *ծախողման ակցիաները*: Օրինակ, վերջիններիս պատկերացմամբ միանգամայն ընդունելի են համարվում այնպիսի նախաձեռնությունները, ինչպիսիք են՝ օրինագծի առնչությամբ երկարաշունչ և միմյանց կրկնող ելույթները, նույնաբովանդակ հարցերով հանդես գալը, առանց որևէ իրական պատճառի ընդմիջումներ վերցնելը և այլն:

Ընդ որում, երբեմն այդ քայլերն այնքան ակնհայտ բնույթ են կրում, որ ակամա նպաստում են հենց իշխանությունների վարկի բարձրացմանը, ինչն էլ որոշ քաղաքական գործիչների հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ ընդդիմադիր կեցվածք ունեցող քաղաքական ուժերի մի որոշ հատված սոսկ կեղծ ընդդիմություն է և բացառապես իրականացնում է վերահսկելի քաղաքական գործունեություն:

Հարկ է աստիճանաբար հանրության մեջ «կոտրել» իշխանությունների նկատմամբ անվերապահորեն բացասական նախատրամադրվածության երևույթը, այն չդարձնել քաղաքական ուժերի կողմից գրավիչ և էլ ավելի հրահրելու եղանակով այն «շահեկանորեն» օգտագործելու գործիք: Սոցիալական դժգոհությունը պետք է հնարավորինս համարժեք ու անաչառ լինի, որպեսզի իշխանությունները ի գորու լինեն դրա հաշվառմամբ վերանայելու իրենց քաղաքական ծրագրերը, գործունեության ոճը և դրանք դարձնելու առավել իրատեսական ու հանրության հավաքական կամքին հնարավորինս համահունչ:

Ցավոք, ներկայումս իշխանությունները ևս համարժեք միջոցներ չեն ձեռնարկում

հանրության իրական դժգոհությունները, ընդհանրապես հասարակական կարծիքը հնարավորինս համարժեք բացահայտելու ուղղությամբ: Անհասկանալիորեն «մոռացության» են մատնվել այնպիսի արժեքավոր ինստիտուտներ, ինչպիսիք են հանրաքվեները, հանրային լսումները և այլն: Նկատենք, որ այդ միջոցառումների կազմակերպման համար ֆինանսական դժվարությունների վերաբերյալ պատճառաբանությունները չեն կարող հիմնավորված համարվել, քանզի դրանք կարող են իրականացվել ընտրական գործընթացներին զուգահեռ, իսկ վերջիններիս դեպքում արդեն իսկ կատարվում են անհրաժեշտ ծախսեր:

Վերը նշված իրավիճակի մասին է վկայում հետևյալ փաստարկը. դեռևս 2008թ. դեկտեմբերի 26-ին ընդունված օրենքով կառավարությունը նախաձեռնեց «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարել, ինչը վերջինիս վերապահեց իր նախաձեռնությամբ «պետական կյանքի կարևորագույն հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքի բացահայտմանն ուղղված» հանրաքվե կազմակերպելու իրավունք (8.1. հոդված): Ի դեպ, այդ օրենքն ընդունվեց մեծ դժվարությամբ, քանզի պատգամավորների մի ստվար հատված հակված էր այն դիրքորոշմանը, ըստ որի այն հակասահմանադրական ուղղվածություն ուներ և կոչված էր բացառապես հայ-թուրքական հայտնի արձանագրությունների վերաբերյալ հասարակական կարծիքի բացահայտմանը: Եվ այդքան մեծ արգելքներ հաղթահարելուց հետո, որքան էլ տարօրինակ թվա, կառավարությունն առ այսօր զեթ մեկ անգամ չի նախաձեռնել պետական կյանքի կարևորագույն հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքի բացահայտմանն ուղղությամբ որևէ հանրաքվե: Արդյունքում ստացվում է, որ գործադիր իշխանությունը հաճախ նախաձեռնում է օրինագծեր, որոնք սոսկ գաղափարական ուղղվածություն ունեն և միտված չեն որևէ գործնական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

խնդրի լուծմանը:

Կոալիցիոն կառավարության հնարավոր խուլթերը: Անգամ լավագույն նախադրյալների ու նախապայմանների առկայության դեպքում կոալիցիոն կառավարությունն անխուսափելիորեն ունի որոշ թերություններ, որոնց հաղթահարումը կամ գոնե մեղմումը խիստ կարևոր խնդիր է: Նախ, գործնականում չի բացառվում, որ քաղաքական վարկանիշ բարձրացնելու նկատառումով առանձին կուսակցություններ փորձեն առաջադրել այնպիսի ծրագրային հիմնադրույթներ, որոնք էապես կնվազեցնեն կառավարության գործունեության արդյունավետությունը: Կարծում եմ, նմանաբնույթ ամբոխավարական հնարքներին հակադրվելու ու դրանք հնարավորինս չեզոքացնելու նկատառումով էական դերակատարում կարող են ունենալ հանրության կարծիքի բացահայտմանն ուղղված իրավական գործիքները, որոնց նշանակությանն արդեն անդրադարձանք վերևում:

Հաջորդ խնդիրն առնչվում է կադրային քաղաքականության հետ: Ըստ էության, նախարարների թեկնածուներ առաջադրելու իրավունքը Սահմանադրությամբ վերապահված է վարչապետին, սակայն հասկանալի է, որ կոալիցիոն կառավարության պարագայում վերջինիս իրավական հնարավորությունները նվազում են: Իսկ մարտահրավերներին դիմագրավելու երաշխիքը արհեստավարժ, միասնական ու կանխատեսելի չափանիշներով իրականացվող կառավարությունն է: Տվյալ դեպքում հնարավոր ծախողունները բացառելու և դրա արդյունքում հաճախակի արձանագրվող անհարկի փոփոխությունները կանխելու նկատառումով, կարծում եմ, անհրաժեշտ է կոալիցիոն կառավարության հուշագրում հստակ անդրադարձ կատարել նաև կառավարության կազմին ներկայացվող պահանջներին:

Խնդրահարույց է նաև քաղաքական առողջ պայքարի համար նպաստավոր պայմանների ու մթնոլորտի ստեղծման հարցադրումը: Գաղտնիք չէ, որ կոալիցիոն կառավարությունը, մարելով անհարկի քաղաքական հակամարտությունները, միաժամանակ որոշ չափով նվազեցնում է քաղաքական ուժերի այն նվազագույն ակտիվությունը, որն անհրաժեշտ է բազմակարծություն և տեսակետների միջև «քաղաքակիրթ պայքար» տանելու համար: Այս նկատառումով է, որ երբեք չի կարելի նվազեցնել կուսակցությունների ինքնուրույնությունը, սահմանափակել որոշ ոչ ծրագրային օրենսդրական ակտերի կամ դրույթների դեմ քվեարկելու նրանց իրավունքը և այլն: Ի դեպ, այսպիսի գործելաճոճ նաև ընդդիմադիր զանգվածի մոտ չի առաջացնի անվերապահ անվստահություն իշխանությունների հանդեպ:

Մենք արդեն անդրադարձանք այն հարցադրմանը, որ սոցիալ-տնտեսական վատթար պայմաններ ունեցող երկրներում կոալիցիոն կառավարության մեջ մտնելու խթան կարող է հանդիսանալ նաև կուսակցության անդամների որոշ պահանջները հնարավորինս բավարարելու, նրանց իրավունքներն առավել պաշտպանված դարձնելու միտումը: Այս հանգամանքը հիմնովին փոխում է վերը նշված, թերևս, դասական պատկերացումները կոալիցիոն կառավարության առնչությամբ, քանզի երբ դրա հիմքում դրվում են ոչ թե լուրջ մարտահրավերներն ուժերի համախմբմամբ հաղթահարելու, այլ զուտ անձնական կամ կուսակցական մեղ շահեր պաշտպանելու ակնկալիքը, ապա մեր մյուս դատողություններն այլևս այդ իրավիճակին պարզապես չեն վերաբերում: Այս դեպքում, թերևս, գործ ունենք ակնհայտ կեղծ քաղաքական գործընթացների հետ:

Եզրակացություն: Կառավարման կոալիցիոն սկզբունքն ինքնին չի կարող համարվել նախընտրելի կամ անհիմն, այն պայմանավորված է բազմաթիվ քաղաքական, իրավական և բարոյահոգեբանական

գործոններով, որոնց համարժեք ու համակարգված հաշվառմամբ միայն հնարավոր կլինի սպառնիչ դատողություններ անել դրա առավելությունների ու թերությունների վերաբերյալ: Կոալիցիոն կառավարության բուն էությունը երկրի համար ակնհայտ մեծ վտանգ ներկայացնող մարտահրավերների դեմ համատեղ ուժերով պայքար

կազմակերպելն է, այն երբեք չի կարող քաղաքական ուժերի ձեռքին ծառայել որպես գործիք՝ խորհրդարանում պատշաճ ներկայացուցչություն չունեցող քաղաքական ուժերի ազդեցությունը նվազեցնելու և նրանց ոչ իրավաչափ քաղաքական ծրագրեր պարտադրելու նկատառումով:

¹ Տե՛ս Политология: Словарь-справочник / М.А. Василик, М.С. Вершинин и др. – М.: Гардарики, 2001. – 328 с. էջ 225:
² Այս առնչությամբ բնորոշ են 2012թ. մայիսի 6-ի ընտրություններից հետո ՀՀԿ-ի ներկայացուցիչների՝ մամուլում բազմիցս արտահայտված միանշանակ դիրքորոշումները:
³ Տե՛ս Казырин А.Н., Глушко Е.К. и др. Правительство в зарубежных странах: Под ред. проф., д.ю.н. А.Н. Козырина и к.ю.н. Е.К. Глушко. — М.: Ось-89, 2007, էջ 17-18:
⁴ Տե՛ս История буржуазного конституционализма 19-го века. М.: 1986, էջ 8:
⁵ Տե՛ս Правительство, министерства и

ведомства в зарубежных странах, М.: Юридическая литература, 1994, էջ 6-7:
⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության կայքէջում, 2009-2011թ. կառավարության նիստերում Քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի կողմից հնչեցրած հայտարարությունների վերաբերյալ զետեղված նյութերը՝ www.gov.am:
⁷ Տե՛ս, օրինակ, Совгиря О.В., „Конституционно-правовой статус парламентского большинства (коалиции) и парламентской оппозиции в Украине,„ Государство и право, N5, 2011 май, էջ 81:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**COALITION GOVERNMENT
(legal aspects)****Gevorg DANIELYAN**

*Advisor to the RA Constitutional Court,
Chairman of the Board of the Center of
Constitutional Law,
Doctor of Law, Professor*

The article “Coalition Government” (legal aspects) of the advisor to the RA Constitutional Court, Chairman of the Board of the Center of Constitutional Law Gevorg Danielyan concerns the scientific research of the legal aspects of coalition government, as well as government of national agreement, which nowadays have great importance in the domestic legal system.

The author has done a comparative legal analysis of the international and domestic practice formed during the last five years concerning these legal institutions, discussed fundamental issues regarding this institution, revealed its positive and negative aspects, as well as the ways of its introduction into the domestic legal system, more efficient variants of legal regulation.

The given scientific article is considered as the first research which concerns the institution of coalition government. It can have an orienting importance for scientific studies done in this sphere and regulation of political processes.

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՋՉՈՒԹՅՈՒՆԸ՝ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐ ԳՐԱՎԱԿԱՆ

Մարինե ՍԱՐԳՍՅԱԼ

*ՀՀ կառավարության աշխատակազմի
իրավաբանական վարչության
առաջատար մասնագետ*

Հայաստանի Հանրապետությունում նախընտրական քարոզչությունը և դրա իրավական կարգավորումն սկսվել են անկախացման առաջին տարիներից, երբ մշակվում և ձևավորվում էր ՀՀ Սահմանադրությունը և երկրի իրավական համակարգը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ ժամանակաշրջանում նախընտրական քարոզչության կազմակերպումը սոցիալական, տնտեսական և քաղաքական անկայուն պայմաններում հակասական և հեղհեղուկ բնույթ է կրել, ցածր է եղել նաև ընտրություններին մասնակցողների ընտրական գիտելիքների մակարդակը, մեծ թիվ են կազմել ընտրախախտումները, օգտագործվել են քարոզարշավի՝ օրենքով չնախատեսված ձևեր և մեթոդներ:

Չնայած վերջին տարիներին հանրապետությունում ընտրական իրավունքի և ընտրական համակարգի ոլորտներում իրականացված բարեփոխումներին՝ այնուամենայնիվ նախընտրական քարոզչության օրենսդրական կարգավորումը դեռ լիովին չի ապահովում թեկնածուների և կուսակցությունների համար հավասար պայմանները, որն բացասաբար է անդրադառնում երկրի ընտրովի մարմինների՝ ժողովրդավարական սկզբունքով ընտրությունների անցկացման և այդ ինստիտուտի հանդեպ ժողովրդի վստահության ձևավորման վրա: Ուստի նախընտրական քարոզչության հստակ իրավական կարգավորումը, դրա գործնական կիրառման գործընթացների ժողովրդավարացումը իրավական պետություն ունենալու և հասարա-

կության վստահությունը ձեռք բերելու առաջնային խնդիրներից մեկն է: Հայտնի է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո նրա մեջ մտնող հանրապետությունները նախընտրական քարոզչության փորձ չունեին այն պարզ պատճառով, որ այդ երկրներում չկային քաղաքական և գաղափարական բազմակարծություն, ազատ և ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու անհրաժեշտ օրենքներ և պայմաններ: Գաղտնիք չէ, որ խորհրդային տարիներին նախընտրական քարոզչությունը կուսակցական-պետական մարմինների կողմից դիտվում էր որպես քաղաքական քարոզչություն՝ մարքս-լենինյան գաղափարախտության լույսի ներքո:

Հայաստանի անկախացումից հետո փոխվեց իրադրությունը: 1990–ական թվականների սկզբին հանրապետության քաղաքական կյանքը նշանավորվեց բազմակուսակցության ձևավորմամբ, որը հանգեցրեց նախընտրական քարոզչական նոր ձևերի և միջոցների որոնման, ազատ, ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու անհրաժեշտությանը: Իսկ այն իր հերթին հանգեցրեց նախընտրական քարոզչությունը կարգավորելու և անցկացնելու վերաբերյալ նոր իրավական ակտերի մշակմանը և ընդունմանը¹:

Համառոտ պատմական անդրադարձն անգամ ցույց է տալիս, որ նախընտրական քարոզչությունը («քարոզչություն», «քաղաքական քարոզչություն», «նախընտրական քարոզչություն») ուղեկցել է մարդկությանը նրա պատմության ողջ ընթացքում: Իրավական գրականության մեջ «նախընտրական քարոզչությունը» ներկայացվում է որպես որոշակի գործունեություն, որը նպատակ ունի խթանելու այս կամ այն թեկնածուին, կուսակցությանը, կուսակցական դաշինքին կողմ կամ դեմ քվեարկելուն: Այդ գործընթացը ժամանա-

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Կի ընթացքում կատարելագործվել է՝ ներառելով նոր արդյունավետ մեթոդներ և ուղիներ: Այսպես, օրինակ, դեռ մ.թ.ա 8-6-րդ դարերում Աթենքում կարծիքների պայքարը թեկնածուի ընտրության շուրջ տարվում էր միայն քննարկումների փուլում, և երբ ընդհանուր կարծիք էր ձևավորվում, հարցը դրվում էր քվեարկության: Այսինքն՝ քարոզչության և ընտրության փուլերը անմիջականորեն կապված էին միմյանց հետ: Կամ՝ հռոմեական կայսրության ժամանակ (մ.թ.ա. 5-3-րդ դդ.) քարոզչությունը ընտրական համակարգի ինքնուրույն փուլ էր համարվում այն պահից, երբ ընտրողի անունը նշվում էր թեկնածուների ցուցակում:

Քարոզչության ամենատարածված ձևը թեկնածուի շրջայցելություններն էին ընտրողներին: Այդ հեռավոր ժամանակներում արդեն կային քարոզչության առաջին սահմանփակումները. արգելվում էին ընտրողների համար կազմակերպվող անվճար խնջույքները, միջոցառումները, դրամական միջոցների (ընտրակաշառքի) բաժանումը և այլն:

Ընտրական համակարգի ժողովրդավարացման հետ ծագեցին, զարգացան և կատարելագործվեցին ընտրողների համակրանքը, նրանց ձայներն ստանալու եղանակներն ու միջոցները: Օրինակ՝ միջնադարյան Անգլիայի պառլամենտական ընտրությունների համակարգը, միջնադարյան Ֆրանսիայի ընտրական արարողակարգը, ռուսական կայսրության ընտրակարգը և այլն: Այս բնագավառում որոշակի փոփոխություններ տեղի ունեցան նաև 17-18-րդ դարերում: Եվրոպական պետությունների զարգացումը, քաղաքական, մշակութային կյանքի ազատականացումը պահանջում էին նաև որոշակի փոփոխություններ պետական կառավարման համակարգում՝ հասարակության ավելի լայն խավերի մասնակցությունը պետության կառավարման գործում (աշխատողներ, քաղաքա-

գետներ, աղքատ բնակիչներ, արհեստավորներ և այլն):

Այդ առաջընթացի կարևորագույն ուղղություններից մեկը նախընտրական քարոզչության կարգավորման գծընթացի կատարելագործություն էր, որը սկզբունքային էական նշանակություն ուներ ընտրություններում հաղթելու համար:

Հայաստանի համար դժվար է այսպիսի պատմական ակնարկ ներկայացնել, քանզի երկար ժամանակ պետականություն չունեցող հայ ժողովրդի երկու հատվածներն էլ ենթարկվել են մի դեպքում թուրքիայի, մյուս դեպքում Ռուսաստանի ընտրական օրենքներին: Իսկ 20-րդ դարում ձևավորված Հայաստանի երեք հանրապետություններն էլ քննարկվող հիմնախնդրի առնչությամբ ունեցան իրենց ուրույն մոտեցումները: Առաջին հանրապետության ընտրական օրենսդրությունը ձևավորվեց պատմական խառը ժամանակներում, երբ Հայաստանը գտնվում էր հասարակական, քաղաքական և սոցիալական ծանր կացության մեջ, իսկ քաղաքական ոլորտում որոշիչ էր դաշնակցության գաղափարական ազդեցությունը, չնայած պայքարը գնում էր ավելի քան տասը քաղաքական կուսակցությունների միջև: Երկրորդ հանրապետությունը՝ Հայկական Խորհարդային Սոցիալիստական Հանրապետությունը, գտնվում էր ԽՍՀՄ կազմում, և նրա ընտրական համակարգը ձևավորվում էր միակուսակցական սկզբունքով: Այլ էր հիմնախնդրի դրվածքը Հայաստանի երրորդ Հանրապետությունում. փորձ է արվում կառուցել իրավական պետություն՝ բազմակարծության, գաղափարական տարբեր ուժերի հակամարտության պայմաններում, և ընտրական գործընթացը կանոնակարգելու, ժողովրդավարացնելու ուղիներից մեկը շարունակում է մնալ նախընտրական քարոզչության կարգավորումը՝ նորագույն տեխնոլոգիաների, միջազգային առաջադիմական փորձի ներդրմամբ, ընտրողի իրավունքների պահպանմամբ, ընտրական գործընթացներում բիրտ ուժի միջամտութ-

յունների սահմանափակմամբ: Հայաստանի Հանրապետության նոր ընտրական օրենսգրքում (ընդունվել է 2011 թվականի մայիսի 26-ին) նախընտրական քարոզչությանը հատկացված են 18-22-րդ հոդվածները, որոնցում մանրամասնորեն ներկայացվում են նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքները (հոդվ.18), նախընտրական քարոզչությունը զանգվածային լրատվական միջոցներով (հոդվ.19), քարոզչական պաստառների և քաղաքական տպագիր այլ նյութերի օգտագործման կարգը (հոդվ.20), ընտրողների կամքի ազատ արտահայտման վրա ներգործության արգելումը (հոդվ.21), քաղաքական, հայեցողական պաշտոններ զբաղեցնող պետական, քաղաքացիական, տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայող թեկնածուների նախընտրական քարոզչության սահմանափակումները (հոդվ.22):

Հայտնի է, որ նախընտրական քարոզչության ընթացքում առավել կարևորվում են քարոզչության իրականացման ժամկետները, ձևերն ու մեթոդները, քանզի այդ գործընթացների հաջող կազմակերպումից են զգալիորեն կախված ընտրությունների արդյունքները: Պատահական չէ, որ ընտրությունների նախընտրական փուլում հենց այդ ոլորտներում է, որ ամենից շատ են խախտումները: Դրան, մեր կարծիքով, հիմնականում նպաստում են օրենսդրական կարգավորման թերությունները, բացթողումները և անհստակությունները: Այսպես, Հայաստանի Հանրապետության նախկին ընտրական օրենսգրքի (ընդունվել է 1999թ. փետրվարի 5-ին՝ 11.06.2010.թ. փոփոխություններով) 18-րդ հոդվածի (կետ 5) համաձայն՝ «Նախընտրական քարոզչությունը սկսվում է թեկնածուների և կուսակցությունների գրանցման համար նախատեսված վերջին օրվան հաջորդող օրը և վերջանում է քվեարկությունից մեկ օր առաջ»: Այստեղից հետևում է, որ օրենսգրքում կոնկրետ սահմանվում է ընտրարշավի պաշտոնական մեկնարկի

սկիզբը և վերջը:

Իհարկե, ընտրական օրենսգիրքը չէր կարգավորում (չէր էլ կարող կարգավորել) քարոզարշավին մասնակցող կուսակցությունների վարքագիծը քարոզարշավի մեկնարկից առաջ, սակայն նման գործողությունները (բարեգործության անվան տակ կենցաղային վարձերի վճարումներ, գյուղատնտեսական մշակաբույսերի և վառելանյութի հատկացում, առանձին տեխնիկական ապրանքների բաժանում ուսումնական հաստատություններին, առողջապահական տարբեր բնույթի միջոցառումներ) կարող են էական ազդեցություն ունենալ քաղաքացիների գիտակցության, ուստի և ընտրությունների արդյունքներ վրա: Դրա համար, մեր կարծիքով, կարելի էր մտածել քարոզարշավի մեկնարկից առաջ թեկնածուների և կուսակցությունների կողմից իրականացվող միջոցառումների օրենսդրական արգելքների մասին:

Քննարկվող հիմնախնդրի կարգավորումը, մեր կարծիքով, ավելի բարվոք չէ նոր ընտրական օրենսգրքում (ընդունվել է 2011թ. մայիսի 26-ին): Օրենսգրքի 18-րդ հոդվածում (3-րդ մաս) գրված է. «Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է թեկնածուների, կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար սույն օրենքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում է քվեարկության օրվանից մեկ օր առաջ»: Սակայն նույն հոդվածում (2-րդ մաս) ավելացված է, որ «Նախընտրական քարոզչության ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում սույն օրենսգրքով չարգելված այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը»²:

Մի կողմ թողնենք այն, թե ինչու կուսակցություններն իրենց նախընտրական քարոզչությունը պետք է սկսեն ոչ թե ցուցակների գրանցման համար նախատեսված վերջին օրվան հաջորդող մյուս օրվանից, այլ այդ (վերջին) օրվան հաջորդող 7-րդ օրը³: Ինչո՞ւ է օրենսդիրը արհեստական-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

րոն 7 օրով կրճատում նախընտրական քարոզչության ժամկետը: Սակայն առավել կարևոր է այն, որ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ և 2-րդ մասերի շարադրանքում, մեր կարծիքով, առկա է բովանդակային հակասություն: Մի կողմից, նշված կետի 3-րդ մասով սահմանվում են քարոզարշավի կոնկրետ ժամկետները (սկիզբն ու ավարտը), մյուս կողմից նույն այդ կետի 2-րդ մասով նախատեսված է, որ նախընտրական քարոզչության ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում օրենսգրքով չարգելված այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը:

Խնդիրն այն է, որ ՀՀ ընտրական օրենսգրքն արգելում է քարոզչության իրականացումը բացառապես «քվեարկության և դրան հաջորդող օրը»: Այլ ժամանակահատվածներում նախընտրական քարոզչության արգելման վերաբերյալ ընտրական օրենսգրքը նորմեր չի բովանդակում: Նրանում առկա նման բնույթի որոշ նորմեր վերաբերում են միայն առանձին սուբյեկտների, որոնց արգելված է զբաղվել քարոզչական գործունեությամբ⁴:

Ասվածից պարզորոշ հետևում է, որ ընտրական օրենսգրքը հնարավորություն է ընձեռում նախընտրական քարոզչության իրավունք ունեցող բոլոր սուբյեկտներին ազատորեն զբաղվելու քարոզչական գործունեությամբ ինչպես օրենսդրությամբ դրա համար նախատեսված ժամկետում, այնպես էլ այդ ժամկետից դուրս:

Խնդիրն այն է, որ նախընտրական քարոզչության ժամկետի հարցը սերտորեն առնչվում է ընտրությունների անցկացման համար ոչ պակաս կարևորություն ունեցող մեկ խնդրի հետ: Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքը (18-րդ հոդվ., 7-րդ կետ) նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին,

կուսակցություններին և նրանց դաշինքներին արգելում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: Արգելվում է նաև բարեգործական կազմակերպություններին, որոնց անվանումները կարող են նմանակվել կուսակցությունների և նրանց դաշինքների անվանը, նախընտրական քարոզչության ժամանակ բարեգործություն իրականացնել նախընտրական քարոզչության ժամանակ այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, որոնց մասնակցում են այդ թեկնածուները և կուսակցությունները:

Ստացվում է, որ նախընտրական քարոզչության համար նախատեսված ժամանակահատվածում (27 օրվա ընթացքում) կուսակցությունները, նրանց դաշինքները և թեկնածուները չեն կարող վերը նշված ծառայությունները մատուցել ընտրողներին՝ նրանց ձայները ստանալու փոխարեն, իսկ դրանից առաջ կարող են: Ավելին, ըստ ընտրական օրենսգրքի, փաստորեն նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սահմանված է առավելապես թեկնածուների համար, որի ընթացքում վերջիններիս հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով սահմանված են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու, ֆինանսական թափանցիկությունն ապահովելու կանոնները⁵: Ինչ վերաբերում է կուսակցություններին, ապա վերջիններիս կողմից նախընտրական շրջանում դրսևորած վաքագիծը չի սահմանափակվում նախընտրական քարոզչության համար օրենսդրությամբ սահմանված ժամանակահատվածի շրջանակներում:

Ամենապարզ տրամաբանությամբ ընտրական օրենսգրքում քննարկվող հիմնախնդրի նման կարգավորումը, մեր կարծիքով, հակասում է թեկնածուների և կուսակցությունների կողմից նախընտրական

քարոզարշավ իրականացնելիս, այդ նույն օրենսգրքով նախատեսված հավասարության սկզբունքին: Նշվում է, որ թեկնածուները հնարավորություն ունեն նախընտրական քարոզարշավ իրականացնելու միայն նախընտրական քարոզչության համար օրենքով սահմանված ժամկետում, իսկ կուսակցությունները՝ նաև դրանից դուրս: Այսինքն՝ խախտված է համամասնական և մեծամասնական ընտրակարգով քարոզարշավին մասնակցող Աժ պատգամավորության թեկնածուների՝ հավասար հիմունքներով քարոզչություն իրականացնելու սկզբունքը:

Երկրորդ, խախտված է կուսակցությունների կողմից առաջադրված և ինքնառաջադրման կարգով գրանցված նախագահության թեկնածուների հավասարության սկզբունքը քարոզարշավի ժամանակ:

Երրորդ, ստեղծվում են ոչ հավասար պայմաններ ֆինանսապես ապահով կուսակցությունների և այդպիսի միջոցներից զուրկ կուսակցությունների համար: Առաջինները նախընտրական քարոզչության

ժամանակահատվածից դուրս կարող են զբաղվել բարեգործությամբ, հանդիպել բնակչության լայն զանգվածներին և նրանց խոստանալ և կատարել տարբեր ծառայություններ, ինչը չեն կարող անել ֆինանսապես ոչ ապահով կուսակցությունները:

Քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ վերը նշված իրավիճակից խուսափելու համար առաջարկվում է օրենսդրությամբ արգելել կուսակցությունների կողմից նման վաքագծի դրսևորումը նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկին նախորդող երեք ամիսների ընթացքում¹: Այդ ժամկետը, մեր կարծիքով, կարելի է երկարեցնել (նախատեսել, ասենք, վեց ամիս), քանի որ ընտրողների գիտակցության վրա՝ նրանց անվճար ծառայություններ մատուցելու ճանապարհով ազդեցությունը պահպանվում է ավելի երկարատև ժամանակահատվածում, ինչը կարող է եական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա:

¹ Այդպիսի իրավական ակտերից են 1999 թ. փետրվարի 5-ին ընդունված Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը (առ 18.12.07 կատարված փոփոխություններով), որի 4-րդ գլուխը (18-23 հոդվ.) նվիրված է նախընտրական քարոզչությանը (տե՛ս Երևան, 2008, 24-29 էջեր. 2011թ.մայիսի 26-ին ընդունված Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը (գլուխ 5), Երևան, 2011թ., էջ, 25-33)

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք, Երևան, 2011թ., էջ 25:

³ Ընտրական օրենսգրքի 127-րդ հոդվածի (4-րդ կետ) համաձայն՝ կուսակցությունների և նրանց դաշինքների ընտրական ցուցակների գրանցումը կատարվում է քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 35 օր առաջ:

⁴ Այսպես Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն, «Արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել և

ցանկացած բնույթի քարոզչական նյութեր տարածել՝ 1) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պետական և համայնքային ծառայողներին, ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողներին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս, 2) սահմանադրական դատարանի անդամներին, դատավորներին, դատախազներին, ոստիկանության, ազգային անվտանգության, քրեակատարողական հիմնարկների ծառայողներին, զինծառայողներին, 3) ընտրական հանձնաժողովի անդամներին:

⁵ Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին կետը: Երևան, 2011, էջ 25:

⁶ Տե՛ս Ն.Ա.Այվազյան, Մ.Ս.Օհանյան, Ազատ ընտրություններ և հանրաքվե կազմակերպելու հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2010, էջեր 98-99:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**PRE-ELECTION CAMPAIGN AS AN IMPORTANT
GUARANTEE OF DEMOCRATIC ELECTIONS****Marine SARGSYAN***PHD student, YSU**Chair of Constitutional Law*

One of the important conditions for democratic elections is a fair electoral campaign, the development of which is closely linked to the formation process of Armenian national legislation. Agitation in RA, as elsewhere, is an activity performed during the electoral campaign, the goal of which is to encourage

voters to vote for or against a particular candidate or list of candidates.

The article deals with such core issues as the types and methods of campaigning, the regulation of the ways of its conduction by the law, use of modern technologies for this agitation etc. The comparative analysis of the two electoral codes of the RA (of 1999 and 2010.) allowed to reveal some problems in the provisions of the electoral code of 1999, regulating the organization of electoral campaigns.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԴԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՅՈՒՄ

Սահակ ՄԱՆՈՒԿՅԱՆ

*ԵՊՀ հանրային կառավարման
ամբիոնի ասպիրանտ*

Օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու ԶԶ քաղաքացիների Սահմանադրությամբ նախատեսված իրավունքը (30.2 հոդվ.) ապահովելու նպատակով համայնքային ծառայության պաշտոնի հավակնող անձանց ներկայացվում են որակավորման որոշակի չափանիշներ՝ ըստ յուրաքանչյուր պաշտոնին անձնագրով սահմանված պահանջների: Այդ չափանիշները, որպես կանոն, ընդգրկում են բարձրագույն, երբեմն բարձրագույն մասնագիտական կրթությունը, աշխատանքային ստաժը, մասնագիտական գիտելիքները, աշխատանքային հմտություններն ու կարողությունները, օտար լեզվի (լեզուների) իմացության աստիճանը, ինչպես նաև Հանրապետության Սահմանադրության, համայնքային ծառայողների լիազորություններին վերաբերող իրավական ակտերի իմացությունը և այլ պահանջներ, որոնք տեսական ու գործնական առումով չեն հակասում համայնքային ծառայության ընդունվելու հավասար հնարավորության սկզբունքին:

Համայնքային ծառայության պաշտոնների դասակարգման խնդրի բովանդակության բացահայտմանը մեծ չափով կարող է նպաստել «համայնքային ծառայության պաշտոն» հասկացության պարզաբանումը: Մասնագիտական գրականության մեջ տարբեր մեկնաբանություններ են տրվում այս հասկացությանը: Քանի որ «պետական պաշտոն», «համայնքային ծառայության պաշտոն» հասկացություններն իրավական և բովանդակային առու-

մով էապես չեն տարբերվում իրարից, ուստի նպատակահարմար է անդրադառնալ «պաշտոն» և «պետական պաշտոն» եզրույթներին, այնուհետև՝ «համայնքային ծառայության պաշտոնին»:

Իրավաբանական գրականության մեջ «պաշտոն» հասկացությունը բնորոշվում է երկու տեսանկյունով՝ մի դեպքում ընդգծելով պետական ծառայողի իրավական կարգավիճակի բնույթը¹, մյուս դեպքում՝ իրավական վիճակին համապատասխան լիազորությունների բնույթը²:

Առաջին դեպքում պաշտոնը ներկայացված է որպես ծառայողական պարտականություն: Այս հասկացությունը միաժամանակ նշանակում է վարչական կամ կարգադրական գործունեություն՝ կառավարչական իմաստով որպես որոշակի սոցիալական դեր, որը իրականացնում է ծառայողը հասարակական կազմակերպությունում, պետական և համայնքային մարմիններում, հիմնարկներում և ձեռնարկություններում: Պաշտոնը մեկ անձի համար իրավաբանորեն սահմանված գործառույթների և լիազորությունների ծավալն է՝ մասնակցելու համապատասխան իրավաբանական անձի (մարմնի, հիմնարկի, ձեռնարկության) լիազորությունների իրականացմանը:

Երկրորդ դեպքում, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ըստ զբաղեցրած պաշտոնի նախատեսված պարտականություններին, հեղինակները եզրահանգում են, որ պաշտոնը պարտականությունների և դրան համապատասխան սահմանված իրավունքների համալիր է, որով որոշվում են պետական կամ հասարակական մարմնում ծառայողի տեղն ու դերը: Պաշտոնը նախապայմաններ է ստեղծում համայնքային ծառայության պաշտոնների միասնականացման և հիերարխիայի հաս-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

տատման համար, ինչպես նաև համաձայնեցնում և ապահովում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը՝ որպես ամբողջական կառուցակարգ:

Ներկայացված կարծիքներում արտահայտված մտքերը ի մի բերելով՝ կարելի է ասել, որ պետական ծառայողը պետական մարմնի ապարատի կառուցվածքում նախատեսված հաստիքային միավոր է և կոչված է ապահովելու պետական մարմնի խնդիրների ու գործառույթների կատարումը կամ էլ համապատասխան պետական պաշտոն զբաղեցնող անձի (օրինակ՝ երկրի նախագահի, կառավարության ղեկավարի և այլն) գործունեությունը:

Իրավահամեմատական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետության օրենքներում, մասնավորապես՝ «Քաղաքացիական ծառայության մասին» (2001թ. դեկտեմբերի 4)³, «Համայնքային ծառայության մասին» (2004թ. դեկտեմբերի 12)⁴ և «Հանրային ծառայության մասին» (2011թ. մայիսի 26)⁵ բովանդակային առումով միասնական սահմանում չի տրված «համայնքային ծառայություն հասկացությանը»:

Քաղաքացիական ծառայության վերաբերյալ օրենքը սահմանում է, որ համայնքային ծառայությունը «Մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը» (1-ին հոդվածի 4-րդ կետ), իսկ Հանրային ծառայության վերաբերյալ օրենքն ամրագրում է. «Համայնքային ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիրների և գործա-

ռույթների իրականացմանը» (3-րդ հոդվածի 4-րդ մաս):

«Համայնքային ծառայության մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասը նախ ամրագրում է. «Համայնքային ծառայությունը հանրային ծառայության ինքնուրույն տեսակ է», իսկ 3-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանում է. «Համայնքային ծառայությունը՝ քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներից անկախ մասնագիտական գործունեություն է, որը կատարվում է համայնքների ղեկավարների աշխատակազմերում (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում) (այնուհետ՝ համայնքի ղեկավարի աշխատակազմ)՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով այդ մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացման նպատակով» (ընդգծումն իմն է՝ Ս. Ս.):

Այսպիսով, ինչպես քաղաքացիական ու համայնքային ծառայությունների, այնպես էլ հանրային ծառայության վերաբերյալ ՀՀ օրենքները տարաբնույթ բովանդակությամբ են բնորոշում «համայնքային ծառայություն» հասկացությունը, որը և տարատեսակ մեկնաբանությունների տեղիք է տալիս: Գիշտ է, «Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո (2011թ. մայիսի 26)⁶ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 1-ին հոդվածն ուժը կորցրած ճանաչվեց, սակայն այս հարցում վերջնական հստակություն չմտցվեց: Կարծում ենք, անհրաժեշտ է «Համայնքային ծառայության մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներում հարթել «համայնքային ծառայություն» տարաբովանդակ հասկացությունները և մեկ միասնական բնորոշում տալ: Միաժամանակ գտնում ենք, որ նպատակահարմար է շրջանառել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի «համայնքային ծա-

ռայություն» հասկացությունը:

Քանի որ «համայնքային ծառայության պաշտոն» հասկացությունը և դրա հետ կապված բառակապակցություններն ինչպես օրենսդրության, այնպես էլ մասնագիտական գրականության մեջ մեկնաբանվում են տվյալ երկրի օրենսդրությանը համապատասխան, և այս առումով միասնական կարծիք չկա, ուստի մեզանում այն բնորոշելիս պետք է հենվել ՀՀ համայնքային ծառայության օրենսդրությամբ ամրագրված դրույթների վրա:

«Համայնքային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ համայնքային ծառայության պաշտոնը համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոնն է, իսկ նույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում տրված է համայնքային ծառայության պաշտոնների դասակարգման պատճառաբանությունը, համաձայն որի՝ համայնքային ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ էլեմենտի այդ պաշտոնը զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման պահանջի, ինչպես նաև գիտելիքների և հմտությունների անհրաժեշտ մակարդակից:

Ելնելով վերը նշված պատճառաբանություններից՝ նույն հոդվածի 2-րդ մասում համայնքային ծառայության պաշտոններն դասակարգվում են 3 խմբերի.

ա) համայնքային ծառայության գլխավոր պաշտոններ,

բ) համայնքային ծառայության առաջատար պաշտոններ,

գ) համայնքային ծառայության կրտսեր պաշտոններ:

Վերոհիշյալ հոդվածի արդեն 3-րդ մասում նշվում է, որ համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խումբ դասակարգվում է 3 ենթախմբի: Ի դեպ,

պաշտոնների խմբերում 1-ինը համարվում է տվյալ խմբի բարձրագույն ենթախումբը: Ընդ որում, մինչ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի ընդունումը (2008թ. սեպտեմբերի 30)⁷ համայնքային ծառայության ոչ թե բոլոր պաշտոններն էին դասակարգվում 3 ենթախմբերի, այլ միայն առաջատար և կրտսեր, բացի գլխավորից: Վերոնշյալ օրենքի ընդունմամբ բոլոր խմբերի պաշտոնները դասակարգվեցին 3 ենթախմբերի: Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբում ընդգրկվում է միայն 15 հազարից ավելի բնակչություն ունեցող համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի պաշտոնը:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ, ի տարբերություն հանրային ծառայության համակարգի մյուս ծառայությունների պաշտոնների խմբերի, օրենսդիրը պաշտոնների ամենաքիչ խումբը սահմանել է միայն համայնքային ծառայության պաշտոնների համար: Այսպես, հանրային ծառայության մի շարք տեսակների⁸ պաշտոնները դասակարգել է 4 նույնական՝ բարձրագույն, գլխավոր, առաջատար և կրտսեր խմբերի: «Ոստիկանությունում ծառայության մասին» (2002թ. հուլիսի 3)⁹ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության պաշտոնները ևս դասակարգվում են վերոնշյալ 4 խմբերի, բացառությամբ 3-րդ խմբի անվանման, որը կոչվում է ոչ թե «առաջատար պաշտոններ», այլ «ավագ պաշտոններ»:

«Զինվորական ծառայություն անցնելու մասին» օրենքով (2002թ. հուլիսի 3)¹⁰ (15-րդ հոդված) զինվորական պաշտոնները բաժանվում են հրամանատարական և ոչ հրամանատարական: Հրամանատարական կազմի պաշտոններն իրենց հերթին դասակարգվում են 3 խմբերի՝ բարձրագույն հրամանատարական, ավագ հրամանատարական և միջին հրամանատարա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

կան, իսկ ոչ հրամանատարական կազմի պաշտոնները՝ 5 խմբերի՝ բարձրագույն սպայական, ավագ սպայական, կրտսեր սպայական, ենթասպայական և շարքային:

«Դիվանագիտական ծառայության մասին» օրենքը (2001թ. հոկտեմբերի 24)¹¹ (17-րդ հոդված) դիվանագիտական ծառայության պաշտոնները դասակարգում է ավելի մեծաքանակ՝ 16 խմբերի: Այն սկսվում է բարձրագույն՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնից և ավարտվում է ամենաստորին՝ կցորդի պաշտոնով:

Արտասահմանյան երկրների հանրային (համայնքային) ծառայության մասին օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ երկրներում ևս խնդրո առարկա ծառայությունը բաժանվում է նվազագույնը 4 խմբերի, իսկ ենթախմբերը երբեմն գերազանցում են 2 տասնյակը:

Այսպես, Եվրոպական համայնքային (հանրային) ծառայությունը բաժանվում է 4 հինական խմբերի՝ A, B, C և D: Բարձրագույն խումբը՝ A-ն, բաժանվում է 8 ենթախմբերի, առավել բարձրից՝ A1-ից մինչև A8-ը, B և C՝ 5, իսկ D-ն՝ 4 ենթախմբերի: Ընդհանուր՝ 22 ենթախումբ¹²: Իսկ Ռուսաստանի Դաշնությունում, համաձայն «Համայնքային ծառայության մասին» օրենքի 8-րդ հոդվածի, համայնքային ծառայության պաշտոնները դասակարգվում են հինգ խմբի՝ բարձրագույն, գլխավոր, առաջատար, ավագ, կրտսեր:

Լիտվայում և Ֆրանսիայում հանրային ծառայողները բաժանվում են 4 մակարդակի՝ A, B, C և D¹³, իսկ Ճապոնիայում հանրային ծառայողների ծառայողական կարգավիճակը որոշվում է նրանց զբաղեցրած ծառայողական պաշտոնով, որը նրանք զբաղեցնում են իրենց կարգին (ռանգին) համապատասխան: Գոյություն ունեցող 8 կարգերից (ռանգերից) յուրաքանչյուրը բաղկացած է 15 աստիճաններից¹⁴:

Համաձայն «Մոսկվա քաղաքում համայնքային ծառայության մասին» օրենքի՝ համայնքային ծառայության պաշտոնները դասակարգվում են 4 խմբի՝ գլխավոր, առաջատար, ավագ, կրտսեր¹⁵:

«Հանրային ծառայության մասին» օրենքում հանրային ծառայությունը բնորոշվում է որպես «պետությանը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացում, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը, պետական և համայնքային պաշտոնները» (3-րդ հոդված 1-ին մաս): Ըստ նույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի՝ պետական պաշտոններ են համարվում քաղաքական (բացառությամբ ՀՀ համայնքների ղեկավարների պաշտոնների), հայեցողական (բացառությամբ ՀՀ համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների, ինչպես նաև համայնքների ղեկավարների տեղակալների օգնականների պաշտոնների), քաղաքացիական, ինչպես նաև պետական ծառայության պաշտոնները:

Այսպիսով, ներպետական և արտասահմանյան երկրների համայնքային (հանրային) ծառայությունների մասին օրենսդրության ուսումնասիրությունից պարզվում է, որ միայն Հայաստանի Հանրապետությունում է, որ համայնքային ծառայության պաշտոնները դասակարգվում են 3 խմբի, որը, կարծում ենք, կարող է առաջացնել կառավարման, կազմակերպական դժվարություններ, հատկապես մեծաթիվ բնակչություն ունեցող քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմերում:

Խնդիրն այն է, որ մեծաթիվ բնակչություն ունեցող քաղաքային համայնքներում համայնքի ղեկավարի աշխատակազմում համայնքային ծառայողների թիվը մի քանի հարյուր անգամ գերազանցում է փոքր բնակչություն ունեցող գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմերում համայնքային ծառայողների թիվը:

Բնականաբար, մեծ թվով համայնքային ծառայողներից բաղկացած աշխատակազմի քարտուղարի կատարած աշխատանքն անհամեմատ ծանր է փոքր կամ միջին թվով համայնքի աշխատակազմի քարտուղարի աշխատանքից: Եվ սա այն դեպքում, որ համայնքային ծառայության համակարգում գոյություն չունեն բարձրագույն խմբի պաշտոններ, իսկ որպես գլխավոր խմբի 1-ին ենթախմբի պաշտոն սահմանված է միայն 15000 և ավելի բնակիչ ունեցող տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմի քարտուղարի պաշտոնը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի¹⁶ 30-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններում նրա մասնակցությունն ապահովվում են համայնքի ղեկավարի աշխատակազմի միջոցով, որի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը, իսկ ընթացիկ գործունեությունը ղեկավարում է աշխատակազմի քարտուղարը՝ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում: Դրա հետ մեկտեղ, համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքում կարող են նախատեսվել միայն «բաժին» տեսակի կառուցվածքային և (կամ) առանձնացված ստորաբաժանումներ, որոնց հաստիքային միավորների նվազագույն թվաքանակը սահմանում է պետական լիազորված մարմինը:

Համայնքային ծառայողների հաստիքային միավորների թիվը ևս հաստատում է պետական լիազորված մարմինը: Հաստիքային միավորների ամենափոքր թիվը սահմանված է երկուսը (ամենափոքր համայնքների համար):

Հայաստանի Հանրապետության ամենախոշոր համայնքների՝ Երևանի, Գյումրիի և Վանաձորի համար սահմանված են համապատասխանաբար՝ 1581, 168 և 137 հաստիքային միավորներ: Մնացած համայնքների համար սահմանված ցուցանիշները տեղաբաշխված են այս միջակայ-

քում: Օրինակ, Էջմիածին՝ 61, Արտաշատ՝ 38, Վեդի՝ 27 և այլն¹⁷: Փաստորեն, ամենամեծ համայնքի համայնքային ծառայողների թիվը 790 անգամ մեծ է ամենափոքր համայնքի համայնքային ծառայողների թվից: Սա բացատրվում է նրանով, որ Հայաստանի Հանրապետության համայնքների միջև առկա են էական տարբերություններ, որոնք վերաբերում են բնակչության թվին, համայնքներին պատկանող տարածքներին, բնակլիմայական պայմաններին, սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքներին:

Այսպես, ըստ 2001թ. մարդահամարի տվյալների՝ Հայաստանի Հանրապետությունում առկա էր մինչև 100 բնակիչ ունեցող 28, մինչև 300 բնակիչ ունեցող 184 համայնք: Բնակչության թվով ամենամեծ գյուղական համայնքն Ախուրյանն է (10015 մարդ), իսկ ամենափոքրը՝ Վերին Շորժան (24 մարդ): Փաստորեն, ամենամեծ գյուղական համայնքն ամենափոքրից մեծ է շուրջ 417 անգամ: Իսկ ինչ վերաբերում է համայնքների տարածքներին, ապա համայնքների միջին տարածքը 20 քառ. կմ է, իսկ գյուղական համայնքների միջին տարածքը 20,2 քառ. կմ, ամենափոքր գյուղական համայնքի տարածքը Դպրեվանք համայնքինն է՝ 0,3 քառ. կմ, իսկ ամենամեծը՝ Գետափ համայնքինը՝ 117,8 քառ. կմ: Այսպիսով, տարածքով ամենամեծ գյուղական համայնքը ամենափոքրից մեծ է 370 անգամ¹⁸:

Սկսած, որ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման համակարգը ձևավորվել է «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» 1995թ. նոյեմբերի 7-ի օրենքով¹⁹, համաձայն որի Հայաստանը բաժանվեց 11 մարզի՝ ներառյալ մայրաքաղաք Երևանը (մարզի կարգավիճակով): Այդ ժամանակ առկա 48 քաղաքների և 952 գյուղերի հիման վրա ստեղծվեցին 930 համայնքներ, որոնցից 47-ը՝ քաղաքային, 871-ը՝ գյուղական և 12-ը՝ թաղային համայնքներ:

Տեղական ինքնակառավարման համա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

կարգի հետագա զարգացման անհրաժեշտությունից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատեց «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը»²⁰, ուր ի թիվս այլ հարցերի, տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման և վարչատարածքային միավորների սոցիալ-տնտեսական ներդաշնակ զարգացման նպատակով տեղ գտան նաև հետևյալ հարցերը.

1) համակողմանիորեն հիմնավորված սկզբունքի հիման վրա հանրապետության վարչատարածքային բաժանման օպտիմալացում.

2) գյուղական, քաղաքային և թաղային համայնքների լիազորությունների տարբերակում և հստակեցում:

Վերը նշված խնդիրների լուծման համար ժամկետ էր սահմանված 2004-2006թթ.: Չնայած այդ հարցերի խիստ կարևորությանը՝ նախատեսված ժամկետներում վերը նշված ուղղություններով գրեթե ոչինչ չի արվել²¹:

Կատարված փոփոխությունների արդյունքում 2006-ի վերջին Հայաստանի Հանրապետությունում գործում էին 926 համայնքներ, որից 48-ը՝ քաղաքային, 866-ը՝ գյուղական և 12 թաղային համայնքներ Երևանում, իսկ հետագա տարիներին պատկերը էապես չի փոխվել:

2009թ. ապրիլի 23-ի թիվ 12 արձանագրային որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունն ի գիտություն ընդունեց «Միջհամայնքային միավորումների ձևավորման և համայնքների խոշորացման հայեցակարգը», իսկ վարչապետի որոշմամբ ստեղծվեց միջգերատեսչական հանձնաժողով (26.05.09), վերջինս էլ ձևավորել է համայնքների խոշորացման հարցերի աշխատանքային խումբ²²: Սակայն, պետք է նշել, որ այս ուղղությամբ նույնպես կոնկրետ աշխատանքներ չեն

կատարվել:

2009թ. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման համակարգում կատարված փոփոխությունները հիմնականում պայմանավորված էին Սահմանադրության 108-րդ հոդվածի գործնական կիրառմամբ. 2008թ. դեկտեմբերի 26-ին ընդունվեց «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը²³, համաձայն որի՝ Երևանի 12 թաղային համայնքները վերակազմավորվեցին որպես Երևան համայնք, որի արդյունքում Հայաստանի Հանրապետության համայնքների թիվը 926-ից դարձավ 915, որից 866՝ գյուղական և 49-ը՝ քաղաքային: Երևան քաղաքում փաստացի ձևավորվեց միամակարդակ տեղական ինքնակառավարում: Նախկին թաղային համայնքների տարածքներում ձևավորվեցին 12 վարչական շրջաններ: Ընդ որում, եթե նախկինում Երևանի վարչատարածքային միավորների ղեկավարների պաշտոնը ընտրովի էր, ապա ներկայումս նրան նշանակում է և պաշտոնից ազատում Երևանի քաղաքապետը: Նշենք, որ համայնքների թվի կրճատումը չի շտկել մեկ համայնքին ընկնող բնակչության միջին թվի ցուցանիշները, եթե հաշվի չենք առնում Երևան համայնքը, որտեղ այն կազմում է 2342 մարդ: Մեր մայրաքաղաքը Եվրախորհրդի անդամ երկրների մեջ վերջիններից մեկն է: Այս ցուցանիշները ցույց են տալիս Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման միավորների խիստ մասնատվածությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եվրոպական երկրների մեծ մասում տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման նպատակով համայնքները խոշորացվել են, և այդ միտումը շարունակվում է նաև այժմ: Կան երկրներ, որտեղ մինչև 1000 բնակիչ ունեցող համայնքներ ընդհանրապես գոյություն չունեն (Անգլիա և Ռեյս, Լիտվա, Բուլղարիա, Շվեդիա, Դանիա, Լեհաստան և այլն), բացի այդ՝ կան քիչ թվով երկրներ, որտեղ դեռևս

պահպանվել են մեծ թվով փոքր համայնքներ՝ Իսպանիա, Ֆրանսիա (տես աղյուսակ 1): Համայնքների բնակչության թվաքանակին զուգահեռ փոխվում են նաև նրանց միջին տարածքները: Խոշոր համայնքների հողային ռեսուրսները բնականաբար ավելի շատ են, քան փոքրերինը, որը և ավելի մեծ հնարավորություններ է տալիս համապատասխան համայնքներին ավելի արդյունավետ օգտագործելու այդ ռեսուրսները:

Ինչ վերաբերում է Հարավային Կովկասի երկրներին, ապա այստեղ մինչև 2006-ը հիմնականում գերակշռում էին մեծ թվով փոքր և թույլ կարողություններ ունեցող համայնքները: Հայաստանում, Ադրբեջանում պատկերը մնացել է նույնը, իսկ Վրաստանում տեղական ինքնակառավարման միավորները խոշորացվել են, և 2006թ-ից ի վեր գործում են 68 համայնքներ՝ նախկին 1004-ի փոխարեն²⁴:

Աղյուսակ 1. Ընտրված եվրոպական երկրներում համայնքների թիվը և միջին չափերը²⁵

	երկիրը	Համայնքների թիվը	1000-ից պակաս բնակչություն ունեցող համայնքների տեսակարար կշիռը(%)	Մեկ համայնքին ընկնող բնակչության միջին թիվը(մարդ)	Մեկ համայնքի միջին տարածքը (քառ.կմ)
1.	Անգլիա և Ուելս	375	0	123000	533
2.	Լիտվա	56	0	66000	1166
3.	Բուլղարիա	262	0	35000	432
4.	Շվեդիա	288	0	29500	1595
5.	Հոլանդիա	443	0.2	20500	60
6.	Դանիա	98	0	18000	150
7.	Լեհաստան	2483	0	16000	130
8.	Սակեդոնիա	84	3	15800	209
9.	Սլովենիա	192	3	10300	106
10.	Ալբանիա	373	0	10000	77
11.	Ֆինլանդիա	426	5	10500	730
12.	Նորվեգիա	162	4	9000	710
13.	Իտրվաթիա	542	3	8800	104
14.	Ռումինիա	2862	2	7600	81
15.	Էստոնիա	254	9	5700	178
16.	Իսպանիա	8094	61	5000	60
17.	Լատվիա	563	32	4300	115
18.	Ֆրանսիա	36763	77	1300	15
19.	Վրաստան	68	0	64285	458
20.	Ադրբեջան	2660	53	3082	25
21.	Հայաստան	926	48	3480	20

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Այսպիսով, վերոշարադրյալը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում առկա են մեծ թվով փոքր և թույլ համայնքներ, և չնայած այս հանգամանքին՝ օրենքով բոլոր համայնքներին՝ անկախ դրանց մեծությունից և ֆինանսական հնարավորություններից, վերապահված են նույն լիազորությունները: Կարծում ենք, որպեսզի Հայաստանի Հանրապետությունում զարգանա տեղական ինքնակառավարման համակարգը, անհրաժեշտ է անհապաղ խոշորացնել համայնքները՝ միացնելով հարևանությամբ գտնվող թույլ համայնքները որոշակի սկզբունքների և չափանիշների հիման վրա: Սա մեր երկրի համար խիստ անհրաժեշտ է:

Կարծում ենք՝ առաջին հերթին պետք է միավորել հատկապես մինչև 1000 բնակիչ ունեցող բոլոր համայնքները, պարզապես վերացնել Հայաստանի Հանրապետությունում մինչև 100 բնակիչ ունեցող համայնքի կարգավիճակի բնակավայրերը, քանի որ դրանք, հիմնականում, ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, ի վիճակի չեն լուծելու և՛ իրենց առջև ծառայած խնդիրները, և՛ մատուցելու որակյալ համայնքային ծառայություններ:

Կարծում ենք՝ օրենսդիրը ճիշտ է վարվել՝ տարբերակելով համայնքներն ըստ բնակչության թվի և սահմանելով, որ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբում ընդգրկվում է միայն 15 հազարից ավելի բնակչություն ունեցող համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի պաշտոնը: Միաժամանակ գտնում ենք, որ հավասարակշռությունը չի հաջողվել պահպանել, քանի որ որքան անգամ մեծ է 15 հազար բնակչություն ունեցող համայնքը մինչև 100 կամ մինչև 300 բնակիչ ունեցող համայնքներից (որոնք միասին կազմում են շուրջ 200 համայնք, այսինքն՝ համայնքների ընդհանուր թվի շուրջ 21%-ը), այնքան անգամ էլ փոքր է 1 միլիոն և ավելի բնակչություն ունեցող համայնքից: Այսինքն՝ և՛ Երևանի, և՛ Գյում-

րիի համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի պաշտոնը սահմանել գլխավոր խմբի 1-ին ենթախմբում, քանի որ դրանք իրենց աշխատակազմերում ունեն համապատասխանաբար 1581 և 168 համայնքային ծառայողներ: Իսկ Արտաշատում և Վեդիիում, ուր աշխատում են համապատասխանաբար 38 և 27 համայնքային ծառայողներ, այդ համամասնությունը հիմնավորված չէ:

Որպեսզի վերոնշյալած անհավասարակշռությունը հարթվի, ինչպես նաև մեծ համայնքներում բարձրացվեն աշխատանքի արդյունավետությունն ու վերահսկողությունը, առաջարկում ենք համայնքային ծառայության պաշտոնները ևս դասակարգել 4 խմբի՝ ավելացնելով բարձրագույն խումբը: Բացի այդ, հաշվի առնելով Երևանի նշանակությունը հանրապետության կյանքում, ինչպես նաև չանտեսելով հանրապետության երկրորդ և երրորդ քաղաքները, որոնք իրենց մարդկային, ֆինանսական ռեսուրսներով մի քանի տասնյակ անգամ գերազանցում են մյուս քաղաքային համայնքներին, առաջարկում ենք բարձրագույն խմբի պաշտոններ նախատեսել միայն այդ քաղաքային համայնքներում:

Այսպիսով, առաջարկում ենք «Համայնքային ծառայության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

2. Համայնքային ծառայության պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.

- ա) համայնքային ծառայության բարձրագույն պաշտոններ,
- բ) համայնքային ծառայության գլխավոր պաշտոններ,
- գ) համայնքային ծառայության առաջատար պաշտոններ,
- դ) համայնքային ծառայության կրտսեր պաշտոններ:

3. Համայնքային ծառայության պաշտոնի յուրաքանչյուր խումբ, բացի բարձրագույն պաշտոնից, դասակարգվում է 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբերի: Համայնքային ծառայության պաշտոնների խմբերում 1-ին ենթախմբումը տվյալ խմբի բարձրագույն

ենթախումբն է:

Համայնքային ծառայության բարձրագույն պաշտոնի 1-ին ենթախմբում ընդգրկվում է Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմերի քարտուղարների պաշ-

տոնները:

Համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբում ընդգրկվում է միայն 15000 և ավելի բնակչություն ունեցող համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի պաշտոնը:

¹ Տե՛ս *Շիխլաճե Լ. Թ., Սոճիկյան Օ. Ս.* Муниципальная служба в Российской Федерации. —М.: МИЭМП, 2006, էջ 21: *Կազանցե՛յ Ս. Օ., Սիսարե՛վ Ա. Ի.*, Муниципальное право России, М., 1998, էջ 49: *Բախրա՛խ Դ. Ն.* Административное право. Учеб. для вузов-М.: Изд. БЕК, 1999, էջ 103:

² Տե՛ս *Սե՛րգեյ Մ. Ի.*, Основы советского социального управления. Л., 1974, էջ 69: *Շիխլաճե Լ. Թ., Դ. Օ. Եճե՛վսկի՛յ.* Муниципальная служба в Российской Федерации. —Ростов н/Д: Феникс, 2009, էջ 23: *Լազա՛րե՛վ Բ. Մ.*, Государственная служба. М., 1993, էջ 6: *Նոճճրա՛չե՛վ Ա. Փ.*, Государственная служба: Учебник для подготовки государственных служащих.-М.: "Статус", 1999, էջ 129:

³ Տե՛ս ՀՀՊՏ 2002.01.09/1(176):

⁴ Տե՛ս ՀՀՊՏ 2005.01.26/7(379):

⁵ Տե՛ս ՀՀՊՏ 2011.06.17/37(840):

⁶ Տե՛ս ՀՀՊՏ 2011.06.17/37(840):

⁷ Տե՛ս ՀՀՊՏ 2008.11.05/66(656):

⁸ Տե՛ս «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքը (7-րդ հոդված), «Մաքսային ծառայության մասին» օրենքը (2002թ. հուլիսի 3) (7-րդ հոդված) ՀՀՊՏ 2002.08.08/32(207), «Հարկային ծառայության մասին» օրենքը (2002թ. հուլիսի 3) (14-րդ հոդված) ՀՀՊՏ 2002.08.14/33(208), «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» օրենքը (2007թ. նոյեմբերի 28) (7-րդ հոդված) ՀՀՊՏ 2007.12.26/66(590), «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքը (2009թ. հունիսի 11) (7-րդ հոդված) ՀՀՊՏ 2009.07.15/35(701):

⁹ Տե՛ս ՀՀՊՏ 2002.08.08/32(207):

¹⁰ Տե՛ս ՀՀՊՏ 2002.07.19/26(201):

¹¹ Տե՛ս ՀՀՊՏ 2001.12.12/39(171):

¹² Տե՛ս *Հարությունյան Ա. Շ.* Եվրոպական միության իրավունքի հիմունքները (սահմանադրական իրավունք): Դասագիրք.-Եր.: Տիգրան ՍԵՆ, 2011, էջ 450:

¹³ Տե՛ս Public management profiles of Central and Eastern European countries: Lithuania, OECD, SIGMA, 1999, էջ 19-20, *Ե. Վ. Օսինոչկինա.* Правовой статус муниципального служащего: становление, понятие и механизм реализации. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук.-Казань, 2006, էջ 140:

¹⁴ Տե՛ս Административное право зарубежных стран: Учебник/ Под ред. А. Н. Козырина и М. А. Шатиной.- М.: Спарк, 2003, էջեր 241, 429-430:

¹⁵ Տե՛ս Օ մունիցիպալային սլաճբե՛ Վ ցորե՛ Մոսկ՛վե: Յաճո՛ն ց. Մոսկ՛վե՛ Օ՛ 24 Մար՛տա 2004 ց.// Վես՛նիկ Մե՛րա և Սրա՛վի՛տել՛յս՛տ՛վա Մոսկ՛վե. 2004. 1 24:

¹⁶ Տե՛ս ՀՀՊՏ 2002/21 (196), 21.06.2002:

¹⁷ Տե՛ս Local self-government reforms in Armenia (2009 and 2010), Book 4; ed. by D. Tumanyan, Noyan Tapan, Yerevan, 2011, էջ 242:

¹⁸ Տե՛ս Local self-government reforms in Armenia (2004-2006), Book 2; ed. by D. Tumanyan, Noyan Tapan, Yerevan, 2008, էջ 164:

¹⁹ Տե՛ս ՀՀԱԺՏ 1995/9:

²⁰ Տե՛ս ՀՀ կառա՛վարության 1 994 որոճը՛ն՛ 08.03.2003, www.gov.am/files/docs/56.pdf:

²¹ Տե՛ս Local self-government reforms in Armenia (2004-2006), Book 2; ed. by D. Tumanyan, Noyan Tapan, Yerevan, 2008, էջ 163:

²² Տե՛ս Local self-government reforms in Armenia (2009 and 2010), Book 4; ed. by D. Tumanyan, Noyan Tapan, Yerevan, 2011, էջ 199:

²³ Տե՛ս ՀՀՊՏ 13 (669), 16.01.09:

²⁴ ԱՎԵԼԻ մանրամասն տե՛ս Consolidation or Fragmentation?. Edited by Pawel Swianiewicz (2002):

²⁵ ԱՎԵԼԻ մանրամասն տե՛ս *Դ. Կումա՛նյան, Դ. Լո՛սաբերիճե, Մ. Գյո՛լալիե՛վ.* Местное самоуправление на Южном Кавказе, Ереван, 2007:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**PROBLEMS OF CLASSIFICATION OF THE MUNICIPAL SERVICE IN THE RA****Sahak MANUKYAN***PHD student, YSU
Chair of Public Administration*

Researching international, as well as domestic legislation about municipal (public) service in detail, a conclusion is made that it is only in the RA that positions of the municipal service are classified into 3 groups, which can lead to managerial, organizational difficulties, especially in the staffs of the chiefs of the city communities with large population.

The question is that in the city municipalities with large population the number of municipal workers in the staff of the chief of the community is several hundred times greater than the number of municipal servants in the staff of the chief of the rural community with small population.

Certainly, the work of the chief of staff with numerous municipal workers is harder than the work of the chief of staff that has small or average number of workers.

And this is the case that in the municipal service higher-ranking posts do not exist, and the first subgroup of the main group is set only at the chief of the community the local self-government with a population of 15 thousand and more people.

In addition in the RA there is a large number of small and weak municipalities, and despite this, the law establishes the same powers to all regardless of their territories and financial capabilities.

To restore the inequity, as well as to improve the efficiency and control in large municipalities, in the article it is proposed to divide the post of municipal services into four groups adding the highest group. In addition, having into account the importance of Yerevan in the economic and political life of the country, and not forgetting the second and third cities of the Republic, it is proposed to include high-ranking posts only in the above-mentioned city municipalities.

К ВОПРОСУ О МЕТОДОЛОГИИ ИЗУЧЕНИЯ ГОСУДАРСТВЕННОСТИ

Ваге ГЕВОРКЯН

*Ассистент кафедры теории и истории
государства и права ЕГУ,
кандидат юридических наук*

В современной науке общепринятой истиной стал подход к методу (греч. *methodos*) как пути к чему-либо.

Понятие «методология» имеет два основных значения:

1. Система способов, приемов исследования определенного объекта (предмета) познания;

2. Теория (учение) о способах исследования.

Основная функция — организация процесса исследования (познания) предмета.

Метод включает определенные правила, приемы, способы исследования и познания. «В самой науке все более четко выделяются два взаимосвязанных направления: исследование свойств объектов (традиционное направление) и исследование способов и форм научного познания»¹.

Рационализация и поиски путей обеспечения эффективности научного знания привели к акцентированию внимания на специфических частно-научных методах, что позволяет предполагать в формировании профессиональной методологии (узкоспециальной) как одной из сфер современной технологии — технологии мыслительной деятельности².

Изучение государственности как уникального феномена общественного развития предполагает использование многообразного методологического арсенала исследования действительности.

Любая социальная система, в том

числе и государственная, развивается на протяжении длительного времени и подвержена многократным неожиданным изменениям, меняющим вектор развития в неожиданном направлении.

Развитие происходит нелинейно, неравномерно, что предопределяется многовариантностью эволюции социальных систем, зарекомендовавших себя в подобных случаях. В подобных случаях применяется синергетический метод, характеризующийся рядом особенностей, среди которых особо выделяются следующие:

1. Детерминизм, предопределенность не исключает случайности, так как оба вектора согласуются и взаимодополняют друг друга.

2. Развитие многовариантно и альтернативно как в перспективном, так и в ретроспективном плане.

3. Развитие происходит через флуктуации, случайные отклонения.

4. Сопровождающие развитие хаоса, создающие критический момент неопределенности бесперспективного развития, не только разрушительны, но и конструктивны.

5. Процесс развития сопровождается тенденциями как дивергенции, так и конвергенции.

6. Как обобщение сказанного развитие происходит **нелинейно**³.

Как отмечается в юридической литературе, синергетика как научное направление, а следовательно, и метод, радикальным образом меняет понимание необходимого как закономерного детерминированного в самих основах мироустройства⁴.

Главной проблемой современной

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ**ՏԵՍՏՈՒԹՅՈՒՆ**

постклассической методологии является поиск новых механизмов исследования процесса самоорганизации сложных, нелинейных стохастических процессов постклассического мира социального (правового, политического)⁵.

Смена научных парадигм, появление новых научных стратегий имеет место на каждом новом этапе истории, что призвано отразить возникновение новых феноменов реальности, которые невозможно описать и объяснить на языке прежней научной теории.

Сказанное является одним из объективных оснований разграничения понятий государство и государственность.

Особенностью социальных систем является преемственность. Особенность социума, его государственности зависят от специфических черт его исторического развития, равно как и от ментальности каждого народа.

С позиций социально-антропологического подхода к государственности той или иной эпохи накладывается неизгладимый отпечаток на состояние общества, что во многом формирует мнения о природе государства.

Ментальности и динамика развития в неевропейских государствах характеризуются высокой степенью традиционализма⁶.

Традиционализм наполняет заимствования, в том числе правовые и политические институты старым содержанием.

На необходимость учета этого ракурса исследования исторического процесса указывали многие представители юридической, социологической и философской мысли. Как отмечал Гегель: «все дело в том, чтобы в видимости временного и приходящего познать субстанцию, которая имманентно, и вечное, ко-

торое присутствует в настоящем, ибо, выступая в своей действительности, разумное, синоним идеи, выступает в бесконечном богатстве форм, явлений и образований»⁷.

Все исследования исторического процесса являются свидетельством жизненной неспособности традиционализма, который в очередной раз подчеркивает необходимость как социально-антропологического подхода, так и историко-хронологического подхода к изучению и познанию государственности.

С указанными методами тесно сопрягается метод диахронного сравнения.

Изучение очередных стадий модернизации общества и его институтов указывают зачастую на имманентно осуществляемое воспроизводство традиционалистской исследовательской позиции как эффективного вектора их познания.

С применением подобного вектора исследовательской стратегии становится очевидным факт того, что итогом очередной фазы модернизации оказывается воспроизводства традиционалистской парадигмы.

Это представляется закономерным и естественным если учесть, что если бы общество полностью детерминировалось лишь ближайшим предшествующим периодом, оно, даже обладая самой гибкой структурой, при таком резком изменении лишилось бы своего костяка⁸.

Таким образом, вполне оправданной и научно обоснованной является усмотрение в качестве принципа развития общества постепенность и преемственность.

Высокая степень традиционализма, свойственная неевропейским обществам является квинтэссенцией глубинной стагнации, наполняя новые правовые и политические институты старым содер-

жанием.

Преемственность превалирует над привнесенным, гетерономным несмотря на провозглашаемые некоторыми государствами утверждения о необходимости экспортирования демократии в определенные регионы современного мира.

Данную точку зрения разделяют многие авторы, исследующие методологические проблемы государственности.

«В самом широком значении понятие «государственность» охватывает комплекс элементов, структур, институтов публичной власти, организация и формы функционирования которых на различных этапах развития социума обусловлены **исторически складывающейся экономической, политической, социо-культурной самобытностью конкретного народа или группы народов**»⁹.

Традиционна и преемственна как государственность, так и ее составные, основополагающие элементы. Так, механизм государственной власти, присущий любому государству отличается такой качественной особенностью как целостность и единство.

Механизм государственной власти, как и любой социальных механизм, имеет два аспекта своего существования: внутренний и внешний.

Внутренний аспект, как и любой социальный механизм, предполагает сочетание объективных и субъективных факторов. Объективность основывается на уровне материальной и духовной культуры, предопределяющей потребности и цели общества, равно как и методы их реализации и достижения.

Субъективный компонент зависит от субъективных особенностей состава бюрократии, кадровой политики иных тактических составляющих, в том числе и поведение лиц, вовлеченных в ее деятельность¹⁰.

На наш взгляд методологическое значение имеет утверждение Ю. Е. Аврутина о том, что именно внешняя сторона механизма государственной власти демонстрирует ее связь с целями для достижения которых он создается и конструируется. «Это выражается в формах, методах и средствах достижения целей, являющихся своеобразным ответом государства на общественные потребности в самосохранении и саморазвитии социума»¹¹.

Как утверждает Чичерин, на передаче созданного человеческим разумом материального и умственного капитала от одного поколения к другому зиждется вся история человеческих обществ. Именно в нем заключается главное орудие развития¹². О необходимости твердого философского основания и обоснования всяких связующий начал научной теории особо отмечал Чичерин¹³.

Таким образом, отдавая дань новым, постклассическим подходам к изучению действительности не следует игнорировать и зарекомендовавшие себя, проверенные временем и практикой, вошедшие в арсенал научного знания приемами исследования.

Ценность метода в науке и в научной деятельности заключается в том, что он является знанием, с помощью которого добывается новое знание.

Среди эффективных методов исследования государственности следует назвать сравнительный метод, предполагающий два основных подхода: синхронический — предполагающий одновременное (синхронное) сравнение объектов и диахронический, предполагающий сравнение как одного, так и двух и более объектов в разное время.

Методом диахронного сравнения оказалось возможным выделение таких особенностей традиционной государственности как:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ**ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

1. Доминирование над обществом;
2. Партикуляризм права;
3. Сословный характер общества и права;
4. Канонический характер права;
5. Внеэкономическое принуждение преобладающей части общества.

Государственность нового исторического времени характеризуется наличием нации как своей социальной основы, связанной с государством, институтом гражданства. Особенностью новой государственности является также конвен-

циональность государственной власти и общества, равно как и разделение властей и самоограничение государственной власти правом и законом. Дальнейшая тенденция гуманизации и демократизации государственности привели к необходимости модернизации новых социально-политических и государственно-правовых институтов, вызвавших кризисные ситуации в экономической сфере и востребовавших новые тенденции в развитии политических и государственных институтов — необходимость диалогического характера государства и единого правового закона как формы существующего позитивного права.

¹ Кравец А.С. Методология науки. Воронеж, 1991, С.21.

² Новейшая философская энциклопедия в 4-х томах. Т.2, М., 2001, С.554.

³ Василькова А.А. Порядок и хаос в развитии социальных систем. // Синергетика и теория социальной самоорганизации. СПб., 1991, С.30.

⁴ Венгеров А.Б. Теория государства и права. М., 2002, С.313.

⁵ Василенко Н.А. Политическая философия. М., 2010, С.9.

⁶ Голубева Л.А., Черноков А.Э. Сравнительное государствоведение. СПб., 2009, С.11.

⁷ Гегель. Лекции по истории философии. Сочинения. Т.1, М.-Л., 1935, С.54.

⁸ Блок М. Апология истории. М., 1986, С.25.

⁹ Аврутин Ю.Е. Государство и право. Теория и практика. М., 2009, С.40.

¹⁰ Там же, С.44.

¹¹ Там же.

¹² Чичерин Б.Н. Философия права. М., 2011, С.58.

¹³ Чичерин Б.Н. Указ.соч. С.63.

ABOUT THE METHODOLOGY OF STATEHOOD STUDIES

Vahe GEVORGYAN

Assistant Professor, YSU

Chair of Theory and History of State and Law,

Candidate of Legal Sciences

The theory of the state currently serves as an urgent problem - demanding a special methodology of study and understanding. The methodological challenge of the study of the state is the need to combine traditional and new paradigms and their associated concepts. The aforementioned feature of the methodology of the state aims at the optimal implementation of the main functions of the method - the organization of the research process (knowledge) of the subject. In this regard, two directions in the development of methodology are explicitly identified:

Study of the properties of objects, which are the traditional focus of development of the methodology and

Research of the methods and forms of scientific knowledge.

The aforementioned two directions and

the need for their clear differentiation are one of the most urgent problems of modern jurisprudence, which was announced by A.S. Kravets in his monograph "The methodology of science."

The next requirement of the methodology of the state is the rationalization and search for the ways to ensure the effectiveness of scientific knowledge by focusing on specific public-scientific methods, which assumes the formation of professional methodology (highly specialized) as one of the areas of modern technology - mental activity.

The scope of such broad category as the state provides for a wide framework for consideration of all the features of individual states during the historical development, which gives every individual statehood a specific identity and uniqueness.

For this reason, extremely popular are the historical and chronological, comparative methods, as well as a method of traditionalism - explaining the filling in of new forms with old content.

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**ՄԱՐԴՈՒՆ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՄԱՎԱԾՔՆԵՐ
ՓՈՒՆՊԱՏՎԱՍՏԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՏՈՒԿ ՍՈՒԲՅԵԿՏՆԸ**

ԱՄՏԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

*ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի
ասպիրանտ*

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում մարդու մարմնի մասը կամ հյուսվածքները վերցնելու կամ փոխպատվաստման օրենքով նախատեսված պայմաններն ու կարգը խախտելու համար, որն անզգուշությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս է պատճառել մարմնի մասեր կամ հյուսվածքներ տվողի կամ ընդունողի առողջությանը: Հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում 1-ին մասում նկարագրված արարքի համար, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ:

Հանցակազմի վերլուծությունից երևում է, որ վերջինիս սուբյեկտը հատուկ է: Որպես այդպիսին կարող է հանդես գալ միայն այն անձը, ում վրա դրված է մարդու մարմնի մասը կամ հյուսվածքը վերցնելու կամ փոխպատվաստելու՝ օրենքով նախատեսված պայմաններն ու կարգը պահպանելու պարտականություն: «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի հիման վրա ՀՀ կառավարության կողմից 2010 թվականի սեպտեմբերի 16-ին ընդունված՝ «Փոխպատվաստման օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու, մշակելու կանոնները և փոխպատվաստումն իրականացնելու կարգը հաստատելու մասին» թիվ 1260-Ն որոշման (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից) 17-րդ կետի համաձայն՝ վերցված օրգանների և (կամ)

հյուսվածքների փոխպատվաստումն իրականացվում է միայն համապատասխան պատրաստվածություն ունեցող բժիշկների, միջին և կրտսեր բուժանձնակազմի խմբի կողմից: Դիակային դոնորի դեպքում նշված բժշկական խմբի մեջ չեն կարող ընդգրկված լինել այն բժիշկները, ովքեր մասնակցել են դոնորի ուղեղային մահվան հաստատմանը:

Մեր կարծիքով, մեջբերված հասկացությունը շատ ընդհանրական բնույթ ունի և անհրաժեշտ է այն հստակեցնել, խոսքը վերաբերում է հատկապես «համապատասխան պատրաստվածություն ունեցող բժիշկ» ձևակերպմանը, ինչպես նաև այն հարցին, թե արդյոք միջին և կրտսեր բուժանձնակազմն իրավասու է վերցված օրգանների և (կամ) հյուսվածքների փոխպատվաստում իրականացնելու:

Լեզվաբանական առումով բժիշկը բնորոշվում է որպես բարձրագույն բժշկական կրթություն ստացած մարդ, բժշկության մասնագետ¹: Բոլոր մասնագիտացումների բժիշկները, այդ թվում փոխպատվաստման վիրահատություն իրականացնող վիրաբույժները² հանդիսանում են բժշկական գործունեության³ սուբյեկտներ: Ուստի նախքան բժշկական գործունեության և համապատասխանաբար նաև մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու հետ կապված հանցագործությունների սուբյեկտի հարցի քննարկումը, կարծում ենք, անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչ է նշանակում «բժշկական գործունեություն», և ինչ տարրերից է այն բաղկացած:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում (ընդունված 1996 թվականի մարտի 4-ին) «բժշկական գործունեություն» հասկացությունը չի օգտագործում: Օրենքի եզ-

րութաբանությունը կառուցված է բժշկական գործունեության երկու տարրերի՝ «բժշկական օգնություն» և «բժշկական սպասարկում» հասկացությունների վրա: Այսպես, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բժշկական օգնությունը և սպասարկումը բնակչությանը կանխարգելիչ բուժական, դեղորայքային օգնության ցուցաբերումն է, ակտորոշիչ հետազոտությունների, վերականգնողական բուժման, բժշկական փորձաքննության անցկացումը, հարբժշկական և ոչ բուժական բնույթի այլ ծառայությունների մատուցումը: Այս օրենսդրական դրույթի վերլուծությունից երևում է, որ օրենսդիրը չի տարբերակում «բժշկական օգնություն» և «բժշկական սպասարկում» հասկացությունները, մինչդեռ, մեր կարծիքով, բժշկական օգնությունը՝ որպես բժշկական գործունեության բովանդակություն, անհրաժեշտ է տարբերել բժշկական սպասարկումից՝ բժշկական գործունեության ձևից:

Բժշկական օգնությունը հիվանդությունների, վնասվածքների, թունավորումների, ինչպես նաև ծննդաբերությունների ժամանակ բարձրագույն կամ միջին մասնագիտական բժշկական կրթություն ունեցող անձանց կողմից իրականացվող բուժական-պրոֆիլակտիկ միջոցառումների ամբողջություն է⁴: Բժշկական սպասարկումը բնակչության սպասարկման ինքնուրույն ոլորտ է: Մասնագիտական գրականության մեջ տարբերակվում են «սպասարկման ոլորտ» և «ծառայությունների ոլորտ» հասկացությունները⁵, մասնավորապես նշվում է, որ առաջինն ուղղված է ոչ միայն բնակչության՝ անընդհատ աճող պահանջմունքների բավարարմանը, այլև ներառում է այդ գործընթացի հետ կապված ծառայությունների արտադրությունը: Ծառայությունն արտադրվում է «ծառայությունների ոլորտում», և այստեղ դեռևս խոսք չկա սպասարկման մասին, քանի որ արտադրված ծառայությունները սպառողին հասանելի են դառնում միայն հետագայում: Ծառայությունները լինում են նյու-

թական և ոչ նյութական, հատուցելի և անհատույց: Նյութական են ապրանքների, իրերի մեջ նյութականացված ծառայությունները, որոնք հանդիսանում են արտադրական աշխատանքի արդյունք, ոչ նյութական են այն ծառայությունները, որոնք հանդիսանում են գործունեության օգտակար արդյունք⁶: Նյութական են առևտրային ծառայությունները, կենցաղային, կոմունալ և այլ ծառայությունների մեծ մասը, ոչ նյութական են բժշկի, ուսուցչի, դերասանի և այլն ծառայությունները:

Բնակչության սպասարկման ոլորտը հանդիսանում է տնտեսության առանձնահատուկ ենթաբաժին, որի գործառույթային նշանակությունն անմիջական սպասարկման միջոցով բնակչությանը որոշակի բարիքներ՝ սպառողական ծառայություններ, մատուցելն է⁷: Բնակչության սպասարկման ոլորտի նման ընկալումը ներառում է ինչպես ծառայությունների, այնպես էլ սպասարկման ոլորտները, ուստի կարծում ենք, այն կիրառելի է նաև «բժշկական սպասարկում» հասկացությունը բնորոշելու համար:

Շարադրված դատողությունները հիմք ընդունելով՝ առաջարկում ենք «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում տարանջատել «բժշկական օգնություն» և «բժշկական սպասարկում» հասկացությունները և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 1-ի հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բժշկական օգնություն՝ բարձրագույն կամ միջին մասնագիտական բժշկական կրթություն ունեցող անձանց կողմից իրականացվող բուժական-պրոֆիլակտիկ միջոցառումների ամբողջություն:

Բժշկական սպասարկում՝ հատուցելի, իսկ առանձին դեպքերում՝ նաև անհատույց կերպով հիվանդին բժշկական օգնության ցուցաբերում, ինչպես նաև բժշկական փորձաքննության անցկացում, հարբժշկական և ոչ բուժական բնույթի այլ ծառայությունների մատուցում:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 1-ին

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

հողվածի 2-րդ մասն ամրագրում է, որ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված, բնակչությանը բժշկական օգնության և սպասարկման ուրոշակի տեսակներ ցուցաբերող ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռներեցները կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները՝ անկախ կազմակերպական-իրավական տեսակից և սեփականության ձևից:

Սույն դրույթի վերլուծությունից երևում է, որ դրանում որպես բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող սուբյեկտներ նշված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված, բնակչությանը բժշկական օգնության և սպասարկման ուրոշակի տեսակներ մատուցող ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռներեցները կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները: Մինչդեռ, հիմք ընդունելով «բժշկական օգնություն» և «բժշկական սպասարկում» հասկացությունների՝ վերևում մեջբերված բնորոշումները, կարծում ենք՝ բժշկական օգնության և սպասարկման սուբյեկտ կարող է լինել միայն բարձրագույն կամ միջին մասնագիտական բժշկական կրթություն ունեցող ֆիզիկական անձը: Ուստի առաջարկում ենք «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ կերպ. «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնում են բարձրագույն կամ միջին մասնագիտական բժշկական կրթություն ունեցող անձինք, ովքեր իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնում են կամ որպես ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված, բնակչությանը բժշկական օգնության կամ սպասարկման ուրոշակի տեսակներ ցուցաբերող ֆիզիկական անձ կամ անհատ ձեռներեց, կամ աշխատանքային

պայմանագրի հիման վրա աշխատում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված, բնակչությանը բժշկական օգնության սպասարկման ուրոշակի տեսակներ ցուցաբերող իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների (բժշկական հաստատությունների) կազմում՝ անկախ վերջիններիս կազմակերպական-իրավական տեսակից և սեփականության ձևից»:

Նույն տրամաբանությամբ, կարծում ենք, «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի հիման վրա ՀՀ կառավարության կողմից 2010 թվականի սեպտեմբերի 16-ին ընդունված՝ «Փոխպատվաստման օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու, մշակելու կանոնները և փոխպատվաստումն իրականացնելու կարգը հաստատելու մասին» թիվ 1260-Ն որոշման 17-րդ կետն անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Վերցված օրգանների և (կամ) հյուսվածքների փոխպատվաստումն իրականացվում է միայն բարձրագույն բժշկական կրթություն ունեցող անձի կողմից, ով աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատում է համապատասխան տեսակի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու համար լիցենզավորված բժշկական հաստատությունում:

Փոխպատվաստման վիրահատության իրականացմանն օժանդակելու իրավասություն ունի միջին և կրտսեր բուժանձնակազմը: Դիակային դոնորի դեպքում փոխպատվաստման վիրահատություն չեն կարող իրականացնել այն բժիշկները, ովքեր մասնակցել են դոնորի ուղեղային մահվան հաստատմանը»:

Շարադրված դատողությունները վերաբերում են արդեն վերցված օրգանների և (կամ) հյուսվածքների փոխպատվաստմանը, սակայն ՀՀ քրեական օրենսգրքի 125-րդ հոդվածի վերլուծությունից երևում է, որ այն պատասխանատվություն է նախատեսում ոչ միայն փոխպատվաստման, այլ նաև մարդու մարմնի մասը կամ հյուս-

վածքները վերցնելու՝ օրենքով նախատեսված պայմաններն ու կարգը խախտելու համար: Ուստի անհրաժեշտ է պարզաբանել նաև, թե ով է իրավասու կենդանի կամ դիակային դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնել: Այսպես, ՀՀ կառավարության վերոնշյալ՝ թիվ 1260-Ն որոշման մեջ սահմանված է կենդանի դոնորից փոխպատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու իրավասություն ունեցող անձանց շրջանակը: Մասնավորապես, որոշման 6-րդ կետում ամրագրված է, որ կենդանի դոնորից փոխպատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ կարող է վերցնել միայն համապատասխան մասնագիտացում ունեցող բժիշկների, միջին և կրտսեր բուժանձնակազմի խումբը: Այս խմբում ընդգրկվում են բժիշկ-անեսթեզիոլոգ, վիրաբույժ, բուժքույրեր, դատական բժիշկ կամ պաթանատոմ: Անհրաժեշտության դեպքում համապատասխան տեսակի բժշկական օգնություն կամ սպասարկում իրականացնելու համար լիցենզավորված բժշկական հաստատության տնօրենի հրամանով բուժանձնակազմի խմբում կարող են ընդգրկվել նաև այլ բժիշկ-մասնագետներ: Բուժանձնակազմի խմբի մեջ չեն ընդգրկվում այն բժիշկները, ովքեր մասնակցել են դոնորի ուղեղային մահվան հաստատմանը (կետ 9-րդ):

Մեր կարծիքով, փոխպատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու իրավասություն ունեցող անձանց շրջանակը ևս անհրաժեշտ է հստակեցնել: Առաջին հերթին՝ թվարկել, թե ովքեր են ընդգրկվում կենդանի դոնորից փոխպատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնող բուժանձնակազմի խմբի մեջ: Այս կապակցությամբ հարկ ենք համարում ընդգծել, որ դիակային դոնորից փոխպատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնող բուժանձնակազմի խմբի անդամները թվարկված են: Բացի այդ, կարծում ենք, ինչպես կենդանի, այնպես էլ դիակային դոնորներից փոխպատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուս-

վածքներ վերցնող բուժանձնակազմի խմբից անհրաժեշտ է առանձնացնել անմիջականորեն օրգանի վերցման գործառույթն իրականացնող բարձրագույն բժշկական կրթություն ունեցող անձին, քանի որ բուժանձնակազմի խմբի մյուս անդամներն ընդամենը օժանդակում են փոխպատվաստման վիրահատություն իրականացնելուն:

Շարադրված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ ՀՀ քրեական օրենսգրքի 125-րդ հոդվածի գործող դիսպոզիցիայի պայմաններում այս հանցագործության սուբյեկտ պետք է դիտել բարձրագույն բժշկական կրթություն ունեցող անձին, ով աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատում է համապատասխան տեսակի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու համար լիցենզավորված բժշկական հաստատությունում:

Վերոգրյալի հետ մեկտեղ, կարծում ենք, ՀՀ քրեական օրենսգրքի 125-րդ հոդվածի սուբյեկտային կազմի նման մեկնաբանությունից խուսափելու նպատակով անհրաժեշտ է այդ հոդվածով պատասխանատվություն նախատեսել նաև մարդու օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելուն կամ մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելուն օժանդակելու պայմաններն ու կարգը խախտելու համար և հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մարդու օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու կամ մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու կամ մարդու օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելուն կամ մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելուն օժանդակելու պայմաններն ու կարգը խախտելը, որն անզգուշությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս է պատճառել օրգաններ և (կամ) հյուսվածքներ տվողի և (կամ) ընդունողի առողջությանը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 125-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի սուբյեկտի կապակցությամբ հարկ ենք համարում ընդգծել, որ փոխպատվաստման վի-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

րահատություն իրականացնող բժիշկը պաշտոնատար անձ չի հանդիսանում⁹: Կարծում ենք, այս մոտեցումը կիրառելի է նաև այն դեպքում, երբ փոխպատվաստման վիրահատություն իրականացնող բժիշկը բժշկական հաստատությունում որոշակի պաշտոն է զբաղեցնում: Մեր տեսակետը հիմնված է այն հանգամանքի վրա, որ փոխպատվաստման վիրահատության իրականացումը մասնագիտական և ոչ թե կազմակերպական կամ վարչատնտեսական պարտականությունների կատարում է:

Հատուկ սուբյեկտ նախատեսող՝ մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու հետ կապված հանցագործությունների կապակցությամբ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հանցակցության խնդիրը, որի կապակցությամբ քրեական իրավունքի տեսության մեջ երկու մոտեցում կա: Այսպես, առաջին մոտեցման համաձայն՝ հատուկ սուբյեկտի կողմից կատարվող հանցագործություններին ընդհանուր սուբյեկտը չի կարող հանցակցել⁹: Երկրորդ մոտեցման համաձայն՝ հատուկ սուբյեկտի կողմից կատարվող հանցագործություններին ընդհանուր սուբյեկտի հանցակցությունը հնարավոր է՝ բացառությամբ այն հանցագործությունների, որոնց հանցակազմի օբյեկտիվ կողմը որոշակի առանձնահատկություններ ունի¹⁰: Համակարծիք լինելով վերջին մոտեցմանը՝ հարկ ենք համարում ընդգծել, սակայն, որ հատուկ սուբյեկտի կողմից կատարվող հանցագործությունների դեպքում հնարավոր է միայն ընդհանուր հանցակցություն, այսինքն՝ հանցակցություն դերերի բաժանմամբ: Հատուկ սուբյեկտի հետ ընդհանուր սուբյեկտի համակատարում, այսինքն՝ հանցագործության օբյեկտիվ կողմի իրականացմանը բոլոր հանցակիցների մասնակցություն հնարավոր չէ: Ընդհանուր և հատուկ սուբյեկտների հանցակցությանը վերաբերող այս մոտեցումը կիրառելի է նաև հատուկ սուբյեկտ նախա-

տեսող՝ մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու հետ կապված հանցագործությունների նկատմամբ: Ուստի կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 125-րդ հոդվածի 2-րդ մասն անհրաժեշտ է լրացնել «կատարվել է կազմակերպված խմբի կամ հանցավոր համագործակցության կողմից» ձևակերպմամբ և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Նույն արարքը, որը՝

1) կատարվել է կազմակերպված խմբի կամ հանցավոր համագործակցության կողմից.

2) անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ»:

Հատուկ սուբյեկտի հետ հանցակցության կապակցությամբ քրեական իրավունքի տեսության մեջ վիճահարույց է կատարողի անձնային հատկանիշները մյուս հանցակիցներին վերագրելու հարցը: Այս հարցի վերաբերյալ տեսության մեջ տարբեր մոտեցումներ են արտահայտվել: Մասնավորապես, առաջարկվում է կատարողի անձնային հատկանիշները վերագրել միայն կատարողին¹¹: Տ.Մ.Կաֆարովի և Ա.Վ.Բորոդինի կարծիքով, կատարողի անձնային հատկանիշները, որոնք նախատեսված են որպես հանցակազմի կոնստրուկտիվ հատկանիշ, պետք է վերագրվեն այլ հանցակիցների կամ չպետք է ազդեն հանցակիցների արարքների որակման վրա, եթե անրագրված են որպես հանցակազմի որակյալ հատկանիշ¹²: Մ.Ի.Կովալյովի և Ա.Ն.Տրայնիմի մոտեցման համաձայն՝ կատարողի անձնային այն հատկանիշները, որոնք ներառված են հանցակիցների դիտավորության մեջ և նախատեսված են որպես հանցակազմի կոնստրուկտիվ կամ որակյալ հատկանիշ, պետք է հաշվի առնվեն հանցակիցների արարքների որակման ժամանակ¹³:

Մեր կարծիքով, սակայն, մեջբերված մոտեցումները կիրառելի չեն ՀՀ քրեական օրենսգրքի 125-րդ հոդվածի նկատմամբ, քանի որ վերջինիս դիպագիցիայում կատարողի, այն է՝ փոխպատվաստման վիրահատություն իրականացնելու իրավունք ունեցող բժշկի անձնային հատկանիշները

նախատեսված չեն որպես հանցակազմի որակյալ հատկանիշ: Իհարկե, այն հանգամանքը, որ կազմակերպված խմբի կամ հանցավոր համագործակցության կազմում որպես կատարող գործում է բժիշկը, բարձրացնում է կատարված հանցանքի հանրային վտանգավորությունը: Մեր կարծիքով, սակայն, այդ հանգամանքին օրենսդրական գնահատական տալու, այն է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 125-րդ հոդվածի 2-րդ մասում կազմակերպված խմբի կամ հանցավոր համագործակցության կողմից հանցանքի կատարումը որպես հանցակազմի որակյալ հատկանիշ նախատեսելու դեպքում արարքի հանրային վտանգավորությունը պատշաճ գնահատական կստանա և դատարանի կողմից պատիժ նշանակելիս լրացուցիչ գնահատման կարիք չի ունենա:

ՀՀ քրեական օրենսգրքի 125-րդ հոդվածի դիսպոզիցիայի տառացի մեկնաբանությունից բխում է, որ օբյեկտիվ կողմից բնութագրվում է մարմնի մասը կամ հյուսվածքը վերցնելու կամ փոխպատվաստելու՝ օրենքով նախատեսված պայմաններն ու կարգը խախտելու մեջ, որը կարող է արտահայտվել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ: Մինչդեռ, մարմնի մասը կամ հյուսվածքը վերցնելու կամ փոխպատվաստելու պայմաններն ու կարգը կարող են կարգավորվել ոչ միայն օրենքով, այլ նաև տարբեր ենթօրենսդրական ակտերով (հրաման, կարգադրություն, ուղեցույց և այլն), որոնցում ամրագրված են փոխպատվաստման վիրահատություն իրականացնելու՝ բժշկական գիտության կողմից մշակված կանոնները: Ընդհանրապես, քրեական պատասխանատվության տեսանկյունից բժշկի վարքագիծը գնահատելիս բավարար է պարզել, թե նա գործել է արդյոք վերոնշյալ կանոններին համապատասխան, թե ոչ: Համանման կերպով, բժշկագիտության կողմից մշակված կանոնները հիմք են մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու հետ կապված բժշկի գործողությունները գնահատելու համար: Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ ՀՀ կառավար-

ության կողմից 2010 թվականի սեպտեմբերի 16-ին ընդունված «Փոխպատվաստման օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու, մշակելու կանոնները և փոխպատվաստումն իրականացնելու կարգը հաստատելու մասին» թիվ 1260-Ն որոշմամբ ամրագրվել է, որ օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու, մշակելու և փոխպատվաստումն իրականացնելու բժշկական ուղեցույցները հաստատվում են ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

Փոխպատվաստման վիրահատություն իրականացրած բժիշկը ենթակա է քրեական պատասխանատվության այն դեպքում, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կապացուցվի, որ վիրահատության բացասական հետևանքներն առաջացել են ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով հաստատված՝ օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու և փոխպատվաստումն իրականացնելու բժշկական ուղեցույցները բժշկի կողմից չպահպանելու հետևանքով: Դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ փոխպատվաստման վիրահատություն իրականացնելիս բժշկի կողմից փոխպատվաստման վիրահատության կանոնների պահպանումը բացառում է ՀՀ քրեական օրենսգրքի 125-րդ հոդվածով արգելված արարքի համար նրա պատասխանատվությունը: Նույն կերպ բժիշկը չի կարող պատասխանատվության ենթարկվել, եթե փոխպատվաստման վիրահատություն իրականացնելու կանոնները բժշկագիտության զարգացման տվյալ փուլում բավականաչափ մշակված կամ կատարելագործված չեն: Վերջին մոտեցումը հիմնված է գրականության մեջ արտահայտված այն տեսակետի վրա, որ գոյություն ունեն բացասական երևույթներ ու գործընթացներ, որոնց դեմ առկա գործիքակազմը կանխարգելման կամ վնասակար հետևանքների չեզոքացման ամբողջական երաշխիք չի տալիս: Խոսքը վերաբերում է, օրինակ, այս կամ այն հիվանդությունը բուժելու անկատար մեթոդներին⁴⁴:

Այս ամենի վերլուծությունը հիմք ընդուն-

Քրեական իրավունք

նելով՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 125-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 125. Փոխպատվաստման վիրահատության կանոնները խախտելը

1. Մարդու օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու կամ մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու կամ մարդու օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելուն կամ մարդուն

օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելուն օժանդակելու պայմաններն ու կարգը խախտելը, որն անզգուշությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս է պատճառել օրգանների և (կամ) հյուսվածքներ տվողի և (կամ) ընդունողի առողջությանը:

2. Նույն արարքը, որը՝

1) կատարվել է կազմակերպված խմբի կամ հանցավոր համագործակցության կողմից.

2) անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ»:

¹ Տե՛ս Աղայան Է.Բ. Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 191:

² Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելը վիրաբուժության ինքնուրույն ճյուղ է. մասնագիտական գրականության մեջ այն անվանում են նաև վերակառուցողական վիրաբուժություն (այս մասին տե՛ս «Հանրամատչելի բժշկական հանրագիտարան»-եր.: Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբ., 2001, էջ 684): Վիրաբուժությունը կլինիկական բժշկագիտության բաժին է (այս մասին տե՛ս Петров С.В. “Общая хирургия”.-СПб.: Издательство “Лань”, 1999, էջ 13): Վիրաբույժ բարձրագույն բժշկական կրթությամբ մասնագետ է, բժիշկ, որն ստացել է վիրաբույժի լիցենզիա (այս մասին տե՛ս «Հանրամատչելի բժշկական հանրագիտարան»-եր.: Հայկ. հանրագիտ. գլխ. խմբ., 2001, էջ 103, Петров С.В. “Общая хирургия”.-СПб.: Издательство “Лань”, 1999, էջ 22):

³ «Բժշկական գործունեություն» եզրույթը, սակայն, ՀՀ գործող քրեական օրենսգրքում կիրառվում է միայն 280-րդ հոդվածում, որը պատասխանատվություն է նախատեսում մասնավոր բժշկական կամ դեղագործական գործունեությամբ ապօրինաբար զբաղվելու, կեղծ դեղեր պատրաստելու կամ իրացնելու համար:

⁴ Տե՛ս Энциклопедический словарь медицинских терминов. М., 1983, էջ 156:

⁵ Տե՛ս Кочерга А.И. Сфера обслуживания населения. - М.: Мысль, 1979, էջ 75, Шешенин С.Д. О правовой природе договоров в сфере обслуживания // Бытовое обслуживание населения (правовые вопросы) - М.: Юрид.

лит., 1968, էջ 15, Правовое регулирование отношений в сфере обслуживания граждан. - М.: ИГПАН, 1983, էջ 67, Козак В.С. Непроизводственная сфера: Вопросы теории. - Киев, 1979, էջ 312 և այլն:

⁶ Տե՛ս Кочерга А.И. Сфера обслуживания населения. - М.: Мысль, 1979, էջ 75, ինչպես նաև՝ Шеденов У.К. Сфера обслуживания. - Алма-Ата: Казахстан, 1982, էջեր 16-23:

⁷ Տե՛ս Мишкинас А., Добровольскас А. Труд в сфере обслуживания. - Вильнюс: Минтае, 1984, էջ 8:

⁸ Տե՛ս Дагель П.С. Об уголовной ответственности врачей // Советская юстиция. - 1964. - N10, էջ 14:

⁹ Տե՛ս Тельнов П.Ф. Ответственность за соучастие в преступлении. - М., 1974, էջեր 148-149:

¹⁰ Տե՛ս Орымбаев Р. Специальный субъект преступления. - Алма-Ата, 1977, էջեր 130-133:

¹¹ Տե՛ս Гаухман Л.Д. Квалификация преступлений, - М., 1991, էջ 16, Мальхин В.И. Квалификация преступлений. Теоретические вопросы. - Куйбышев, 1981, էջ 67:

¹² Տե՛ս Кафаров Т.М. Проблема рецидива в советском уголовном праве.- Баку, 1972, էջեր 172-174, Бородин С.В. Квалификация преступлений против личности. - М., 1977, էջ 124:

¹³ Տե՛ս Ковалев М.И. Соучастие в преступлении. - М., 1984, էջեր 156-157, Трайнин А.Н. Учение о преступлении. - М., 1941, էջ 286:

¹⁴ Տե՛ս Тер-Акопов А.А. Ответственность за нарушение специальных правил поведения. - М.: Юрид. лит., 1995, էջ 40:

SPECIAL SUBJECT OF CRIMES CONNECTED TO TRANSPLANTATION OF HUMAN ORGANS AND (OR) TISSUES

Anna VARDAPETYAN

PHD student, YSU

Chair of Criminal Law

The article is dedicated to the special subject of the acts which are criminalized by the Article 125 of Criminal Code of RA (“Breach of rules on transplantation surgery”). According to national legislation, the subjects, who are entitled to carry out such surgery, are the doctors, who have relevant training and middle and junior medical staff members. However, the legislation doesn’t point out what it means by saying “the doctor, who has relevant training” and whether the middle and junior medical staff members are entitled to carry out transplantation surgery or they can only assist it. This is the main issue, the author discussed in her article. In addition, the author discussed the issue of differentiation of two elements of medical practice: medical aid and medical service, which are used together in national legislation. So the author suggests distinguishing medical aid, as a substance of medical practice from medical service, as a form of medical practice.

On the abovementioned point, the author suggests several amendments in “The Law

on Medical Aid and Medical Service of Population”, particularly in its Article 1(1). In author’s opinion, medical aid should be defined as integrity of medical-preventive measures that are carried out by the persons, who have higher and secondary medical education. On the author’s opinion, medical service has to be defined as providing medical aid to the patient in an indemnified or non-indemnified way, in addition, execution of medical expertise and providing other services of paramedical and non-medical character.

The author also suggests several amendments in the relevant decision of Government of RA, which was adopted on 16th September 2010, on the basis of 4th article of “The Law on Transplantation of Organs and (or) Tissues to Human”. Particularly, in author’s opinion the subjects, who are entitled to carry out transplantation surgery, are the persons with higher medical education, who work in the medical center, which has a license to carry out appropriate forms of medical aid and service. The middle and junior medical staff members are just entitled to assist the transplantation surgery.

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱՑՎԱԾ ԿԱՐԳԸ ՊԱՐՁԵՑՎԱԾ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Գևորգ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ

ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի նախագահի խորհրդական, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ

Քրեադատավարական ձևի տարբերակման ուղղություններից մեկը դրա պարզեցումն է: Ընդ որում՝ վերջինս կարելի է համարել քրեադատավարական ձևի տարբերակման հիմնական ուղղություն, եթե հաշվի առնենք պարզեցված քրեադատավարական ձևերի ներմուծման այն միտումը, որն առկա է գրեթե բոլոր այն պետություններում, որտեղ իրականացվում են դատաիրավական բնագավառի բարեփոխումներ: Դատավարական ձևի պարզեցումը դրսևորվում է նաև դատական քննության փուլում:

Բազմաթիվ պետությունների քրեական դատավարության օրենսգրքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել դատական քննության փուլում պարզեցված դատավարական ձևերի հետևյալ հիմնական տեսակները.

1. *Գործարք,*
2. *Արագացված կամ պարզեցված դատավարություն:*

Գոյություն ունի գործարքի երկու տարատեսակ: Դրանցից առաջինը մեղքի ընդունման գործարքն (plea bargain) է, որի էությունը այն է, որ մեղադրյալը անձամբ կամ պաշտպանի միջոցով, դատարանի մասնակցությամբ կամ առանց դրա գործարք է կնքում մեղադրողի հետ, որով երկու կողմերը զնուն են փոխադարձ զիջումների: Գործարքի առարկան և պայմանները

տարբեր երկրներում տարբեր կարող են լինել: Մասնավորապես, մեղադրյալի կողմից իր մեղքն ընդունելու փոխարեն կողմերը կարող են համաձայնության գալ արարքի որակման, նշանակվող պատժի չափի վերաբերյալ: Այսինքն՝ մեղադրյալի կողմից իր մեղքն ընդունելու դիմաց մեղադրողը կարող է նաև հրաժարվել ավելի ծանր մեղադրանքից: Տարբեր երկրներում տարբեր կարող է լինել նաև մեղադրանքի հիմնավորվածության կամ մեղադրյալի կողմից իր մեղքն ընդունելու ճշմարտացիության կանխավարկածի նկատմամբ վերաբերմունքը: Այլ կերպ ասած՝ մի դեպքում մեղադրյալի կողմից իր մեղքը ձևականորեն ընդունելը կարող է լինել բավարար, իսկ մեկ այլ դեպքում՝ ոչ: Մեղքի ընդունման գործարքի դասական դրսևորումներ են ամերիկյան պլիբարգեմը, Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքով սահմանված համաձայնեցման վարույթը:

Գործարքի մյուս տեսակը՝ սելերանտը (լատ. Celerantes՝ արագ, արագընթաց բառից), իրենից ներկայացնում է դարձյալ կողմերի համաձայնություն, սակայն ոչ թե մեղքն ընդունելու և դրա դիմաց զիջումների, այլ դատարանում պարզեցված ընթացակարգ կիրառելու վերաբերյալ: Իհարկե, այս ընթացակարգի կիրառումը ևս կապված է մեղադրյալի կողմից իր մեղքն ընդունելու հետ, և որպես հետևանք դրա արդյունքում ևս նախատեսվում են որոշակի զիջումներ, բայց դրանք գոյություն ունեն որպես սելերանտի կիրառման օրենքով սահմանված պայման և հետևանք: Կողմերի միջև նախապես կնքված գործարքը վերաբերում է միայն օրենքով սահմանված ընթացակարգը կիրառելուն: Սելերանտային գործարքը, կարծես թե, ամերիկյան

պլիբարգենի ներմուծման ժամանակ մայրցամաքային Եվրոպայի պետությունների զգուշավորության արդյունք է: Սելերանտի դրսևորումներ են իտալական «պատտաշանենտոն», իսպանական «կոնֆորմիդադը», պորտուգալական «սունմարիսիմոն»:

Արագացված կամ պարզեցված դատավարությունը ներառում է բոլոր այն վարույթները, որոնցում քրեադատավարական ձևի պարզեցումը չի իրականացվում գործարքի հաշվին: Այսինքն՝ այդ կարգը կիրառելու վերաբերյալ կողմերի միջև որևէ նախնական պայմանավորվածություն ձեռք չի բերվում, և իր մեղքն ընդունելու փոխարեն մեղադրյալը չի ստանում որևէ լրացուցիչ զիջում:

Այս կարգի ամենադասական օրինակը Բելուռուսի քրեական դատավարության օրենսգրքով սահմանված արագացված դատավարությունն է:

ՀՀ քրեական դատավարությունում դատական քննության փուլում դատավարական ձևի տարբերակման միակ դրսևորումը դատական քննության արագացված կարգն է: Դրա էությունը դրսևորվում է նրանում, որ ամբաստանյալն արտահայտում է իր համաձայնությունն առաջադրված մեղադրանքի հետ (առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչում), այսինքն՝ չի վիճարկում նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների վերաբերելիությունը, թույլատրելիությունը և արժանահավատությունը, որի հիման վրա էլ դատարանը հաստատված է համարում այդ ապացույցներով հիմնավորվող փաստական հանգամանքները: Դատարանը պարզում է միայն արագացված կարգ կիրառելու՝ օրենքով սահմանված հիմքի և պայմանների առկայությունը, և դրանց բավարարության դեպքում կայացնում է արագացված կարգ կիրառելու նախն որոշում: Արագացված կարգով գործի քննության ժամանակ դատարանն ապացույցների ընդհանուր կարգով սահմանված հետազոտություն չի իրականացնում և արդյունքում կայացնում է մեղադրական դատավճիռ, ո-

րով նշանակված պատիժը չի կարող գերազանցել քրեական օրենքով մեղսագրվող հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը, իսկ եթե առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից, ապա առավել մեղմ պատիժը: Արագացված կարգի կիրառման արդյունքում ամբաստանյալն ազատվում է նաև դատական ծախսերից, բացառությամբ հանցագործությամբ տուժողին պատճառված վնասի գումարից:

Դատական քննության արագացված կարգի՝ ՀՀ քրեական դատավարություն ներմուծվելուց հետո բուռն քննարկումներ սկսվեցին դրա բնույթի, պարզեցված վարույթների վերը նշված տեսակներին դրա պատկանելիության վերաբերյալ: Նույնը տեղի էր ունեցել նաև, երբ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսվեց «դատական քննության հատուկ կարգի»՝ ինստիտուտը: Այս երկու ինստիտուտներն իրենց էությամբ ամբողջությամբ համընկնում են:

Նշենք, որ մինչ այժմ միասնական մոտեցում չկա այդ ինստիտուտների էության, պարզեցված դատավարական ձևերի համակարգում դրանց տեղի վերաբերյալ: Ընդ որում՝ անհամաձայնությունները հիմնականում կապված են դատական քննության արագացված կարգի՝ գործարքի տարատեսակ հանդիսանալու հարցի հետ:

Այսպես, առաջին մոտեցման կողմնակիցներից Ն. Դուբովիկը կարծիք է հայտնում, որ դատական քննության արագացված կարգը մեղքի ընդունման գործարք է՝ նշելով, որ նույնն են դրանց նպատակները, երկուսի դեպքում էլ մեղավորության վերաբերյալ ապացույցներ չեն հետազոտվում, ինչպես գործարքը չհաստատվելու, այնպես էլ արագացված կարգի կիրառման պայմանների բացակայության դեպքում գործը քննվում է ընդհանուր կարգով, երկուսի արդյունքն էլ դատավճիռն է, որը երկու դեպքում էլ չի կարող բողոքարկվել դա-

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

տարանի հետևությունների և փաստական հանգամանքների անհամապատասխանության հիմքով:

Յեղիմակը, մեր կարծիքով, ընդգծում է այս երկու ինստիտուտների սոսկ արտաքին ընդհանրությունները, որոնք բխում են դատավարական ձևի պարզեցման տրամաբանությունից: Նրա կողմից մատնանշվող ընդհանրությունները վերաբերում են այդ ինստիտուտների այն հատկանիշներին, որոնք չեն բնորոշում հենց դրանց յուրահատկությունը, այլ վերագրելի են քրեադատավարական ձևի պարզեցման ցանկացած դրսևորման:

Ա. Ս. Ալեքսանդրովն իր գիտական հոդվածում փորձում է ցույց տալ քննարկվող ինստիտուտների նույնությունը գենետիկական հատկանիշների մակարդակում³:

Ա. Վ. Սմիրնովը և Կ. Բ. Կալինովսկին դատական քննության արագացված կարգը համարում են պարզեցված ընթացակարգ կիրառելու վերաբերյալ գործարքի դրսևորում⁴:

ՀՀ Սահմանադրական դատարանը դիրքորոշում է արտահայտել, որ դատական քննության արագացված կարգի ինստիտուտի «առանցքում «գործարքն» է քրեական դատավարության երկու կողմերի՝ մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև, որի շրջանակներում մեղադրյալը համաձայնում է առաջադրված մեղադրանքին, ինչի դիմաց նրա համար երաշխավորվում է պատժի այնպիսի չափ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը, իսկ եթե առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից՝ ապա առավել մեղմ պատժը»⁵:

Նշենք նաև, որ դատական քննության արագացված կարգի՝ որպես գործարքի տարատեսակի ընկալումը պայմանավոր-

ում է մի շարք դատավարագետների ժխտողական վերաբերմունքը այդ ինստիտուտի վերաբերյալ:

Այսպես Վ. Մախովը և Ս. Պեչկովը, քննարկելով մեղքի ընդունման գործարքը ՌԴ քրեական դատավարություն ներմուծելու հնարավորությունը, այն համարում էին ժամանակավրեպ՝ դա կապելով հիմնականում կադրերի՝ դրան պատրաստ չլինելու հետ⁶:

Ի. Լ. Պետրուխինը ևս քննարկման առարկա է դարձնում մեղքի ընդունման գործարքը և կարծիք հայտնում, որ այն չի համապատասխանում ռուսական իրավամտածողությանը⁷:

Նշված մոտեցումն արդարացի է համարում Ա. Ռ. Բելկինը, ով, արագացված կարգի առանձին իրավակարգավորումները համադրելով քրեական դատավարության հիմնարար դրույթների հետ, հանգում է այն հետևության, որ «ժողովրդավարականացման» և «իրական մրցակցության» դրոշի ներքո դատական գործարքների կասկածելի պրակտիկայի ներմուծումը քրեական դատավարություն իրականում ոչ այլ ինչ է, եթե ոչ տխրահռչակ «դատավարական գերպարզեցում»⁸:

Ֆակառակ մոտեցման կողմնակիցներից Դ. Պ. Վելիկինը նշում է, որ արագացված կարգը չի հանդիսանում մեղքի ընդունման գործարքի անալոգ, նույնիսկ եթե հաշվի առնենք, որ գոյություն ունեն «գործարքի» մի քանի տեսակներ⁹:

Ս. Ա. Ռոզովայան, անդրադառնալով արագացված կարգի և մեղքի ընդունման գործարքի հարաբերակցությանը, նշում է, որ այդ երկու ինստիտուտներն ունեն տարբեր իրավական բնույթ՝ շեշտը դնելով հիմնականում արագացված կարգի կիրառման դեպքում որպես այդպիսին «գործարքի» բացակայության վրա: Յեղիմակը նշում է նաև, որ ընդունելի չէ արագացված կարգն իմաստավորելու համար «գործարք» եզրույթի գործածությունը՝ հաշվի առնելով դրա բացասական ընկալումը քրեական դատավարությունում¹⁰:

Ե. Վ. Օսիպովան և Վ. Վ. Կոնինը նշում են, որ ռուսական քրեական դատավարությունում դժվար է օգտագործել «մեղքի ընդունման գործարք» եզրույթը¹¹:

Ս. Ա. Կասատկինան գտնում է, որ արագացված կարգը մեղքի ընդունման գործարք կարելի է անվանել խիստ պայմանականորեն, այնքանով, որքանով, որ մեղադրյալը, իր մեղքն ընդունելով, գիտակցում է, որ դրա փոխարեն արժանանալու է մեղմ պատժի: Դրանով, ըստ այս հեղինակի, նշված երկու ինստիտուտների ընդհանրություններն սպառվում են: Նա գտնում է, որ արագացված կարգի կիրառման դեպքում մեղադրանքի առարկայի և սահմանների վերաբերյալ մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև «առևտուր» տեղի չի ունենում¹²:

Լ. Վ. Գոլովկոն մեղքի ընդունման գործարքն առանձնացնում է դատական քննության արագացված կարգից՝ նշելով, որ վերջինը ձևավորվել է դատավարական տարբերակման մայրցամաքային սկզբունքով¹³:

Կարծում ենք՝ դատական քննության արագացված կարգի բնույթը և էությունը հասկանալու, պարզեցված դատավարական ձևերի համակարգում դրա տեղը հստակեցնելու համար պետք է մի կողմ թողնել դրա և նմանատիպ այլ ինստիտուտների արտաքին և պատահական նմանությունները և տարբերությունները, պարզել դրանց ներքին էությունը: Այսպես, մեղքի ընդունման գործարքի ամերիկյան տարբերակը՝ պլիբարգենը, բնորոշվում է նրանով, որ դրա շրջանակներում դատավարության երկու կողմերի միջև տեղի են ունենում ակնհայտ սակարկություններ մեղադրանքի շուրջ: Վերջիններս, կշռադատելով մրցակցային դատավարությունում իրենց հաղթանակի հնարավորությունը, գնում են որոշակի զիջումների մյուս կողմի զիջումների դիմաց: Այսպես, դասական օրինակ. պաշտպանության կողմը համոզված չէ արդարացման, իսկ մեղադրողը՝ ներկայացված մեղադրանքի ամբողջ ծա-

վալով մեղադրական դատավճիռ կայացնելու հնարավորության մեջ: Այս դեպքում կողմերը գալիս են համաձայնության, և մեղադրողը հրաժարվում է մեղադրանքի որոշ մասերից՝ մնացած մասերով մեղադրյալի կողմից իրեն մեղավոր ճանաչելու դիմաց: Այսինքն՝ կողմերը գալիս են համաձայնության, գործարք են կնքում, որով որոշվում է դատարան ներկայացվող մեղադրանքի բնույթը, ծավալը, ինչպես նաև նշանակվելիք պատիժը:

Ավելին, պլիբարգենի դեպքում գործարքը կարող է կնքվել նաև այն դեպքում, երբ մեղադրյալն իրեն մեղավոր չի ճանաչում, բայց նաև չի վիճարկում մեղադրանքը (nolo contendere)¹⁴:

«Յուսիսային Կարոլինան ընդդեմ Էլֆորդի» գործով ԱՄՆ Գերագույն դատարանն ընդունել է այս մոտեցումը՝ որպես պայման նշելով, որ դատարանն այս դեպքերում պետք է համոզվի մեղադրյալի մեղքը հաստատող ապացույցների բավարարության մեջ (“North Carolina v. Alford”(400 U.S. 25(1970)):

Դժվար չէ նկատել, որ պլիբարգենը բնութագրվում է դիսպոզիտիվության այնպիսի բարձր աստիճանով, որը բնութագրական չէ դատական քննության արագացված կարգին:

Գործարքի սելեբանտային տարբերակի դեպքում կողմերի միջև դարձյալ կնքվում է գործարք, բայց պարզեցված ընթացակարգ կիրառելու մասին:

Այստեղ ևս չի պահանջվում, որ մեղադրյալն ընդունի իր մեղքը հանցագործության կատարման մեջ, այլ բավարար է միայն գործով վարույթի ընթացակարգը փոխելու վերաբերյալ նրա համաձայնությունը կամ նրա առարկության բացակայությունը¹⁵:

Դատական քննության արագացված կարգը, մեր կարծիքով, չի նույնանում գործարքի տեսակներից և ոչ մեկի հետ: Դրանք խիստ տարբեր են դիսպոզիտիվության սկզբունքի դրսևորման աստիճանի տեսանկյունից:

Դատական քննության արագացված

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

կարգ կիրառելու համար կարևոր պայման է մեղադրյալի կողմից իր մեղքն ընդունելը: Բայց արագացված կարգի դեպքում պարզեցված ընթացակարգի կիրառումը, ի տարբերություն սելերանտի, նախապես համաձայնեցված չէ մեղադրողի հետ: Արագացված կարգ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մեղադրյալը ներկայացնում է դատարանին՝ անկախ դրա վերաբերյալ մեղադրողի դիրքորոշումից: Դատախազն էլ կարող է առարկել արագացված կարգ կիրառելու դեմ: Արագացված կարգի և մեղքի ընդունման գործարքի միակ էական ընդհանրությունը մեղադրյալի նկատմամբ զիջումներն են: Այսինքն՝ արագացված կարգի դեպքում գործարքի միակ տարրը զիջումն է զիջման փոխարեն, այն է՝ մեղադրյալը, իր միջնորդությամբ պետությանն ազատելով տարբեր ռեսուրսների լրացուցիչ վատնումներից, դրա դիմաց ստանում է մեղմ պատիժ և ազատվում է դատական ծախսերից: Բայց ի տարբերություն մեղքի ընդունման գործարքի՝ արագացված կարգի կիրառման դեպքում փոխադարձ զիջումները ևս կողմերի միջև չեն համաձայնեցվում: Դրանք նախատեսված են քրեական դատավարության օրենսգրքով և կախված չեն որևէ մեկի հայեցողությունից: Հարկ ենք համարում հատուկ նշել, որ արագացված կարգի պարագայում մեղադրողը չի կարող թեթևացնել մեղադրանքը՝ ի տարբերություն մեղքի ընդունման գործարքի:

Դատական քննության արագացված կարգը չի պատկանում նաև պարզեցված վարույթների մյուս տեսակային խմբին: Այն չի հանդիսանում «մաքուր» արագացված կարգ, քանի որ պարունակում է գործարքի տարրեր: Իսկ մաքուր արագացված կարգի դեպքում դատավարական պարզեցումը տեղի է ունենում առանց մեղադրյալի նկատմամբ զիջումների:

Ինչ վերաբերում է արագացված կարգի

և վերը ներկայացված ինստիտուտների նմանություններին, ապա կարծում ենք, որ դրանք վերաբերում են դրանց արտաքին ու ձևական հատկանիշներին, և միանշանակ կարելի է նշել այդ բնույթի մի շարք տարբերություններ, որոնք առկա են դարձյալ այդ ինստիտուտների միջև:

Այս հարցի կապակցությամբ Վ. Ս. Ժիգուլիչը նշում է, որ մեղքի ընդունումն ընկած է աշխարհի տարբեր երկրներում ընդունված պարզեցված ընթացակարգերի կիրառման հիմքում: Բայց այդ հիմքի բովանդակության պարզաբանումը կոնկրետ ազգային տեսակի պարագայում ունի առանձնահատկություններ: Հեղինակը կարծիք է հայտնում, որ ազգային իրավական համակարգերի մերձեցման նպատակով անհրաժեշտ է կատարելագործել պարզեցված վարույթները՝ ելնելով միջազգային չափանիշներից, արտասահմանյան պետությունների փորձից և յուրաքանչյուր պետության համապատասխան ավանդույթներից¹⁶:

Այսպիսով, կարծում ենք՝ պետք է միանշանակ համաձայնել գրականության մեջ արտահայտված այն կարծիքին, որ դատական քննության արագացված կարգը «մեղքի ընդունման գործարքի» և «արագացված դատավարության» յուրահատուկ «հիբրիդ է»¹⁷: Արագացված կարգը բնութագրվում է ինչպես գործարքին, այնպես էլ արագացված դատավարությանը բնորոշ հատկանիշներով, ինչը թույլ չի տալիս այն համարել կամ առաջինի, կամ երկրորդի դրսևորում:

Նշենք նաև, որ թեև կարելի էր ենթադրել, որ արագացված կարգի ինստիտուտի զարգացումը կընթանա դիսպոզիտիվության սկզբունքի ընդլայնման ճանապարհով, և այն կսկսի ավելի շատ հարել «գործարքի» որևէ տեսակին, բայց, հակառակ դրան, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգը հստակ սահմանեց, որ համաձայնեցման վարույթ¹⁸ կիրառելու վերաբերյալ միջնորդություն կարող է ներկայացվել միայն նախնական դատա-

կան լսումների ժամանակ (կետ 5.11): Արագացված կարգի կիրառման հարցը միայն դատարանում բարձրացնելու վերաբերյալ պահանջն ըստ էության նպատակ է հետապնդում բացառել մեղադրողի և մեղադրյալի միջև այդ կարգի կիրառման վերաբերյալ նախնական պայմանավորվա-

ծությունը՝ բացառելով նաև նրանց միջև գործարքն ու սակարկությունները:

Հետևաբար, դատական քննության արագացված կարգը դեռևս կպահպանի իր հարաբերական ինքնուրույնությունը պարզեցված դատավարական ձևերի համակարգում:

¹ Միասնական տերմինաբանությունն ապահովելու համար նաև «հատուկ կարգի» վերաբերյալ ռուսական գրականությունից կատարված մեջբերումներում կօգտագործենք «արագացված կարգ» եզրույթը:

² Дубовик Н. “Сделка о признании вины” и “особый порядок”: сравнительный анализ // Российская юстиция. 2004г., N 4:

³ Александров А. С. Основание и условия для особого порядка принятия судебного решения при согласии обвиняемого с предъявленным обвинением. Государство и право, N 12, 2003г., էջ 45:

⁴ Смирнов А.В., Калиновский К.Б. Уголовный процесс: Учебник. Под общ. ред. А.В. Смирнова.-4-е изд., перераб. и доп.- М.:КНОРУС, 2008г., էջ 551:

⁵ Տես՝ ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ 931 որոշումը ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով. 28 ղեկտեմբերի 2010թ, կետ 8:

⁶ Махов В. Пешков М. Сделка о признании вины. Российская юстиция.,7/1998г., էջ 17:

⁷ Петрухин И. Л. Сделки о признании вины чужды российскому менталитету. //Российская юстиция, N 5/2001г. էջ 37-38:

⁸ Белкин А. Р. Особый порядок судебного разбирательства нуждается в коррективах. Публичное и частное право, N 2/2010 г. էջ 91-205.

⁹ Великий Д.П. Особый порядок судебного разбирательства: теория и практика. “Журнал российского права”, N 6, июнь 2005г. էջ 75-76:

¹⁰ Роговая С. А. Особый порядок вынесения

приговора при согласии обвиняемого с предъявленным обвинением-“Сделка о признании вины”? Материалы международной научно-практической конференции. Киев, 2006г. www.iuaj.net

¹¹ Осипова Е. В., Конин В.В. Особый порядок судебного разбирательства- “сделка” о признании вины? // Новое уголовно-процессуальное законодательство РФ: проблемы теории и практики. под. ред. Т.С. Волчецкой, Калининград, 2003г. էջ 103

¹² Касаткина С. А. Признание обвиняемого. “Перспект” 2010г. էջ 56:

¹³ Головки Л.В. Альтернативы уголовному преследованию как форма процессуальной дифференциации: Современные тенденции развития:Актуальные проблемы организации и деятельности. Автореф. дисс. ... докт. Юрид. наук.-М.: 2003г. էջ 18:

¹⁴ LaFave, W. R. criminal procedure/ W.R. Lafave, J.H. Israel. 2nd edition.-St. Paul: West publ. co, 1992.- էջ 932:

¹⁵ Thaman, S. Plea-bargaining, negotiating confessions and consensual resolution of criminal cases/ S. Thaman// -2007.- vol.11.3.-27.- http://ejcl.org/113/article113-4.pdf. :

¹⁶ Жигулич В. С. Признание вины- основание для сокращения судебного разбирательства (опыт Белоруссии и зарубежных государств).www.iuaj.net/book/export/html/420.

¹⁷ Հ. Դուկասյան, Դ. Մելքոնյան, Տարբերակված դատավարական ձևը և դրա առանձնահատկությունները, Պետություն և իրավունք, թիվ 1(35) 2007թ.,էջ 36:

¹⁸ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգում դատական քննության արագացված կարգը վերանվանվել է «Համաձայնեցման վարույթ»:

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**SPEEDY TRIAL IN THE SYSTEM OF SIMPLIFIED
PROCEDURE FORMS****Gevorg BAGHDASARYAN**

*ADVISER OF THE CHAIRMAN OF THE
CRIMINAL APPELLATE COURT OF THE RA,
POST-GRADUATE STUDENT OF THE
DEPARTMENT OF THE CRIMINAL PROCESS
AND CRIMINALISTIC OF YSU*

The article is devoted to one of the actual problems of the theory of the criminal process—the relation of accelerated order of the trial and other simplified procedure forms.

The author analyzes and compares the

opposite opinions to the problem, which appear in the legal literature, then presents his own point of view.

As a result, relevant research, the author concludes that the accelerated that the accelerated order of the trial does not completely consist with the main sorts of simplified procedure forms.

Key words: criminal-procedural form, accelerated order of the trial, simplified procedure form, plea bargain, the accelerated procedure.

ՈՉ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ԶԻՆՎԱԾ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ԴԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱԴԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անահիտ ԵՍԱՅԱՆ

Երևանի քաղաքապետարանի Նոր Նորքի ք/ԿԱԳ տ/բ 1-ին կարգի մասնագետ

Միջազգային մարդասիրական իրավունքը կիրառվում է զինված ընդհարումների, այլ կերպ ասած՝ պատերազմի պայմաններում: Միջազգային մարդասիրական իրավունքը զինված ընդհարումների կարգավորումն իրականացնում է իրավական նորմերի 2 տարբեր համակարգերի միջոցով.

1. միջազգային զինված ընդհարումների իրավունք, որը հստակ կանոնակարգված և ապահովված է միջազգային վերահսկողության մեխանիզմներով,

2. ոչ միջազգային զինված ընդհարումների իրավունք, որը բաղկացած է ընդհանուր բնույթի կանոններից, և որի վերաբերյալ չի գործում միջազգային վերահսկողության որևէ համակարգ:

Ոչ միջազգային զինված ընդհարումների վերաբերյալ հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումներ են համարվում այն հակամարտությունները, որոնք տեղի են ունենում մեկ պետության տարածքում մի կողմից կառավարության, մյուս կողմից զինված ապստամբական խմբերի միջև:

Առաջին հայացքից թվում է, որ նմանատիպ հակամարտության կարգավորումը պետության ներքին խնդիրն է և պետք է լուծվի առանց արտաքին միջամտության, հետևաբար պետք է հիմնավորել նմանատիպ իրավիճակում միջազգային իրավունքի նորմերի կիրառման անհրաժեշտությունը:

Նախ՝ բռնությունն ու զենքի կիրառումը մեկ պետության տարածքում նույն հետևանքներն են առաջացնում արյունահեղության ու ավերածությունների առումով, ինչ որ 2 պետությունների միջև զինված ընդհարումները: Մեր ժամանակաշրջանի համար անմարդկայնության վառ դրսևորում էր, օրինակ, Իսպանիայի քաղաքացիական պատերազմն ընդդեմ Նիգերիայի:

Երկրորդ՝ 2-րդ համաշխարհային պատերազմից հետո մարդու իրավունքների գաղափարը զարգացում ապրեց, և մարդու իրավունքների բնագավառում միջազգային իրավունքը սկսեց «ներխուժել» պետությունների ներքին գործերի մեջ: Պետությունները, իհարկե, պետք է պահպանեն իրենց երկրի ներսում խաղաղությունն ու կարգուկանոն վերականգնելու համար ուժ կիրառելու իրավունքը, սակայն միջազգային մարդասիրական իրավունքը պետք է սահմանափակեր խաղաղությունն ու կարգուկանոնը երկրի ներսում վերականգնելու անթույլատրելի մեթոդների կիրառումը, այսինքն՝ պետք է նախատեսեր միջոցներ ու մեթոդներ ընտրելու պետության իրավունքի սահմանափակում, և այս ամենն արվում էր մարդասիրական գաղափարներից ելնելով:

Չենց այս հանգամանքներով էր պայմանավորված 1949թ. օգոստոսի 12-ի Ժնևի 4 կոնվենցիաների ընդհանուր հոդված 3-ի ընդունումը, որը, ինչպես նշվել է Միջազգային դատարանի՝ Նիկարագուայի և ԱՄՆ-ի միջև ծագած վեճի կապակցությամբ կայացրած որոշման մեջ, ասոր համարվում է մարդասիրական հիմնական սկզբունքների արտահայտությունը:

Հոդված 3-ը սահմանում է. «Ոչ միջազգ-

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

գայի բնույթի զինված ընդհարման ժամանակ, որը ծագել էր Բարձր Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում, կոնֆլիկտի մեջ գտնվող յուրաքանչյուր կողմ պարտավոր է կիրառել հետևյալ դրույթները...»:

Այստեղ թվարկվում են մի շարք մարդասիրական դրույթներ, ինչպիսիք են՝ կյանքի և ֆիզիկական անձեռնմխելիության, մարդկային արժանապատվության դեմ ոտնձգության արգելքը, առանց դիսկրիմինացիայի հումանիտար վերաբերմունքի դրսևորում այն անձանց նկատմամբ, ովքեր անմիջականորեն չեն մասնակցում զինված գործողություններին կամ վայր են դրել զենքը, վիրավորներին և հիվանդներին օգնության ցուցաբերումը և այլն:

Ինչպես տեսնում ենք, հոդված 3-ը ամրագրում է միջազգային հումանիտար իրավունքի հիմնարար սկզբունքներ, ուստի նրա համընդհանուր կիրառումը թույլ է տալիս այն որակել որպես մինիկոնվենցիա:

Զնայած հոդված 3-ը սահմանում է պաշտպանության հիմնարար սկզբունքներ, և շատերն այն համարում են «մտքի մեծ հաղթանակ»³, քանի որ տվյալ ժամանակաշրջանի համար այն մեծ առաջընթաց էր, այնուամենայնիվ այն կատարյալ չէ, քանի որ չի սահմանում, թե ինչ պետք է հասկանալ ոչ միջազգային բնույթի զինված ընդհարում ասելով, այսինքն՝ ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումը բնորոշող որևէ հասկացություն չի տրվում: Սակայն այս հանգամանքը իրավական գրականության մեջ միանշանակ չի ընդունվել, քանի որ կա տեսակետ, ըստ որի՝ կոնկրետ հասկացության սահմանման բացակայությունն ունի իր դրական կողմը, քանի որ այդպիսով այն յուրաքանչյուր

կողմին տալիս է մեկնաբանման լայն դաշտ, հետևաբար հնարավոր է դարձնում մարդասիրական բնույթի ցանկացած միջամտություն⁴: Այլ կերպ ասած՝ հոդված 3-ը ճկուն գործիք է՝ ի պատասխան ներքին ընդհարումների, քանի որ յուրաքանչյուր պարագայում այն կարելի է կիրառել որպես հումանիզմի դրսևորում՝ առանց կոնկրետ իրավիճակին ճշգրիտ իրավական գնահատական տալու:

Միանշանակ չէ վերաբերմունքը նաև հոդված 3-ի կիրառման վերաբերյալ. ավելին՝ եղել են կարծիքներ, թե իբրև այն չի կիրառվում և ենթակա էլ չէ կիրառման, քանի որ ապստամբները, որոնք տվյալ դեպքում կոնֆլիկտի մի կողմ են հանդիսանում, Կոնվենցիայի անդամ-կողմ չեն, ուստի այդ հանգամանքը կարող է նրանց կողմից օգտագործվել և որևէ պարտավորություն չվերցնել հոդվածի կիրառման վերաբերյալ: Սակայն այդ տրամաբանությունը չի գործում, քանի որ հոդվածի կիրառումը միանշանակ դրականորեն կանդորադառնա ապստամբների վարկանիշի վրա և նրանց օգտին կաշխատի, ուստի ոչ տեսականորեն, ոչ էլ գործնականում կասկածի ենթակա չէ այն հանգամանքը, որ ապստամբները կկիրառեն մարդասիրական իրավունքի նորմերը: Խնդիրն ավելի լուրջ է կոնֆլիկտի մյուս կողմի դեպքում, քանի որ շատ հաճախ կառավարությունը չի ցանկանում ապստամբներին ընդունել որպես հակամարտության կողմ, ավելին՝ նույնիսկ ընդունել դրանց առկայության փաստը, հետևաբար կարող է դիտավորյալ չընդունել հոդված 3-ի կիրառման անհրաժեշտությունը: Ուստի հարկ է նշել, որ հակամարտության առկայության պայմաններում հոդված 3-ի կիրառումը որևէ կերպ չի ազդում հակամարտության կողմերի իրավական կարգավիճակի վրա⁵, այլ միայն դրա կիրառումով ապստամբները որոշակի քաղաքական կարգավիճակ են ստանում, այ-

սինքն՝ կառավարությունը ընդունում է իր երկրի տարածքում խնդրի առկայությունը և դրա կարգավորման ընթացքում պատրաստ է կիրառելու միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը: Այս տարբերակը, բնականաբար, յուրաքանչյուր ինքն իրեն հարգող պետության համար ավելի ընդունելի է, քանի որ սա դրական է ազդում նրա վարկանիշի վրա ինչպես իր պետության բնակչության, այնպես էլ միջազգային հանրության աչքերում, հատկապես որ հողված 3-ի նորմերը հունանիզմի դրսևորման նվազագույն դրույթներ են պարունակում:

Այնուամենայնիվ, ինչպես ցույց տվեց հետագա զարգացումը, հողված 3-ը ենթակա էր զարգացման, քանի որ շատ դրույթներ, որոնք անհրաժեշտ էին հունանիզմի լիարժեք դրսևորումն ապահովելու համար, բացակայում էին, մասնավորապես՝ Դատական երաշխիքներ, հունանիտար օգնության ցուցաբերում և այլն: Ուստի ոչ միջազգային զինված ընդհարումներին վերաբերող նորմերի ընդլայնման ու զարգացման պահը հասունացել էր, հետևաբար 1977թ. հունիսի 8-ին ընդունվեց 1949թ.-ի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների Լրացուցիչ երկրորդ արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն), որն ամբողջությամբ վերաբերում էր ոչ միջազգային զինված ընդհարումներին և ի սկզբանե կոչված էր զարգացնելու հողված 3-ի սեղմ դրույթներն ու ընդլայնել ոչ միջազգային զինված ընդհարումների ժամանակ մարդասիրական իրավունքի պաշտպանությունը, մասնավորապես՝ կարգավորել ներքին կոնֆլիկտի կողմերի վարքագիծը հատկապես քաղաքացիական բնակչության, երեխաների, վիրավորների, հիվանդների, նավաբեկյալների, գերյալների և բժշկական անձնակազմի վերաբերյալ:

Ինչպես տեսնում ենք, այս փաստաթղթի ընդունման համար անհրաժեշտ եղավ գրե-

թե 20 տարի: Այդ տարիների ընթացքում կազմավորվել են բազմաթիվ հանձնաժողովներ ու կոմիտեներ, որոնք տարաբնույթ նախագծեր են ներկայացրել, սակայն վերջնական տարբերակով ընդունվեց 28 հողվածից բաղկացած (նախկին 47-ի փոխարեն) մի փաստաթուղթ, որի վերաբերյալ կա կարծիք, որ «այն ստացավ մեծամասնության հավանությունը՝ մնացածի լռության արդյունքում»⁸: Չնայած փոփոխությունների արդյունքում Արձանագրությունը շատ դրական հատկանիշներ կորցրեց, այնուամենայնիվ տվյալ ժամանակահատվածի համար այն մեծ առաջընթաց էր:

Քննարկվող կարևորագույն հարցերից էր ոչ միջազգային զինված ընդհարում հասկացության մշակումը, քանի որ, ի տարբերություն հողված 3-ի, Արձանագրությունը տալիս է ոչ միջազգային զինված ընդհարման հասկացությունը:

Սակայն նախքան հասկացության մշակումը նախատեսվում էր 2 տարբերակ. կամ բնորոշել առկա⁹ է զինված ընդհարում, թե՞ ոչ, կամ միանգամից սահմանել ոչ միջազգային զինված ընդհարման հասկացությունը, այսինքն՝ տալ հստակ չափանիշներ, որոնց առկայության դեպքում այլևս անհնարին կլինեք պետության կողմից ժխտել կոնֆլիկտի առկայության փաստը: Քննարկումների արդյունքում կառավարական փորձագետները եկան այն եզրակացության, որ առաջին տարբերակը շատ դժվար կլինի գործի դնել, ուստի ձեռնամուխ եղան ոչ միջազգային զինված ընդհարման սահմանում մշակելուն: Սկզբում առկա էր 13 տարբերակ, որից քննարկումների արդյունքում մնաց 6-ը: Առաջին տարբերակում առաջարկվում էր Արձանագրությունը կիրառել բոլոր տեսակի զինված ընդհարումների ժամանակ, մնացած 5 տարբերակներն առաջարկում էին այն կիրառել միայն ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումների ժամա-

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

նակ և տալիս էին ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումների տարբեր չափանիշեր՝ սկսած ամենալայնից, ըստ որի՝ ամենացածր ինտենսիվություն ունեցող ընդհարման ժամանակ նույնպես պետք է կիրառվեր Արձանագրությունը, մինչև ամենանեղը, ըստ որի՝ Արձանագրությունը պետք է կիրառվեր ամենաբարձր լարում ունեցող ընդհարումների ժամանակ: Այնուամենայնիվ բանակցող կողմերը եկան ընդհանուր հայտարարի, և Արձանագրության հոդված 1-ի առաջին մասում տրվեց ոչ միջազգային բնույթի զինված ընդհարման մեկ միասնական հասկացություն, ըստ որի՝ **սույն արձանագրությունը վերաբերում է այնպիսի զինված ընդհարումներին, որոնք ընթանում են Բարձր Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում իր զինված ուժերի և հակակառավարական զինված ուժերի կամ այլ կազմակերպված զինված խմբավորումների միջև, որոնք գտնվում են պատասխանատու ղեկավարության ներքո և այնպիսի վերահսկողություն են իրականացնում տարածքի մի մասի վրա, որը թույլ է տալիս վարել անընդհատ և համաձայնեցված ռազմական գործողություններ և կիրառել սույն արձանագրությունը:**

Վերը նշված սահմանումից կարելի է առանձնացնել հետևյալ հատկանիշները.

– **Ընդդիմադիր կողմերը**, որոնք մի կողմից պետք է լինեն կառավարական զինված ուժեր, իսկ մյուս կողմից հակակառավարական զինված խմբավորումներ,

– **Պատասխանատու ղեկավարություն**, որը երթադրում է զինված խմբավորման որոշակի կազմակերպվածության աստիճան,

– **Տարածքի նկատմամբ վերահսկողություն**. սա նշանակում է այնպիսի ուժի և տեխնիկայի առկայություն, որը թույլ է տա-

լիս ոչ միայն գրավել, այլ նաև պահպանել վերահսկողությունը,

– **Անընդհատ և համաձայնեցված ռազմական գործողություններ**. սա նշանակում է, որ ռազմական գործողությունները պետք է մտածված, պլանավորված լինեն և տևական բնույթ կրեն,

– **Արձանագրության կիրառումը**. ինչ վերաբերում է Արձանագրության կիրառմանը, ապա այստեղ առկա է նույն սկզբունքը, ինչ որ հոդված 3-ի կիրառման պարագայում, հետևաբար հարկ չենք համարում ևս մեկ անգամ քննարկել այս հարցը:

Ինչպես տեսնում ենք, վերը նշված հատկանիշները թեկուզ հստակ մշակված են թվում, այնուամենայնիվ դրանցից գրեթե յուրաքանչյուրի վերաբերյալ կարելի է տարաբնույթ մեկնաբանություններ անել:

Այսպես, ինչ վերաբերում է ընդդիմադիր կողմերին, ապա այդպիսիք կարող են լինել միայն մի կողմից կառավարական ուժեր, իսկ մյուս կողմից հակակառավարական ապստամբական խմբավորումներ: Սակայն լինում են դեպքեր, երբ կառավարությունը թույլ դիրքում է գտնվում, ու այդ պատճառով պետության տարածքում գլուխ են բարձրացնում 2 տարբեր ապստամբական խմբավորումներ, որոնց միջև առաջանում է բարձր լարվածություն ունեցող կոնֆլիկտ: Տվյալ պարագայում Արձանագրության նորմերը չեն կարող կիրառվել, քանի որ, ըստ սահմանման, նմանատիպ կոնֆլիկտները ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումներ չեն, ինչը, իհարկե, միանշանակ ընդունել չի կարելի:

Քննարկման է արժանի նաև «տարածքային վերահսկողության» սկզբունքը, քանի որ դրա նախատեսումը տեղին չէ այն առումով, որ զինված ընդհարումներին բնորոշ է շարժունակությունը, տարածքային վերահսկողության հաճախակի փոփոխականությունը, նույնիսկ մեկ օրվա ընթացքում թե՛ պայքարի ժամանակ մի քանի

անգամ նույն տարածքի ձեռքից ձեռք անցնելը: Բացի այդ՝ ապստամբների կողմից նաև հաճախ կիրառվում է պայքարի պարտիզանական ձևը, որը բացառում է տարածքի նկատմամբ վերահսկողությունը, բայց ոչ ինտեսիվ պայքարը: Նմանատիպ կոնֆլիկտները նույնպես, ըստ սահմանման, դուրս են մնում Արձանագրության տարածման ոլորտից: Բացի այդ՝ եղել է կարծիք, ըստ որի՝ նմանատիպ չափանիշի սահմանումը հավասարազոր է քաղաքացիական պատերազմի առկայության ընդունմանը, ինչը, ընդունված դասական դոկտրինայի համաձայն, հանդիսանում է պատերազմ հայտարարելու իրավիճակ, իսկ տվյալ պարագայում կիրառվում է 1-ին Արձանագրությունը: Նմանատիպ պատճառներից ելնելով՝ ԿԽՄԿ փորձագետները բազմիցս փորձել են փոփոխություն մտցնել ոչ միջազգային զինված ընդհարում հասկացության մեջ, մշակել այնպիսի տարբերակ, որը տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք չի տա:

Ընդհանուր առմամբ մշակվել են այսպիսի չափանիշներ.

- Հակամարտության առկայությունը կողմերի միջև,

- Գործողությունների կոլեկտիվ բնույթը,

- Նվազագույն կազմակերպվածություն:

Այս չափանիշները քննարկվել և ամփոփվել են 2004թ. ԿԽՄԿ-ի միջազգային սեմինարի ժամանակ /Կոպենհագեն/, որը դեռևս շարունակում է մնալ զուտ քննարկման արդյունք, բայց ոչ կատարված փոփոխություն: Ինչ վերաբերում է ոչ միջազգային զինված ընդհարումների վերաբերյալ միջազգային դատական մարմինների վերաբերմունքին, ապա Միջազգային քրեական դատարանը, կապված Հարավսլավիայի տարածքում տեղի ունեցած հանցագործությունների հետ, Տադիչի գործով սահմանել է ոչ միջազգային զինված ընդ-

հարումների հետևյալ չափանիշները՝ *զինված ուժի կիրառում և հակամարտության տևականություն*: Իսկ 1998 թ. Դոնում ընդունված՝ Միջազգային քրեական դատարանի Ստատուտի 8-րդ հոդվածը՝ տալիս է իր սահմանում, ըստ որի՝ ոչ միջազգային զինված ընդհարումը.

- պետք է տեղի ունենա պետության տարածքում,

- երկարատև բնույթ կրի,

- կառավարական ուժերի և կազմակերպված զինված խմբավորումների կամ էլ իրենց իսկ խմբավորումների միջև տեղի ունենա:

Ինչպես տեսնում ենք, վերը նշված չափանիշերը ոչ միջազգային զինված ընդհարումների ավելի լայն սահմանում են տալիս, քան առկա է Արձանագրության մեջ: Հարկ է նշել նաև, որ Արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ մասը բացառում է ոչ միջազգային զինված ընդհարումների հասկացությունից ներքին կարգուկանոնի խախտման և լարվածության դեպքերը, սակայն չի տալիս վերը նշված հասկացությունների որևէ սահմանում, ուստի չի երևում այն սահմանը, թե երբ են ներքին անկարգությունները վերածում զինված ընդհարումների, հատկապես երբ պետությունը, որի տարածքում տեղի են ունենում անկարգությունները, շահագրգռված չէ այն որպես զինված ընդհարում ընդունել, ուստի կոնվենցիոն նորմերը կիրառելու: Հետևաբար, անհրաժեշտ է ոչ միջազգային զինված ընդհարումներին վերաբերող բազմատեսակ չափանիշներն ի մի բերել ու մշակել ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումները բնութագրող մի այնպիսի սահմանում, որը թույլ կտա հստակ տարբերակել թե երկրի տարածքում տեղի ունեցող հակամարտությունը ոչ միջազգային բնույթի զինված ընդհարում է, թե՞ ներքին անկարգություն՝ անկախ տվյալ պետության ցանկությունից:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

-
- ¹ Տե՛ս Զանս Պետեր Գասեր. Միջազգային մարդասիրական իրավունք. ԿԽՄԿ, 2003թ.:
- ² Տե՛ս International Court of Justice. Case concerning Military and paramilitary activities in and against Nicaragua. Judgment of 27 June 1986 (merits) para. 218:
- ³ Տե՛ս Siordet. Les Conventions de Geneve et la guerre civile, p. 212:
- ⁴ Տե՛ս Zorgbibe. Pour une reaffirmation du droit humanitaire des conflits armes internes. pp. 664-665:
- ⁵ Տե՛ս Pilloud. Les re'serves aux Conventions de Gene`ve de 1949, pp. 12-13:
- ⁶ Տե՛ս Rosemary ABI-SAAB. Droit humanitaire et conflits internes. Origines et evolution de la reglementation internationale. Paris 1986:
- ⁷ Տե՛ս Rosemary ABI-SAAB. Droit humanitaire et conflits internes. Origines et evolution de la reglementation internationale. Paris 1986:
- ⁸ Տե՛ս Միջազգային Քրեական Դատարանի Հռոմի Կանոնադրություն 1998թ. ԿԽՄԿ Երևան. 2005թ. Հոդված 8, 2(f):
-

SPECIFIC FEATURES OF THE CONCEPT OF NON-INTERNATIONAL MILITARY CONFLICTS

Anna ESAYAN

1st class specialist at the Nor Nork civil registry

The features of the concept of non international armed conflict In this article the author analyses the concepts of nowadays very common non international armed conflicts and purposes the need to make them international law study subject.

In the article the subject matter of Common Article 3 of The Geneva Conventions of 1949 August 12 is presented, which is the first international legal document regarding with non internatio-

nal armed conflict, as well as the second additional protocol which define the concept of non international armed conflict.

Analyzing other international documents about the concept of non international conflicts, the author, however, comes to conclusion that second additional protocol gives more narrow description to non international conflicts missing a couple of important aspects. Hence, the author suggests to expand the scope of the admitted concept and give a new definition.

**Հարգելի հեղինակներ,
Հանդեսին նյութեր համծնելիս խնդրում ենք
պահպանել հետևյալ պահանջները.**

Խմբագրական խորհուրդը և խմբագրությունը կքննարկեն միայն այն նյութերը, որոնք կուղարկվեն էլեկտրոնային փոստով կամ խմբագրություն կներկայացվեն թղթային տարբերակով՝ էլեկտրոնային տարբերակի հետ միասին:

Հոդվածները՝ որպես կանոն առավելագույնը 25.000 տպագիր նիշ՝ ներառյալ տողատակերը:

Նյութերն ընդունվում են համապատասխան ԲՈՒՀ-երի ամբիոնների, գիտահետազոտական հիմնարկների բաժինների երաշխավորության, ինչպես նաև մասնագետի կարծիքի առկայության դեպքում: Նյութին կից անհրաժեշտ է ներկայացնել հոդվածի անգլերեն վերնագիրը, համառոտագիրը, հեղինակի տվյալները:

Նյութերի ծավալը որոշելիս խնդրում ենք հիմք ընդունել հետևյալ պահանջները՝ տեքստը տպագրվում է սովորական A4 չափի թղթի վրա, 1.5 տողաչափով, հիմնական տեքստի տառերի չափը՝ 12, տողատակերի տառերի չափը՝ 10, լուսացքները. ձախից, վերևից, աջից և ներքևից՝ 2 սմ:

Տառատեսակը՝ հայերեն տեքստերինը՝ «Arial Armenian», ռուսերենինը՝ «Arial LatRus»:

Նորմատիվ ակտեր օգտագործելիս տեքստում պետք է նշել դրա տեսակը (Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիր և այլն),

ընդունման ժամանակահատվածը (ընդունման օրը՝ թվերով, ամիսը՝ տառերով, ընդունման տարին՝ քառանիշ թվերով, օրինակ՝ 2003 թվականի դեկտեմբերի 12), չակերտներում նշել լրիվ (առանց կրճատումների) անվանումը (այդ թվում՝ ոչ թե ՀՀ, այլ Հայաստանի Հանրապետություն): Այս դեպքում տողատակում բավարար է նշել հրատարակության աղբյուրը:

Տեքստում կարելի է նշել ակտի տեսակը, ամսաթիվը և առանց չակերտների կրճատ անվանումը, որը կտա ճիշտ պատկերացում փաստաթղթի մասին:

Հեղինակներին խստիվ խորհուրդ է տրվում մինչև ուղարկելը մանրամասն ստուգել շարվածքի, ինչպես նաև համապատասխան իրավաբանական հասկացությունների ճշտությունը:

Նյութի առաջին էջում՝ վերնագրից հետո, նշվում են տեղեկություններ հեղինակի մասին, որոնք կարտացոլվեն մեր պարբերականում՝ հեղինակի անուն և ազգանունը ամբողջությամբ, պաշտոնը և աշխատանքի վայրը, առկայության դեպքում՝ գիտական աստիճանը և կոչումը: Օրինակ՝ ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու ...:

Վերջին էջում հեղինակը պարտադիր դնում է իր ստորագրությունը, նշում կոնտակտային տվյալները: